

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**



<b>1. ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ</b> Խուզարկության հասկացությունը և հիմնական հատկանիշները	2
<b>2. ԿԱՐԵՆ ԶԱՐԻԿՅԱՆ</b> Վարչական մարմինների փոխօգնության ինստիտուտը վարչարարության բարելավման համատեքստում	8
<b>3. ԱՌԱԲԵԼ ԱՌԱԲԵԼՅԱՆ</b> Արդարադատության խորհրդի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում	15
<b>4. ԱՆՆԱ ԴԱՆԻԲԵԿՅԱՆ</b> Առևտրային կաշառքի առարկայի իրավական հարցերը	20
<b>5. ԱՆԱՀԻՏ ԲԱԳԱԼՅԱՆ</b> Բախշի Իշխանյանը երկու ամիս բուլշեիկների բանտում	26
<b>6. ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ</b> Շուկայի հասկացությունը և դրա սահմանները Եվրոպական միությունում	30
<b>7. ՄԻՄԱ ԻՍԿԱՆ-ԴԱՐՅԱՆ</b> Երեխայի իրավունքների ապահովման հիմնահարցը կայուն զարգացման կոնցեպցիայի համատեքստում	35
<b>8. ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ</b> Իրավունքի գերակայությունը և իրավական պետության հայեցակարգը	39
<b>9. ՄԱՐՏԻՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ</b> Կալանքի իրավական էությունը ըստ գործող քրեական օրենսդրության	44
<b>10. ՄԱՐԻՆԵ ԳՅՈՒՐՉՅԱՆ</b> Հայաստանի Հանրապետության կառավարության, իրավապահ մարմինների և դատարանների դերը մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների կատարման գործընթացում	48
<b>11. МЕРУЖАН СТАМБОЛЦЯН</b> Отношения Грузии и НАТО в контексте Евроатлантической системы безопасности	52
<b>12. ВАРДАНУШ ПОГОСЯН</b> Роль Европейского суда по правам человека в развитии демократии	55
<b>13. ГАРНИК СТЕПАНЯН</b> Детерминантный комплекс факторов, способствующих совершению преступлений против семьи, и совершенствование мер по их предупреждению	61
<b>14. КАРИНА ОГАНЕСЯН</b> Некоторые особенности прекращения деятельности индивидуального предпринимателя в Российской Федерации и Республике Армения	65

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>**

### ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական  
դատավարության ամբիոնի ավագ դասախոս, իրավ. գիտ.  
թեկնածու, ոստիկանության կապիտան



## ԽՈՒՉԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, վերջին տարիներին հանցագործությունների թվաքանակը Հայաստանի Հանրապետությունում աճել է: Այսպես, պաշտոնական վիճակագրության համաձայն՝ վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակը հետևյալ պատկերն ունի. 2002թ.-ին գրանցվել է 12074 դեպք, 2003թ.-ին՝ 11073 դեպք, 2004թ.-ին՝ 10083 դեպք, 2005թ.-ին՝ 8875 դեպք, 2006թ.-ին՝ 9757 դեպք, 2007թ.-ին՝ 8428 դեպք, 2008թ.-ին՝ 9271 դեպք, 2009թ.-ին՝ 14339 դեպք, 2010թ.-ին՝ 15477 դեպք, 2011թ.-ին՝ 16572 դեպք: Իսկ ինչ վերաբերում է բացահայտման ցուցանիշին, ապա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պաշտոնական վիճակագրական տվյալներով 2004թ. արձանագրված դեպքերից բացահայտվել է 8951-ը (88,7%), 2005թ.-ին՝ 7854-ը (88,49%), 2006թ.-ին՝ 8169-ը (83,72%), 2007թ.-ին՝ 6826-ը (80,1%), 2008թ.-ին՝ 7282-ը (78,5%), 2009թ.-ին՝ 12274-ը (85,5%), 2010թ.-ին՝ 13250-ը (85,6%), 2011թ.-ին՝ 14287-ը (86,2%): 2012թ. առաջին կիսամյակում գրանցվել է հանցագործության 7560 դեպք, որից բացահայտվել է 6656-ը (88%)<sup>2</sup>:

Ներկայացված տվյալները պարզորոշ վկայում են, որ հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն է զգացվում:

Հանցագործությունների բացահայտման գործընթացում էական դերակատարություն ունեն քննչական գործողությունները, մասնավորապես խուզարկությունը, որը ապացույցների հավաքման հիմնական միջոցներից մեկն է հանդիսանում: Այդ քննչական գործողությունը հանդես է գալիս որպես քննության արդյունավետ կատարման միջոց, ունի վառ ընդգծված հարկադրական բնույթ և սահմանափակում է քաղաքացիների այնպիսի կարևորագույն սահմանադրական իրավունքներ, ինչպիսիք են մասնավոր կյանքի և բնակարանի անձեռնմխելիությունը (ՀՀ Սահմանադրություն 23, 24 հոդվածներ): Հետևաբար խուզարկություն կատարելիս դատավարական նորմերի անշեղ պահպանումը և կատարումը մի կողմից ապահովում է այդ քննչական գործողության կատարման արդյունավետությունը,

իսկ մյուս կողմից էլ անհրաժեշտ երաշխիք է ստեղծում քաղաքացիների՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը<sup>3</sup> (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) խուզարկությունը դիտում է որպես անհետաձգելի քննչական գործողություն: Այն ամրագրված է քր. դատ. օր.-ի՝ «Խուզարկություն և առգրավում» վերտառությունը կրող 31-րդ գլխում, որտեղ սահմանված են խուզարկություն կատարելու հիմքերը, այդ քննչական գործողությանը ներկա գտնվող անձանց շրջանակը, դրա իրականացման կարգին և արձանագրությանը վերաբերող դրույթներ:

Հարկ է նկատել, որ ՀՀ քր. դատ. օր.-ում տրված չէ խուզարկության բնորոշումը, միայն 225-րդ հոդվածում նշված է, որ քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ և արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար: Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար:

Դատավարական իրավունքի տեսության մեջ տարբեր քննչական գործողություններին, այդ թվում նաև խուզարկությանը անդրադարձել են մի շարք դատավարագետներ<sup>4</sup>:

Ա.Ռ. Ռատինովը առաջիններից էր, որ 1961 թվականին հրատարակած «Խուզարկություն և առգրավում» վերտառությունը կրող աշխատանքում առաջին անգամ մենագրության մակարդակով մանրամասն անդրադարձավ խուզարկության հետ կապված հարցերին: Ըստ նրա բնորոշման՝ խուզարկությունը քննչական գործողություն է, որի բովանդակությունը կազմում է շենքի և այլ շինության, այնտեղ գտնվող անձանց, այլ քաղաքացիների հարկադիր հետազոտում՝ նպատակ ունենալով որոնելու և վերցնելու գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, ինչպես նաև հայտնաբերելու հետախուզվող անձանց: Խուզարկության վերա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բերյալ համանման բնորոշման կարելի է հանդիպել նաև Ա.Ա. Լևի և Ա.Ի Միխայելովի հեղինակած «Խուզարկություն. քննիչի ուղեցույց» խորագիրը կրող աշխատանքում: Քանի որ ներկայացված աշխատանքները գրված են խորհրդային օրենսդրության հիման վրա, ուստի շատ առումներով դրանցում տեղ գտած խուզարկության բնորոշումը համահունչ չէ ժամանակակից պայմաններում առկա սահմանումներին: Մասնավորապես, ներկայումս տեղ գտած հասկացություններում ընդլայնված է ինչպես խուզարկման ենթակա օբյեկտների շրջանակը, այնպես էլ խուզարկության նպատակները:

Բ.Տ. Բեզլեպկինի կարծիքով՝ խուզարկությունը քննչական գործողություն է, որի հիմնական բովանդակությունը կազմում են ապացուցողական նշանակություն ունեցող առարկաներ և փաստաթղթեր, ինչպես նաև արժեքներ, անձանց և դիակներ որոնելը (գտնելը) և վերցնելը<sup>7</sup>: Ինչպես նկատում ենք, նշված բնորոշման մեջ էլ հեղինակը միայն կոնկրետացնում է խուզարկության նպատակը՝ չառանձնացնելով այն հնարավոր օբյեկտների շրջանակը, որտեղ կարող է իրականացվել այդ քննչական գործողությունը: Օրենսդրորեն խուզարկման ենթակա օբյեկտների կոնկրետացումը, կարծում ենք, անհրաժեշտ է այլ քննչական գործողություններից (օրինակ, զննությունից) այն սահմանազատելու համար:

Խուզարկության վերաբերյալ համանման բնորոշումների կարելի է հանդիպել նաև Ն.Վ. Ժոզիցինի և Ֆ.Ն. Ֆատկուլլինի<sup>8</sup>, Ռ. Նակուպովի<sup>9</sup>, Ա.Պ. Ռիժակովի<sup>10</sup> և այլ հեղինակների մոտ:

Ի տարբերություն նախորդների՝ խուզարկություն հասկացության վերաբերյալ յուրահատուկ մոտեցում է արտահայտել Օ.Ա. Լուցենկոն: Նրա կարծիքով խուզարկությունը քննչական գործողություն է, որի բովանդակությունը կազմում է շինության, այնտեղ գտնվող մասնակիցների, առանձին քաղաքացիների, նրանց հագուստի և իրերի հարկադիր հետազոտում՝ նպատակ ունենալով հայտնաբերել և վերցնել ապացույցների աղբյուրներ ու կողմնորոշիչ տեղեկություններ (հանցագործության գործիքներ, առարկաներ և արժեքներ, կամ այլ իրեր, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով և կարևոր նշանակություն ունեն գործի համար), ինչպես նաև հետախուզվող անձանց և դիակներ կամ նրանց գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ<sup>11</sup>: Դժվար չէ նկատել, որ հեղինակը խուզարկության բնորոշման մեջ որպես դրա նպատակ նշում է տեղեկությունների ձեռք բերումը: Հարց է առաջանում թույլատրելի է արդյոք տեղեկություններ ձեռք բերելու նպատակով խուզարկության իրականացումը: Կանխավ նշենք, որ քրեադատավարական օրենսգիրքը տեղեկություններ ստանալու համար խուզարկություն կատարելը հնարավոր չի համարում: Կարծում ենք, որ

տեղեկությունների ձեռքբերումը որպես խուզարկության նպատակ դիտելը ավելի շատ բնութագրական է դրա տակտիկական կողմին: Ուստի գտնում ենք, որ խուզարկություն հասկացության մեջ դրա մասին նշելը նպատակահարմար չէ:

Տեսության մեջ տեղ գտած մեկ այլ մոտեցման համաձայն՝ խուզարկությունը՝ որպես քննչական գործողություն, իրենից ներկայացնում է շենքի կամ այլ տեղի, կենդանի անձանց, նրանց հագուստի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով հետազոտում (անհրաժեշտության դեպքում՝ հարկադիր)՝ նպատակ ունենալով գտնելու և վերցնելու հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված արժեքներ, գործի համար նշանակություն ունեցող այլ առարկաներ և փաստաթղթեր<sup>12</sup>, ինչպես նաև հետախուզվող անձանց և դիակներ<sup>12</sup>: Ինչպես նկատում ենք, նշված բնորոշման մեջ էլ, որպես խուզարկման ենթակա օբյեկտ, առանձնացվում է տեղանքը: Հարց է առաջանում. հնարավոր է արդյոք խուզարկություն կատարել տեղանքում, և այն համարվում է արդյոք խուզարկության օբյեկտ: Կարծում ենք, որ տեղանքը կարող է խուզարկության կատարման վայր հանդիսանալ՝ պայմանով, որ դա լինի մասնավոր անձանց տիրապետության տակ գտնվող օբյեկտ: Հակառակ դեպքում մասնատարածքում կատարվող որոնումը համարվում է տեղազննություն, այլ ոչ թե խուզարկություն<sup>13</sup>:

Թերևս այդպիսի մոտեցումից ելնելով է, որ որոշ դատավարազետներ նպատակահարմար են համարում խուզարկության սահմանման մեջ այդ մասին անմիջապես նշում անել: Մասնավորապես, նմանատիպ տեսակետ է հայտնել Ա.Ա. Բակիրովը: Ըստ վերջինիս՝ խուզարկությունը քննչական գործողություն է, որի էությունը կայանում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության, տնօրինության կամ տիրապետության տակ գտնվող բնակարանի, շինության, պահեստարանի, այնտեղ գտնվող անձանց, տրանսպորտային միջոցների, ֆիզիկական անձանց հետազոտման մեջ՝ նպատակ ունենալով գտնելու և վերցնելու քրեական գործի քննության համար նշանակություն ունեցող օբյեկտներ<sup>14</sup>:

Այդպիսի մոտեցման կողմնակից են նաև Ա.Վ. Սմիրնովը և Կ.Բ. Կալինովսկին: Վերջիններս խուզարկությունը ներկայացնում են որպես դատավարական հարկադիր որոնում, որն իրականացվում է անձանց՝ օրենքով սահմանված տիրապետության տակ գտնվող վայրերում՝ նպատակ ունենալով հայտնաբերելու, վերցնելու և ամրագրելու գործի համար նշանակություն ունեցող առարկաներ և փաստաթղթեր, ինչպես նաև հետախուզվող անձանց և դիակներ<sup>15</sup>:

Խուզարկություն հասկացության առավել հաջողված և քիչ թե շատ ամբողջական բնորոշման

www.lawinstitute.am

կարելի է հանդիպել Ս.Ա. Շեյֆերի մոտ: Ըստ նրա՝ խուզարկությունը անհրաժեշտ է դիտել որպես օրենքով սահմանված ընթացակարգի պահպանմամբ շինության, բնակարանի և այլ վայրի, առանձին քաղաքացիների, նրանց հագուստի հարկադիր հետազոտում՝ նպատակ ունենալով գտնելու և վերցնելու գործի համար նշանակություն ունեցող իրեղեն ապացույցներ, փաստաթղթեր և այլ արժեքներ,<sup>16</sup> ինչպես նաև հետախուզվող անձանց և դիակներ :

Այսպիսով, դատավարական իրավունքի տեսության մեջ առկա մոտեցումների և ՀՀ քր. դատ. օր.-ի առանձին դրույթների ուսումնասիրության արդյունքում կարելի է առանձնացնել այն հիմնական հատկանիշները, որոնք բնութագրական են խուզարկության համար:

Քանի որ խուզարկությունը, ըստ քրեադատավարական օրենսգրքի համարվում է քննչական գործողություն, հետևաբար, ինչպես ցանկացած քննչական գործողության, այնպես էլ խուզարկության համար առաջին հերթին բնութագրական է դրա ճանաչողական բնույթը: Քրեական գործով վարույթի ընթացքում խուզարկություն կատարվում է գործի համար նշանակություն ունեցող ապացույցներ հավաքելու և ստուգելու նպատակով: Խուզարկությունն ունի վառ ընդգծված որոնողական<sup>17</sup> բնույթ: Որոնումը՝ որպես ճանաչման տարատեսակ, միշտ ենթադրում է որոնողական գործողություններ իրականացնող անձի ակտիվ գործունեություն՝ ի տարբերություն, օրինակ, պասիվ դիտման, որը հատուկ է զննությանը:

Խուզարկության երկրորդ բնութագրական գիծը խուզարկման օբյեկտի նկատմամբ քննիչի գործունեության հարկադրական բնույթն է: Ինչպես իրավագիտորեն նշում է Վ.Մ. Բիկովը՝ խուզարկությունը համարվում է վառ արտահայտված հարկադրական քննչական գործողություն<sup>18</sup>: Հենց իր հարկադրական բնույթի շնորհիվ է, որ խուզարկությունը սահմանազատվում է զննումից և այլ քննչական գործողություններից<sup>19</sup>: Խուզարկության հարկադրական բնույթի մասին են վկայում նաև քրեադատավարական օրենսգրքի մի շարք դրույթներ: Այսպես, համաձայն քր. դատ. օր.-ի 228-րդ հոդվածի 5-րդ մասի՝ քննիչն իրավունք ունի խուզարկության վայրում գտնվող անձանց արգելելու հեռանալ այդտեղից, ինչպես նաև հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ մինչև քննչական գործողության ավարտը: Կամ նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ խուզարկություն կատարելիս քննիչն իրավունք ունի բացել փակված շինություններն ու պահեստարանները, եթե դրանց տերը հրաժարվում է կամովին բացել դրանք:

Անհետաձգելիությունը խուզարկության երրորդ տարբերիչ հատկանիշն է<sup>20</sup>: ՀՀ քր. դատ. օր.-ը խուզարկությունը դիտում է որպես անհետաձգելի

քննչական գործողություն, սակայն չի սահմանում «անհետաձգելի քննչական գործողություն» հասկացության բնորոշումը: Ի տարբերություն հայ օրենսդրի, ՌԴ քր. դատ. օր.-ը բացահայտում է «անհետաձգելի քննչական գործողություն» հասկացության բնորոշումը: Համաձայն այդ երկրի քր. դատ. օր.-ի 5-րդ հոդվածի 19-րդ կետի՝ անհետաձգելի քննչական գործողությունները պարտադիր նախաքննության ձևով հետաքննության մարմնի կողմից քրեական գործ հարուցելուց հետո կատարվող գործողություններն են, որոնց նպատակն է հայտնաբերելու և ամրագրելու հանցագործության հետքեր, ինչպես նաև անմիջապես հայտնաբերել, վերցնել և ամրագրել պահանջող ապացույցներ : Խուզարկությունը հանդիսանում է անմիջապես գտնել, վերցնել և ամրագրել պահանջող քննչական գործողություն, քանի որ գործով վարույթի ընթացքում դրա չկատարումը կամ ոչ ժամանակին կատարումը կարող է հանգեցնել գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցների կորստին:

Խուզարկության չորրորդ հատկանիշը դրա կատարման համար անհրաժեշտ փաստական և իրավաբանական հիմքերի առկայությունն է: Քանի որ խուզարկությունը համարվում է այնպիսի քննչական գործողություն, որն ունակ է էապես սահմանափակելու քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը, հետևաբար դրա կատարման համար պետք է առկա լինեն անհրաժեշտ փաստական հիմքեր, այսինքն՝ այնպիսի բավարար տվյալներ, որոնք կվկայեն դրա կատարման անհրաժեշտության մասին: Բացի փաստական հիմքերից, խուզարկություն կարող է կատարվել, երբ առկա է իրավաբանական հիմք, այսինքն՝ համապատասխան մարմնի որոշում:

Խուզարկության հինգերորդ բնութագրական հատկանիշը այն է, որ այդ քննչական գործողությունը, ինչպես և ցանկացած այլ քննչական գործողություն, կարող է կատարվել միայն դրա համար լիազորված անձի կողմից: Խուզարկություն կատարելու իրավասությամբ առաջին հերթին օժտված է քննիչը (քր. դատ. օր. 225 հոդված, մաս 1-ին): Թեև քր. դատ. օր.-ի 225 հոդվածում հետաքննության մարմնի մասին նշում չկա, սակայն քանի որ խուզարկությունը համարվում է անհետաձգելի քննչական գործողություն (քր. դատ. օր. 57 հոդված, մաս 2-րդ, կետ 5-րդ), հետևաբար այն կարող է կատարվել նաև հետաքննության մարմնի կողմից:

Խուզարկության վեցերորդ բնութագրական հատկանիշը արտահայտվում է նրանում, որ այն կատարելիս պետք է խստագույնս պահպանել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը: Դրա կատարման ընթացակարգը մասնաձև կարգավորված է քր. դատ. օր.-ի 228 հոդվածում: Խուզարկություն կատարելիս դատավա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րական նորմերի անշեղ կատարումն ու պահպանումը կարևոր երաշխիք է դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման համար: Խուզարկության ընթացքում դատավարական նորմերի պահպանման ավելի խիստ պահանջներ են դրվում, քանի որ այն ունակ է սահմանափակելու անձի կարևորագույն սահմանադրական իրավունքները: Հենց նշված հանգամանքն էլ պահանջում է խուզարկության ավելի մանրամասն իրավական կարգավորում:

Եվ վերջապես, խուզարկությունը՝ որպես քննչական գործողություն, էապես սահմանափակում է անձի սահմանադրական իրավունքները, մասնավորապես այնպիսի կարևորագույն իրավունքներ, ինչպիսին՝ անձի, նրա գույքի և բնակարանի անձեռնմխելիությունն է: Քանի որ, ինչպես արդեն նշել ենք, խուզարկությունը որոնողական բնույթի գործողություն է, ուստի անկախ նրանից, թե որտեղ և ում մտն է այն կատարվում, դրա իրականացման ընթացքում կարող են հայտնի դառնալ անձի անձնական և ընտանեկան կյանքին, այլ անձանց կյանքին վերաբերող տեղեկություններ: Քանի որ այն ունի իրավասահմանափակող բնույթ, հետևաբար պետք է կատարվի միայն քրեադատավարական օրենքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում:

Խուզարկության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև դրա նպատակներին: Նպատակը այն է, ինչին ձգտում են, ուզում են հասնել. ձգտման առարկան է՝ Խուզարկության, ինչպես և յուրաքանչյուր այլ քննչական գործողության նպատակն է ապացույցներ ձեռք բերելը: Նշանակում է, որ խուզարկության հիմնական նպատակն է գործի համար նշանակություն ունեցող օբյեկտներ գտնելը և վերցնելը: Մասնագիտական գրականության մեջ որոշ դատավարագետներ փորձում են նաև կոնկրետացնել խուզարկության նպատակները: Այսպես, ըստ Ս.Ֆ. Շումիլինի՝ խուզարկության նպատակն է գտնել և վերցնել այնպիսի առարկաներ ու փաստաթղթեր, որոնք. 1) հանցագործության գործիք են հանդիսացել կամ իրենց վրա հանցավոր գործունեության հետքեր են պարունակում, 2) ուղղված են եղել հանցագործության կատարմանը, 3) կարող են միջոց հանդիսանալ հանցագործությունը բացահայտելու և գործի հանգամանքները պարզելու համար: Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց և դիակներ հայտնաբերելու նպատակով<sup>23</sup>:

Ա.Տ. Վալկի կարծիքով՝ խուզարկության նպատակները անհրաժեշտ է բաժանել միջանկյալի և վերջնականի: Խուզարկության վերջնական նպատակն է. 1) ձեռք բերել ապացույցներ (հանցագործության գործիքների, առարկաների, փաստաթղթերի տեսքով), 2) ստեղծել պայմաններ, որպեսզի հատուցվի հանցագործության հետևանքով պատճառված նյութական վնասը (հայտնաբերել արժեքներ), 3) վերցնել քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ, 4) հայտնաբերել հետախուզվող անձանց և դիակներ:

Ա.Ա. Բակիրովը գտնում է, որ խուզարկության նպատակն է գտնել և վերցնել գործի համար նշանակություն ունեցող հետևյալ օբյեկտները. 1) հանցագործության գործիքներ, առարկաներ և փաստաթղթեր, հանցավոր ճանապարհով ձեռք բերված այլ առարկաներ և փաստաթղթեր, 2) հետախուզվող անձանց և դիակներ, այդ թվում նաև առևանգված անձանց, 3) գույք, որի վրա կարող է կալանք դրվել:

Բացի այդ՝ ըստ հեղինակի, ՌԴ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով խուզարկության օբյեկտ կարող են լինել նաև շրջանառությունից հանված և սահմանափակ<sup>25</sup> շրջանառության առարկաներն ու փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ քաղաքացիական շրջանառությունից հանված կամ սահմանափակ շրջանառության առարկաների վերաբերյալ քր. դատ. օր.-ը ոչինչ չի հիշատակում: Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ նախկին ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի<sup>26</sup> 162-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ «պետք է վերցվեն նաև խուզարկության ժամանակ հայտնաբերված այն առարկաները, որոնք շրջանառության մեջ դնելն արգելված է օրենքով»: Թեև օրենսգրքում դրանց մասին անմիջական նշում չկա, սակայն շատ պրակտիկ աշխատողներ միանշանակ գտնում են (հավանաբար մեխանիկորեն առաջնորդվելով 1961թ. քր. դատ. օր.-ի դրույթներով), որ խուզարկություն կատարելիս քաղաքացիական շրջանառությունից հանված և սահմանափակ շրջանառության օբյեկտները բոլոր դեպքերում ենթակա են վերցման: Նշված պրակտիկական օրինականացնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է ՀՀ քր. դատ. օր.-ում նախատեսել նորմ հետևյալ բովանդակությամբ. «Խուզարկություն կատարելիս շրջանառությունից հանված և սահմանափակ շրջանառության առարկաները և փաստաթղթերը բոլոր դեպքերում ենթակա են վերցման»:

Համանման դրույթ ամրագրված է նաև քրեական դատավարության օրենսգրքի նախագծի<sup>27</sup> 262-րդ հոդվածում, որի 6-րդ մասի համաձայն՝ բացի խուզարկություն կատարելու մասին որոշման մեջ նշված իրերից, քննիչը վերցնում է նաև խուզարկության ընթացքում հայտնաբերված այն բոլոր առարկաները, նյութերն ու փաստաթղթերը,

Համանման դրույթ ամրագրված է նաև քրեական դատավարության օրենսգրքի նախագծի<sup>27</sup> 262-րդ հոդվածում, որի 6-րդ մասի համաձայն՝ բացի խուզարկություն կատարելու մասին որոշման մեջ նշված իրերից, քննիչը վերցնում է նաև խուզարկության ընթացքում հայտնաբերված այն բոլոր առարկաները, նյութերն ու փաստաթղթերը,

որոնք հանված են շրջանառությունից կամ որոնք իրենց բնույթով, տարրերիչ նշաններով կամ իրենց վրա առկա հետքերով կարող են կապված լինել մեկ այլ ենթադրյալ հանցագործության հետ: Որպեսզի հողվածի բովանդակությունը ամբողջական լինի, կարծում ենք, որ ճիշտ կլինի, որ դրանում նշում արվի նաև սահմանափակ շրջանառության օբյեկտների վերաբերյալ:

Այսպիսով, կատարված ուսումնասիրության հիման վրա մենք առաջարկում ենք խուզարկության հետևյալ բնորոշումը. խուզարկությունը օրենքով սահմանված ընթացակարգի պահպանմամբ, իրավասու մարմնի կողմից ֆիզիկական կամ

իրավաբանական անձանց սեփականության, տնօրինության կամ տիրապետության տակ գտնվող շինության, բնակարանի և այլ վայրի, առանձին քաղաքացիների, նրանց հագուստի հարկադիր հետագոտմանն ուղղված անհետաձգելի քննչական գործողություն է, որի նպատակն է գտնել և վերցնել գործի համար նշանակություն ունեցող իրեղեն ապացույցներ, փաստաթղթեր և այլ արժեքներ, ինչպես նաև հայտնաբերել հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց, հետախուզվող անձանց և դիակներ:

<sup>1</sup> Տե՛ս <http://www.armstat.am/am/?nid=45&year=2011> (12.08.12)

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պաշտոնական ինտերնետային կայք էջում <http://www.genproc.am> (12.08.12):

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք ՀՀՊՏ 1998.09.21/22 (55):

<sup>4</sup> Տե՛ս Шейфер С.А. Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. – М.: Издательство «Юрлитинформ», 2004, 228 С., Рыжаков А.П. Следственные действия и иные способы собирания доказательств. Учебное пособие - Тула, 1996, 320 С., Смирнов А.В., Калиновский К.Б. Следственные действия в российском уголовном процессе. Санкт-Петербург, 2004, 73 С., Еникеев М.И., Образцов В. А., Эминов В.Е. Следственные действия: Психология, тактика, технология: Учебное пособие. М., 2007. 216 С., Фомин М.А. Обыск в современном уголовном процессе России: Учебно-практическое пособие - М.: Юрлитинформ, 2006. 208 С., Россинский С.Б. Обыск в форме специальной операции: Учебное пособие / Под ред. В.Н. Григорьева. – М.: Юнити-ДАНА, 2003. 199 С., Рыжаков А.П. Обыск: основание и порядок производства: Научно-практическое руководство. – Ростов н/Дону: Феникс, 2006. 144 С., Черкашин С.Н. Обеспечение прав и законных интересов личности при производстве обыска и выемки: Дисс. канд. юрид. наук, М., 1999, 157 С., Бендяков И.Л. Обыск: Проблемы эффективности и доказательственного значения: Дисс. канд. юрид. наук, Самара, 2009. 228 С., Бакиров А.А. Уголовно-процессуальные аспекты производства обыска и выемки: Дисс. канд. юрид. наук, Уфа, 2009, 252 С., Варданян А.В. Тактико-психологические основы производства обыска: Дисс. канд. юрид. наук, Волгоград, 2008. 224 С., Пешков М.А. Арест и обыск в уголовном процессе США: Дисс. канд. юрид. наук, М., 1998, 186 С., Խաչատրյան Մ. Խուզարկություն կատարելու հիմքերը և կարգը //Օրենք և իրականություն, 2000. N 13-14, էջեր 4-6, Սահակյան Վ.Մ. Խուզարկության տակտիկան (դասախոսություն), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1974, 30 էջ և ուրիշներ:

<sup>5</sup> Տե՛ս Рапинов А.Р. Обыск и выемка. М., 1961. С. 7.

<sup>6</sup> Տե՛ս Леви А.А., Михайлов А.И. Обыск: справочник следователя. - М., 1983. С. 10.

<sup>7</sup> Տե՛ս Безлепкин Б.Т. Комментарий к уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный), 9-е издание, переработанное и дополненное. – М.: НОРУС, 2010. С. 286.

<sup>8</sup> Տե՛ս Жогин Н.В., Фаткуллин Ф.Н. Предварительное следствие в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1965. С. 134.

<sup>9</sup> Տե՛ս Якупов Р.Х. Уголовный процесс. Учебник для вузов. – М.: Изд-во ЗЕРЦАЛО, 1999. С. 252.

<sup>10</sup> Տե՛ս Рыжаков А.П. Обыск: Основания и порядок производства: Научно-практическое руководство. Ростов на Дону: Феникс, 2006. С. 6.

<sup>11</sup> Տե՛ս Луценко О.А. Обыск и выемка. Процессуальный порядок, тактика и доказательственное значение/ О.А. Луценко. Ростов н/Д, Изд-во «Феникс», 2005, <http://kalinovsky-k.narod.ru/p/sd/3-1-2.htm> (16.08.12)

<sup>12</sup> Տե՛ս Григорьев В.Н., Победкин А.В., Яшин В.Н. Уголовный процесс: Учебник. – М.: Изд-во Эксмо, 2006. С. 421.

<sup>13</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս - Երևանի պետ. համալս., Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 153:

<sup>14</sup> Տե՛ս Бакиров А.А. Уголовно-процессуальные аспекты производства обыска и выемки: Дисс. канд. юрид. наук, Уфа, 2009. С. 45.

<sup>15</sup> Տե՛ս Смирнов А.В., Калиновский К.Б. Комментарий к уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный), 5-е издание, переработанное и дополненное, под общ. ред. А.В. Смирнова, Проспект, 2009. С. 228.

<sup>16</sup> Տե՛ս Шейфер С.А. Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. – М.: Издательство «Юрлитинформ», 2004. С. 84.

<sup>17</sup> Տե՛ս Է.Բ. Աղայանի բացատրական բառարանում «որոնել» բառը ստուգաբանորեն բացատրվում է որպես 1)

փնտրել, աշխատել հայտնաբերել, գտնել, 2) մեկի, մի բանի առկայությունը, տեղը իմանալու ձգտելը, հետաքրքրվել, հարցուփորձով աշխատել իմանալ որևէ մեկի կամ մի բանի լինելու, առկայության կամ գտնվելու տեղի մասին, 3) հետազոտել, հետազոտելով աշխատել գտնել, հայտնաբերել, բացահայտել, ձեռք բերել, 4) ձգտել, տենչալ, փափագել: Տե՛ս Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացա-տրական բառարան: «Հայաստան» հրատ., Եր., 1976, էջ 1150:

<sup>18</sup> Տե՛ս Быков В.М. Актуальные проблемы уголовного судопроизводства: Казань, Познание, 2008. С. 199.

<sup>19</sup> Տե՛ս Баев О.Я. Тактика уголовного преследования и профессиональной защиты от него. Следственная тактика: Научно-практическое пособие - М.: Издательство «Экзамен», 2003. С. 139.

<sup>20</sup> Տե՛ս Вардадян А.В. Тактико-психологические основы производства обыска: Дисс. канд. юрид. наук, Волгоград, 2008. С. 23.

<sup>21</sup> Տե՛ս Уголовно-процессуальный кодекс Российской Федерации. – М.: Издательство «Омега-Л», 2009. С. 5.

<sup>22</sup> Տե՛ս Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատ., Եր., 1976, էջ 1083:

<sup>23</sup> Տե՛ս Шумилин С.Ф. Руководство по расследованию преступлений: науч.-практ. пособие /отв. ред. А.В. Гриненко. – 2-е изд., пересмотр. И доп. – М.: Норма, 2008. С. 429.

<sup>24</sup> Տե՛ս Валеев А.Т. Тактика обыска и выемки при производстве расследования преступлений, совершенных в учреждениях уголовно-исполнительной системы (научные и организационно-правовые основы). Автореф. дис. ... канд. юрид. наук, М., 2006. С. 14.

<sup>25</sup> Տե՛ս Бакиров А.А. Уголовно-процессуальные аспекты производства обыска и выемки: Дисс. канд. юрид. наук, Уфа, 2009. С. 41-42.

<sup>26</sup> Տե՛ս Հայկական ՍՍՀ քրեական դատավարության օրենսգիրք (առ 1-ը սեպտեմբերի 1977 թ. փոփոխություններով և լրացումներով), «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1978:

<sup>27</sup> Տե՛ս Նախագիծը տեղադրված է ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետային կայք էջում: Տե՛ս [www.moj.am](http://www.moj.am) (20.06.12թ.):

## РЕЗЮМЕ

### *Понятие и основные признаки обыска*

Статья посвящена анализу понятия и основных признаков обыска, как одного из следственных действий, предусмотренных уголовно-процессуальным кодексом Республики Армения. Действующий уголовно-процессуальный кодекс, регулируя вопросы, касающиеся оснований, участников, осуществления и фиксации результатов данного действия, никоим образом не раскрывает понятие обыска. Отсутствие определения понятия обыска в уголовно-процессуальном законе приводит к ряду теоретических и прикладных проблем.

Поэтому, в рамках данной статьи, автор сделал попытку раскрыть основные признаки и цели данного следственного действия, круг объектов, подлежащих обыску и сформулировать общее определение понятия обыска.

## SUMMARY

### *The definition and main characteristics of legal searching.*

This article is dedicated to one of the basic investigative action; legal searching definition and main characters by the Criminal Procedural Code of Republic of Armenia. The current Criminal Procedural Code regulates those kinds of issues such as legal searching' basis, participants, the implementation and the final result, but does not provide the definition of this investigative action. The absent of this investigative action's legal definition is exciting some theoretical and practical issues. Hence, in this article the author tries to implement the basic characters, purposes and those objects range as well as to provide legal searching's complete determination.

### ԿԱՐԵՆ ՉԱՐԻԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի  
նախագահի խորհրդական,  
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և  
մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Վարչարարությունը, հանդիսանալով հասարակության մասնավոր հատվածի և հանրային իշխանություն կրողների միջև հանրային բնույթի հարաբերությունները կարգավորող գործունեություն, կոչված է կառավարման այս ոլորտում կիրառել այնպիսի ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն մարդու՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքները և ազատությունները: Ժողովրդավարական պետությունում կառավարման արդյունավետությունը դիտարկվում է որպես հասարակության բարեկեցությանը հասնելու համար առավել նպաստավոր պայմանների ստեղծման միջոց, այլ ոչ թե ձևական առումով վարչահրամայական լիազորությունների հստակ կատարման անհրաժեշտություն: Կառավարումը պետք է իր նպատակներին հասնի այնպիսի հիմնարար արժեքների պահպանման միջոցով, ինչպիսիք են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, օրինականությունը, թափանցիկությունը, հաշվետու լինելը, քաղաքացիների նկատմամբ հարգանքը և այլն:

Պետք է նկատել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) վարչարարության ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բազմաթիվ երաշխիքներ է նախատեսում: Ընդ որում՝ դրանց մեծամասնությունը հանդիսանում են սահմանադրական հիմնարար արժեքներից սկիզբ առած վարչարարության սկզբունքներ: Այսպես, մարդու իրավունքների և ազատությունների ապահովման տեսանկյունից էական նշանակություն ունի այնպիսի սկզբունքների ամրագրումը, ինչպիսիք են վարչարարության օրինականությունը, ձևական պահանջները չարաշահելու արգելքը, հայեցողական լիազորությունները սահմանափակելը, կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը, առավելագույնի սկզբունքը, հավաստիության կանխավարկածը (4-10-րդ հոդվածներ): Բացի այդ՝ Օրենքը պարունակում է ընթացակարգային նորմեր, որոնք վարչարարության ընթացքում ստեղծում են բավարար նախապայմաններ

մարդու իրավունքներն ու ազատությունը երաշխավորելու նպատակով: Դրանց շարքին են դասվում վարչական վարույթի մասին ծանուցելը (35-րդ հոդված), վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը, (37-րդ հոդված), վարույթի մասնակիցներին լսելը (38-րդ հոդված), վարչական վարույթի նյութերի մատչելիությունը (39-րդ հոդված), վարույթի մասնակիցներին օգնություն ցուցաբերելը (40-րդ հոդված), ապացուցման պարտականությունը բաշխելը (43-րդ հոդված), վարչական ակտի որոշակիությունը և հիմնավորումը (56-57-րդ հոդվածներ) և այլն:

Վարչարարությունը կարող է համարվել արդյունավետ միայն այն դեպքում, երբ ընդունված վարչական ակտով հանրային իրավունքի ոլորտում որևէ հարց կարգավորվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռվածության ապահովման պայմաններում, ընդ որում՝ գերակայությունը տրվում է մարդու իրավունքներին ու ազատություններին: Վարչարարության իմաստը կայանում է ոչ թե քաղաքացիների հետ փոխհարաբերություններում վարչական մարմինների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու (ինչը դեռևս անթաքույց նկատվում է գործնականում), այլ, ընդհակառակը, քաղաքացիների շահերը պաշտպանելու և դրանց ոտնահարումը կանխելու մեջ: Ըստ այդմ՝ վարչարարության արդյունավետությունը գնահատվում է միայն պետություն-քաղաքացի հարաբերություններում անգամ բախումների ու հակասությունների պայմաններում՝ վերը նշված նախապայմանով հավասարակշռվածության ապահովման տեսանկյունից:

Վարչարարության արդյունավետության խնդիրը դիտարկելով վերը շարադրված դիրքորոշման լույսի ներքո և համադրելով այն վարչական մարմինների փոխօգնության ինստիտուտի հետ՝ հարկ է, որ սոցիալ-տնտեսական զարգացումների ներկա փուլում համագործակցությունը դիտարկվում է որպես խիստ կարևոր խնդիրների լուծման արդյունավետ լծակ: Մասնավորապես համագործակցության անհրաժեշտությունը հիմնականում զգացվում է այնպիսի առաջնային ոլորտներում,



### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ինչպիսիք են ահաբեկչության դեմ պայքարը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն: Այսպես, 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտը կանխելու հարցում ԱՄՆ կառավարության ձախողումը կամ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա էլեկտրաէներգիայի արտադրության բացասական հետևանքների վերացման բնագավառում առկա խնդիրները կապվում են նաև համագործակցության բացերի հետ: Ընդ որում, կարծում ենք, համագործակցության մասին խոսելիս հարկ է նկատի ունենալ, որ արդի պայմաններում այն անխուսափելիորեն ձեռք է բերել միջազգային նշանակություն, քանզի վարչարարության թիրախ ոչ միայն տվյալ պետության քաղաքացիներն են, այլ, իրավական նորմերով սահմանված շրջանակներում՝ նաև օտարերկրացիները և օտարերկրյա տարաբնույթ միավորումները:

Համագործակցության նշանակությունը հիմնականում պայմանավորված է այն խնդրի հետ, որ իրավակարգավորման շատ ոլորտներին բնորոշ է վարչական մարմինների լիազորությունների անհարկի կրկնությունը, որի հետևանքով տարբեր վարչական մարմիններ օժտվում են տարբեր բնագավառներում լայն շրջանակի խնդիրներ լուծելու նույնական իրավասությամբ: Նշվածը մի կողմից վարչական մարմիններին թույլ է տալիս խուսափել պատասխանատվությունից, մյուս կողմից այն ապահովագրում է միանձնյա գործող վարչական մարմնի սխալի դեմ: Այդ իսկ պատճառով իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել «դրական» և «բացասական» բնորոշումներ ունեցող լիազորությունների կրկնությունների օրինակներ:

Բնականաբար, որպես վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու ընթացակարգ՝ կարող են հանդես գալ, այսպես կոչված, «դրական» լիազորությունների կրկնությունները, որոնք վարչական մարմինների միջև ստեղծում են առողջ մրցակցություն, թույլ են տալիս նրանց հանդես գալ որպես «քաղաքական գաղափարների լաբորատորիաներ» և փնտրել ու գտնել խնդիրների նոր լուծումներ: Վարչական մարմինների միջև կառուցողական մրցակցության ձևավորումը կարող է նախադրյալներ ստեղծել գործի քննության բազմակողմանիության ապահովման, միանձնյա գործող վարչական մարմնի սխալների դեմ ապահովագրվածության, վարչական մարմինների միջև փոխզիջման ձևավորման համար, որոնք, անկասկած, կարող են հանգեցնել վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Երբ օբյեկտիվ պատճառներով առաջացած լիազորությունների կրկնության պայմաններում մի վարչական մարմին դիմում է մեկ այլ վարչական մարմնին փոխօգնության հարցով, աջակցություն ցուցաբերելու առջնությունը վերջինիս լուծումները կարող են հետա-

գայում ընդօրինակվել նաև օգնություն հայցող վարչական մարմնի կողմից: Արդյունքում փոխօգնությունը հնարավորություն կտա վարչական մարմիններին փոխադարձաբար օգտվել միմյանց լավագույն փորձից: Հարկ է հավելել նաև, որ համագործակցությունը մեծ նշանակություն ունի նաև կամայականության նվազեցման, համատեղ ձեռքբերումների ավելացման, բացերի լրացման և համակարգային ձախողումների կանխարգելման հարցերում:

Նկատի ունենալով, որ համագործակցությունը լայն հասկացություն է և դրսևորվում է տարբեր ձևերով, հարկ է նախ հստակ տարբերակել համագործակցության այն ձևերը, որոնք իրենցից ներկայացնում են փոխօգնություն, այդուհետ բացահայտել դրանց դրական ազդեցությունը վարչարարության արդյունավետության վրա:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են վարչական մարմինների համագործակցության բազմաթիվ ձևեր, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ երեք մեծ խմբերի.

ա) խորհրդակցություններ (պարտադիր և հայեցողական), որոնք, որպես կանոն, դրսևորվում են փորձի փոխանակման, շահագրգիռ վարչական մարմինների կարծիքների հավաքագրման և օրենքով սահմանված դեպքերում համապատասխան վարչական մարմինների համաձայնությունը կամ թույլտվությունը ձեռք բերելու միջոցով,

բ) պաշտոնական համաձայնագրերի կնքում, որոնք, որպես կանոն, իրենցից ներկայացնում են փոխըմբռնման հուշագրեր,

գ) համատեղ քաղաքականության մշակում, որը ենթադրում է կառավարման որոշակի ոլորտում վարչական մարմինների պարբերաբար համագործակցություն (օրինակ՝ միջգերատեսչական հանձնաժողովների ստեղծման միջոցով):

Գործնականում կարելի է հանդիպել նաև ոչ պաշտոնական համագործակցության ձևերի (օրինակ՝ բանավոր պայմանավորվածություններ)<sup>12</sup>, սակայն, մեր կարծիքով, դրանք խորհրդակցությունների ձևեր են, ուստի նպատակահարմար չենք գտնում դրանց առանձին քննարկումը:

Համագործակցության վերը շարադրված ձևերից վարչական մարմինների փոխօգնություն են հանդիսանում հայեցողական բնույթ ունեցող խորհրդակցությունները, որոնք իրականացվում են փորձի փոխանակման և շահագրգիռ վարչական մարմինների կարծիքների հավաքագրման միջոցով, փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու միջոցով վարչարարության ընթացքում միմյանց օգնություն ցուցաբերելու կարգի ու բովանդակության վերաբերյալ որոշակի պայմանավորվածություն ձեռք բերելը և հանրային կառավարման ոլորտում մշտապես գործող մարմիններ ստեղծելու միջոցով

համատեղ վարչարարական քաղաքականության մշակումը: Միայն նշված դեպքերում վարչական մարմինները փոխադարձաբար օգնություն են ցուցաբերում միմյանց՝ իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու նպատակով: Համագործակցության մյուս ձևերն իրենցից չեն ներկայացնում վարչական մարմինների փոխօգնություն, քանի որ ա) պարտադիր խորհրդակցությունը թելադրված է կամ օրենսդրի կամ վերադասի կողմից<sup>13</sup>, բ) օրենքով սահմանված դեպքերում համապատասխան վարչական մարմինների համաձայնություն կամ թույլտվություն ձեռք բերելը վարչարարության առանձին ինստիտուտ է, որը ամրագրված է Օրենքի 52-րդ հոդվածում: Վարչական մարմինների փոխօգնություն չեն նաև քրեական կամ քաղաքացիական վարույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով փոխըմբռնման հուշագրերի ստորագրումը և միջգերատեսչական հանձնաժողովների ստեղծումը, քանի որ վարչական մարմինների փոխօգնությունը հնարվոր է բացառապես վարչարարության (այդ թվում՝ վարչական վարույթի) ընթացքում:

Վարչական մարմինների միջև խորհրդակցությունների անցկացումը նպատակ է հետապնդում փոխանակելու միմյանց փորձը, որը վարչական մարմինների համար մեկ այլ վարչական մարմնի լավագույն փորձի ընդօրինակման հնարավորություն է ստեղծում: Բացի այն, որ փորձի փոխանակման արդյունքում մի վարչական մարմին կարող է օգտվել մյուս վարչական մարմնի փորձից ու ձեռքբերումներից, այն կարող է նաև գերծ մնալ մյուս վարչական մարմինների թերությունները կրկնելուց (ինչը, մեր կարծիքով, առավել կարևոր է): Այս հարցում, կարծում ենք, մեծ դեր ունեն միջազգային կազմակերպությունները, որոնք, որոշակի բնագավառներում, կուտակելով հարուստ փորձ, տարբեր պետությունների վարչական մարմինների համար ստեղծում են այդ փորձից օգտվելու հիանալի պայմաններ: Սակայն, հարկ է նշել, որ վարչական մարմինները մեծ զգուշություն պետք է ցուցաբերեն այս հարցում և խուսափեն միջազգային փորձի մեխանիկական ընդօրինակումից, որը հատկապես բնորոշ է հետխորհրդային պետություններին, որոնց համար գաթակաղության վտանգը չափազանց մեծ է: Մեր կարծիքով, արևմտյան իրավական փորձի պատշաճ ուսումնասիրության պարագայում հնարավոր կլինի ընտրել և համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին համահունչ այնպիսի իրավական ինստիտուտներ, որոնք էապես կբարելավեն վարչարարության արդյունավետությունը և չեն կանգնեցնի իշխանություններին անլուծելի խնդիրների առջև:

Վարչական մարմինների միջև խորհրդակցությունների կազմակերպումը էապես կարող է

նպատակ նաև վերջիններիս տեղեկացված լինելու աստիճանի բարձրացմանը, քանի որ խորհրդակցությունների ընթացքում վարչական մարմինների ուշադրությունը կարող է գրավել մի տեղեկատվություն, որը սովորաբար նրանց կողմից չի նկատվում: Միաժամանակ, խորհրդակցությունների ընթացքում վարչական մարմինները մանրամասնորեն ուսումնասիրում են միմյանց մեթոդները. դա հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուրին գնահատելու իր իսկ կողմից իրականացվող վարչարարության արդյունավետությունը: Արդյունքում վարչական մարմինն ի գործ է լինում գործի բազմակողմանի քննություն իրականացնել և ընդունել առավել հիմնավորված ակտեր:

Պետք է նկատել, որ տարբեր բնագավառներում իրականացվող խորհրդակցությունները պայմաններ են ստեղծում, որպեսզի վարչական մարմինների փոխօգնությունը ծառայի կառավարման մասնագիտացված վարչական մարմինների ունակությունները միմյանց կարիքների համար օգտագործելու նպատակին, այլ ոչ թե ուղղակի նրանց միավորելու մեկ կենտրոնացված մարմնում՝ վերացնելով նրանց եզակի (ունիկալ) ընդունակությունները<sup>14</sup>: Բացի այդ՝ հաճախակի խորհրդակցությունները, ի վերջո, կարող են ձևավորել միասնական վարչարարության «մշակույթ», որը հնարավորինս կվերացնի կառավարման ոլորտում տարբեր վարչական մարմինների միջև առկա գաղափարական անջրպետները<sup>15</sup>: Արդյունքում կապահովվի նաև միատեսակ իրավակիրառ պրակտիկա, քանի որ կստեղծվի կառավարման չափանիշների ներդաշնակ համակարգ, որի միջոցով կապահովվի նաև իրավական որոշակիության սկզբունքը<sup>16</sup>: Այսպես, վարչական մարմինները համաձայնեցված գործելու դեպքում կստեղծեն կանխատեսելի միջավայր քաղաքացիների համար, որը, կարծում ենք, չափազանց արդիական է Հայաստանի Հանրապետությունում: Սա իր հերթին կնվազեցնի չարաշահումները՝ էական նշանակություն ունենալով նաև կոռուպցիայի դեմ պայքարի հարցում, և, հատկապես, կկանխարգելի կամայականությունը, քանի որ մնան պայմաններում կստեղծվեն միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելու արգելքը կյանքի կոչելու իրատեսական պայմաններ:

Հարկ է նշել, որ կամայականության արգելքը պարտադրում է վարչական մարմիններին որևէ հայեցողական լիազորություն որոշակի ձևով իրականացնելու պարագայում միանման դեպքերում հետագայում ևս իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով, իսկ իր պրակտիկայից վարչական մարմինը կարող է հրաժարվել բացառապես գերակա շահի առկայության պատճառով, այն էլ հետագայում մշտապես մեկ այլ հայեցողական որոշում ընդունելու պայմանով (Օրեն-

քի 7-րդ հոդված):

Վարչական մարմինների փոխօգնության մյուս կարևոր միջոցը վարչարարության ընթացքում միմյանց օգնություն ցուցաբերելու կարգի և բովանդակության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրերի ստորագրումն է, որոնք կարող են լուծել ընդդատության սահմանազատման, տեղեկատվության փոխանակման ընթացակարգերի սահմանման, նույն ոլորտում լիազորություններ ունեցող վարչական մարմինների հայեցակարգերի համաձայնեցման և այլ խնդիրներ: Օրինակ, 2012թ. փետրվարի 8-ին ուշագրավ փոխըմբռնման հուշագիր կնքվեց ոստիկանության և փաստաբանների պալատի միջև: Այսպես, կողմերը, կարևորելով իրավունքի ոլորտի զարգացմանն ուղղված համագործակցության նկատմամբ փոխադարձ հետաքրքրությունը, համաձայնել են համագործակցել օրենսդրական նախաձեռնության, արագ արձագանքման, վարքագծի կանոնների պահպանման ապահովման, դիտորդական առաքելության և այլ ոլորտներում՝ կազմակերպելով և իրականացնելով հեկյալ միջոցառումները. նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համատեղ մշակում և ներկայացում իրավասու մարմիններին, ոստիկանության աշխատակիցների և փաստաբանների միջև, կապված նրանց մասնագիտական պարտականությունների կատարման հետ, որևէ խնդիր ծագելու դեպքում այդ խնդրի անհապաղ քննարկում և օրենքի տարրին համապատասխան լուծում, ոստիկանների կամ փաստաբանների կողմից վարքագծի կանոնների խախտումների հայտնաբերում, փոխադարձ իրազեկում և պատասխանատվության ենթարկելու հարցի լուծում, սեմինարների և համատեղ քննարկումների (կլոր սեղաններ) կազմակերպում, սպորտային կամ ինտելեկտուալ խաղերին կամ այլ միջոցառումներին ոստիկանների ու փաստաբանների ներգրավում և այլն:

Նման փաստաթղթերի կնքումն էապես դյուրին ու արդյունավետ է դարձնում վարչական մարմինների միջև փոխօգնության իրականացումը, քանի որ, որպես կանոն, սահմանվում են աջակցության առավել մատչելի ընթացակարգեր, հստակ կարգավորվում են միմյանց տրամադրվող օգնության շրջանակները և այլ խնդրահարույց հարցեր: Այսպիսի համաձայնությունների բացակայության պայմաններում վարչական մարմինների միջև կարող են ծագել անհամաձայնություններ՝ կապված կոնկրետ հայցվող օգնության ձևի և տրամադրման կարգի առնչությամբ: Նման պայմաններում, կարծում ենք, փոխըմբռնման հուշագրերի ստորագրումը էական նշանակություն ունի վարչական մարմինների փոխօգնության կատարելագործման և, որպես հետևանք, վարչարարության արդյունավետության բարձրացման հարցերում:

Ինչ վերաբերում է վարչական մարմինների

միջև պարբերաբար փոխօգնության ապահովման նպատակով միջգերատեսչական հանձնաժողովների ստեղծման հարցին, ապա այն հիմնականում նպատակ է հետապնդում կառավարման առավել բարդ ոլորտներում համադրել մի քանի տարբեր վարչական մարմինների ջանքերը: Գլոբալացման արդյունքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով ներկայումս պետության առջև ծանրացած խնդիրները ճյուղավորված և բազմաբնույթ են, որոնց գործնական լուծումը չափազանց բարդ է: Երբեմն նույնիսկ անհնար է թվում պայքարի իրատեսականությունն այնպիսի իրավախախտումների դեմ, ինչպիսիք են, օրինակ, ինտերնետային տարածությունում մտավոր սեփականության դեմ ոտնձգությունները, մաքսանենգությունն առավել բաց մաքսային ռեժիմների պայմաններում, հակամրցակցային խախտումները և այլն: Հետևաբար, պետության կողմից պետք է ձեռնարկվեն այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն տարբեր ոլորտներում գործառույթներ իրականացնող վարչական մարմիններին՝ պարբերաբար համագործակցելու միմյանց հետ:

Հայաստանի Հանրապետությունում վարչական մարմինների փոխօգնության հետ կապված հարցերը կարգավորող օրենքի տրամաբանությունից հետևում է, որ վարչական մարմինների՝ փոխօգնության հարցով միմյանց դիմելը կրում է միանգամյա բնույթ և կապված է կոնկրետ վարչական վարույթի հետ: Սակայն գործնականում հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ մի վարչական մարմնի կողմից մյուսին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը ծագում է պարբերաբար: Այդ իսկ նկատառումներից ելնելով՝ գործնականում հաճախ իշխանությունները դիմում են միջգերատեսչական հանձնաժողովներ ստեղծելու միջոցին: Նման մարմինները կազմավորվում են տարբեր վարչական մարմինների (և ոչ միայն վարչական մարմինների) ներկայացուցիչներից, որոնք իրենց գիտելիքները և հմտությունները միավորում են մի կոնկրետ առավել կարևոր խնդիր լուծելու համար: Օրինակ, Իտալիայում առաջին միջգերատեսչական մարմինը ստեղծվել է 1936թ. դա եղել է վարկի և խնայողությունների կոմիտեն՝ կառավարության նախագահի գլխավորությամբ: Ներկայումս նման մարմինների քանակը մեծացել է. գործում են գների և արտաքին տնտեսության քաղաքականության, արդյունաբերական քաղաքականության համակարգման, տնտեսական ծրագրավորման, սննդի և գյուղատնտեսության քաղաքականության կոմիտեներ՝ Իտալացի հեղինակները տարբեր մոտեցումներ ունեն միջգերատեսչական մարմինների գործունեության վերաբերյալ: Ոմանք դիտարկում են դրանք որպես օժանդակող մարմիններ, որոնք պատրաստում են կառավարության որոշումները, մյուսները կարծում են, որ այս մար-

միներն ընդունում են քաղաքական որոշումներ և որոշակի չափով փոխարինում են կառավարությանը, ինչպես նաև սահմանափակում են կառավարության ղեկավարի լիազորությունների ծավալը :

Հայաստանի Հանրապետությունում նույնպես գործում են նմանատիպ մարմիններ: Օրինակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2009 թվականի օգոստոսի 11-ի թիվ 678-Ա որոշմամբ մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների դեմ պայքարն ուժեղացնելու և դրա իրականացումը համակարգելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի նպատակն է իրականացնել ուսումնասիրություններ, վերլուծություններ, քննարկումներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետին առաջարկել լուծումներ Հայաստանում կեղծարարության ու հեցուկության մակարդակը շարունակաբար նվազեցնելու և դրան խոչընդոտող խնդիրների վերացման վերաբերյալ, հավաքագրել համապատասխան տեղեկություններ, բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում հեցուկության ու կեղծարարության բացասական հետևանքների մասին: Այս նպատակին հասնելու համար հանձնաժողովն իրավասու է մշակելու և վարչապետի կամ կառավարության հաստատմանը ներկայացնել անհրաժեշտ գործողությունների և (կամ) միջոցառումների ծրագրեր ու իրականացման ժամանակացույցեր, իրականացնել անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, դրանց ուսումնասիրություն և վերլուծություն, կազմակերպել և անցկացնել քննարկումներ, վարչապետին ներկայացնել եզրակացություններ, կարծիքներ և առաջարկություններ, ստեղծելու աշխատանքային խմբեր, հաստատել դրանց աշխատակարգերը, կազմը և ընդունել դրանց գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ այլ որոշումներ: Ընդ որում՝ հանձնաժողովը կազմված է ոչ միայն վարչական մարմինների պաշտոնատար անձանցից, այլև դատական իշխանության, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից (վերջիններիս համաձայնության դեպքում):

Միաժամանակ, հարկ է նշել, որ հիշյալ մարմնի ձևավորման և գործունեության հարցերում բավարար չափով չեն պահպանվել իշխանությունների բաժանման և յուրաքանչյուր պետական մարմնի կողմից բացառապես Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործողություններ կատարելու վերաբերյալ Սահմանադրության հիմնադրույթները: Այս խնդիրը, թերևս, պայմանավորված է հետևյալ փաստարկներով.

ա) գործող օրենսդրությունը գրեթե չի անդրադառնում պետական մարմինների պարբերաբար փոխօգնությանն առնչվող հարաբերություն-

ների կարգավորմանը (մասնավորապես, կարգավորված է միայն համատեղ նորմատիվ ակտեր ընդունելու հիմքերը),

բ) դեռևս չի ձևավորվել անհրաժեշտ վարչարարական փորձ,

գ) այս առնչությամբ խիստ սակավ է ուսումնասիրվում միջազգային փորձը:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ վարչական մարմինների պարբերաբար փոխօգնությունը ծախսատար և ժամանակատար երևույթ է: Մակայն հարցին առավել բազմակողմանի մոտենալու պարագայում պարզ է դառնում, որ վարչական մարմինների պարբերաբար փոխօգնությունը կարող է հետագայում շատ ավելի տնտեսապես ձեռնտու լինել, քանի որ միջգերատեսչական հանձնաժողովների գործունեության ընթացքում վարչական մարմինները կարող են ձեռք բերել այնպիսի տեղեկատվություն, որի ձեռքբերումը սեփական ուժերով չափազանց ծախսատար կարող էր լինել<sup>19</sup> : Վարչական մարմինների պարբերաբար փոխօգնությունը կարևոր նշանակություն ունի նաև այն տեսանկյունից, որ հնարավորություն է ընձեռում վարչական մարմիններին խնդիրները բացահայտելու և լուծելու շատ ավելի վաղ շրջանում, որոնց լուծումը հետագայում առավել մեծ ներուժ կպահանջեր: Նշվածն ամբողջությամբ բխում է վարչարարության տնտեսվարության սկզբունքից, որը, պարտադրելով վարչական մարմիններին իրենց լիազորություններն իրականացնելիս գործել այնպես, որ առանց իրենց լիազորությունների կատարմանը վնասելու առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իրենց տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը (Օրենքի 11-րդ հոդված), ուղղակի առնչվում է վարչարարության արդյունավետության հարցին:

Վերը շարադրվածից հետևում է, որ մեր կողմից ներկայացված համագործակցության ձևերի միջոցով վարչական մարմինների փոխօգնության ինստիտուտը նվազեցնում է վարչական մարմինների միջև չհամաձայնեցված գործողությունների և դրանց արդյունքում վարչական միջոցների անհարկի վատնումների ռիսկը՝ ապահովելով վարչարարության ընդհանուր քաղաքականությունը, դրա կանխատեսելիությունը և միատեսակությունը<sup>20</sup> : Միաժամանակ այն, ստեղծելով վարչական մարմինների միջև հարաբերական մրցակցություն, առավել բարենպաստ պայմաններ է ստեղծում մասնավոր անձանց համար: Արդյունքում մի կողմից կանխատեսելիությունը և միատեսակությունը, մյուս կողմից վարչական մարմինների միջև մրցակցությունը պայմաններ են ստեղծում մարդու՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պանության միջոցների արդյունավետության ապահովման համար: Վարչական մարմինների փոխօգնությունը չափազանց կարևոր նշանակություն ունի հայեցողական լիազորություններ իրականացնելիս միատեսակ պրակտիկայի ապահովման հարցում, որն ուղղակի փոխկապակցված է մարդու իրավունքների պաշտպանության խնդրի հետ: Չոր չէ, որ օրենսդիրը վարչական մարմիններին հայեցողական լիազորություններ իրականացնելիս պարտադրում է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով (Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք, 6-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ամփոփելով՝ ցանկանում ենք նշել, որ, մեր կարծիքով, վարչական մարմինների փոխօգնության բարելավման տեսանկյունից անհրաժեշտ է ստեղծել անկախ վարչական մարմին, որը կոչված կլինի բացառապես աջակցել մյուս վարչական

մարմիններին տեղեկատվության տրամադրմամբ և ընթացակարգային խորհրդատվություններով: Այն կարող է բաղկացած լինել վարչարարության բնագավառում հեղինակություն ունեցող փորձագետներից, որոնք պարբերաբար խորհրդակցությունների միջոցով կաջակցեն վարչական մարմիններին նաև որոշ մասնագիտական հարցերում: Հարկ է նշել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կիրառվում է նման պրակտիկա: Մասնավորապես, ԱՄՆ-ում գործում է «Վարչական կոնֆերանս» անկախ դաշնային գործակալությունը, որի գործառույթը վարչական մարմիններին անաչառ փորձագիտական խորհուրդ և հանձնարարականներ տալն է՝ վարչարարության բարելավման նպատակով<sup>21</sup>: Միաժամանակ, հաշվի առնելով մեր երկրում ձևավորված առանձնահատկությունները, կապված ժողովրդավարության ինստիտուտների ներդրման նվազ փորձով ու հիշյալ ինստիտուտները հսկողության տակ վերցնելու միտումներով, կարծում ենք, հարկ կլինի այդ մարմնի կազմում բացառել հանրային ծառայողների ներգրավվածությունը:

<sup>1</sup> Վարչարարության արդյունավետության նման ընկալումը բխում է վարչական իրավունքի, այսպես կոչված, «բաց մոդելից»: Մանրամասն տե՛ս, Галлиган Д., Полянский В.В., Старилов Ю.Н. Административное право: история развития и основные современные концепции. М.: Юристъ, 2002. էջեր 33-35:

<sup>2</sup> Տե՛ս NAT'L COMM'N ON TERRORIST ATTACKS UPON THE UNITED STATES, THE 9/11 COMMISSION REPORT 400-03 (2004); Peter Huber, Electricity and the Environment: In Search of Regulatory Authority, 100 HARV. L. REV. 1002, էջեր 1002-03 (1987):

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս, Jody Freeman & Daniel A. Farber, Modular Environmental Regulation, 54 DUKE L.J. 795, էջեր 806-13 (2005):

<sup>4</sup> Տե՛ս Teresa M. Schwartz, Protecting Consumer Health and Safety: The Need for Coordinated Regulation Among Federal Agencies, 43 GEO. WASH. L. REV. էջ 1032 (1975), Jason Marisam, Duplicative Delegations, 63 ADMIN. L. REV. էջեր 211-213 (2011):

<sup>5</sup> Տե՛ս Jody Freeman and Jim Rossi, Agency coordination in shared regulatory space, Harvard Law Review Association, (2012) էջ 1138:

<sup>6</sup> Տե՛ս JAMES Q. WILSON, BUREAUCRACY: WHAT GOVERNMENT AGENCIES DO AND WHY THEY DO IT, էջ 274 (1989):

<sup>7</sup> Տե՛ս Jacob E. Gersen, Overlapping and Underlapping Jurisdiction in Administrative Law, 2006 SUP. CT. REV. էջ 212:

<sup>8</sup> Տե՛ս Neal Kumar Katyal, Internal Separation of Powers: Checking Today's Most Dangerous Branch from Within, 115 YALE L.J. էջ 2325 (2006)

<sup>9</sup> Տե՛ս supra note 5, էջ 1151:

<sup>10</sup> Տե՛ս Richard A. Posner, Preventing Surprise Attacks, Rowman & Littlefield, էջ 14 (2005):

<sup>11</sup> Տե՛ս supra note 5, էջ 1155-1181:

<sup>12</sup> Տե՛ս U.S. GOV'T ACCOUNTABILITY OFFICE, GAO-12-151, DODD FRANK ACT REGULATIONS: IMPLEMENTATION COULD BENEFIT FROM ADDITIONAL ANALYSES AND COORDINATION, էջ 25 (2011):

<sup>13</sup> Այս պարագայում գործ ունենք ոչ թե «օգնություն», այլ «իրամանի կատարում» հասկացության հետ:

<sup>14</sup> Տե՛ս J.R. DeShazo & Jody Freeman, Public Agencies as Lobbyists, 105 COLUM. L. REV. էջ 2290 (2005):

<sup>15</sup> Տե՛ս Eric Biber, Too Many Things to Do: How to Deal with the Dysfunctions of Multiple-Goal Agencies, 33 HARV. ENVTL. L. REV. էջեր 1, 9 (2009):

<sup>16</sup> Տե՛ս supra note 5, էջ 1183:

<sup>17</sup> Տե՛ս Costituzione e struttura del Governo. La riforma dei ministeri. - Padova, 1984. էջ 2:

<sup>18</sup> Տե՛ս Административное право зарубежных стран. Учебное пособие - М.,: Издательство «СПАР», 1996. С. 137-138:

<sup>19</sup> Տե՛ս U.S. GOV'T ACCOUNTABILITY OFFICE, GAO-10-336, VEHICLE FUEL ECONOMY: NHTSA AND EPA'S PARTNERSHIP FOR SETTING FUEL ECONOMY AND GREENHOUSE GAS EMISSIONS STANDARDS IMPROVED ANALYSIS AND SHOULD BE MAINTAINED, էջեր 21-24 (2010):

<sup>20</sup> Տե՛ս E. Donald Elliott, Bruce A. Ackerman & John C. Millian, Toward a Theory of Statutory Evolution: The Federalization of Environmental Law, 1 J.L. ECON. & ORG. էջեր 313, 326 (1985):

<sup>21</sup> Տե՛ս Վարչական կոնֆերանսի պաշտոնական կայքը /<http://www.acus.gov/about/the-conference/>:

#### РЕЗЮМЕ

##### *Институт взаимопомощи административных органов в контексте усовершенствования администрирования*

В статье обсуждаются вопросы значения и роли института взаимопомощи административных органов. В результате проведенного исследования выдвигается тезис о необходимости координации деятельности административных органов и предоставлении ими друг другу административной взаимопомощи с целью повышения эффективности администрирования и достижения лучших результатов.

#### SUMMARY

##### *The institute of mutual administrative assistance in the context of improvement of administration*

The article discusses the role and importance of the institute of mutual administrative assistance. The research shows that in many cases administrative agencies must coordinate their actions and provide each other with administrative assistance in order to increase the effectiveness of administration and achieve better results.

**ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

«Օրինաց երկիր» կուսակցության երիտասարդական միության նախագահ, «Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամի տնօրեն  
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և դատավարական իրավագիտության ամբիոնի 3-րդ կուրսի ասպիրանտ



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՍՏԵՂԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Յուրաքանչյուր երկրում արդարադատության իրականացման արդյունավետությունը առաջին հերթին կախված է նրանից, թե ում կողմից է այն իրականացվում: Խոսքը, իհարկե, վերաբերվում է առաջին հերթին դատավորներին, որոնք պատասխանատվություն են կրում օբյեկտիվ արդարադատության իրականացման համար: Սակայն այստեղ կարևոր է հասկանալ, թե ինչպես են վերջիններս ստանձնում այդ պարտականությունը, և ով է նշանակում այդ անձանց:

ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների իրականացման առաջին փուլում կարևորվեց ժողովրդավարական, իրավական համակարգ ունեցող երկրների փորձի ընդօրինակմամբ: Հիմնականում դատական իշխանության ներկայացուցիչներից կազմված ինքնակառավարվող մարմնի ստեղծումը, որը դատավորների նշանակման, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու առումով պետք է հանդես գար որպես անկողմնակալ, արդարացի և թափանցիկ պետական մարմին՝ հանձնիս արդարադատության խորհրդի: Վերջինիս՝ որպես դատական իշխանության կենտրոնական մարմնի վերաբերյալ դրույթներն իրենց ամրագրումն են ստացել Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 05-ին ընդունված սահմանադրությունում<sup>1</sup>: Այն իր բնույթով սահմանադրական մարմին է:

Արդարադատության խորհրդի ստեղծման մասին խոսելիս, կարծում ենք, նախ և առաջ անհրաժեշտ է նշել այն քաղաքական և իրավական դրությունը, որի պայմաններում ստեղծվեց ՀՀ արդարադատության խորհուրդը, քանզի նրա ստեղծմանը զուգընթաց ՀՀ-ում տեղի էին ունենում քաղաքական և իրավական բնույթի լուրջ գործընթացներ: Այնուհետև համեմատության կարգով կներկայացնենք Ֆրանսիայի Հանրապետությունում արդարադատության խորհրդին համարժեք մարմնի՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի ստեղծ-

ման ժամանակագրական տվյալները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս մարմինը որպես այդպիսին առաջացել է հենց Ֆրանսիայում: Վերջում կներկայացնենք իմ առաջարկություններն ու մոտեցումները այս մարմնի ընդհանուր գործունեության վերաբերյալ:

Եվ այսպես, խոսելով ՀՀ երրորդ հանրապետության քաղաքական իրավիճակի մասին, պետք է նշել, որ թիվ մեկ քաղաքական իրադարձությունը կապված էր Խորհրդային միության փլուզման հետ, երբ խորհրդային պետությունները, այդ թվում Հայաստանը, ձեռք բերեցին անկախություն և ձեռնամուխ եղան սեփական պետության կառուցման գործին: Պետության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ էր ստեղծել իրավական այնպիսի համակարգ, այսինքն՝ համընդհանուր վարքագծի այնպիսի կանոններ, որոնք կօգնեին նորանկախ պետությանը իրականացնել իր առջև դրված խնդիրները և կապահովեին մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Եվ այս առումով ՀՀ երրորդ հանրապետության ծանր քաղաքական, տնտեսական, ընկերային կացությունը, պատերազմները, հանցավորության մեծ ծավալը, միասնական դատական համակարգի անարդյունավետ գործունեությունը էլ ավելի էին բարդացնում իրականացվող բարեփոխումների արդյունավետ իրականացումը<sup>2</sup>:

Բացի դրանից՝ 1991 թվականին Հայաստանը գտնվում էր անկախ պետության կերտման ճանապարհին: Հայ ժողովուրդը շուրջ երկու տարվա փորձություններով լի ծանր պայքարում չկորցրեց իր ողջամտությունը և դուրս չեկավ պայքարի սահմանադրական շրջանակներից: Հայ ժողովուրդը համախմբվեց, դարձավ միասնական՝ լի սեփական բախտը կռելու վճռականությամբ: 1991 թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն: Դրանից հետո անհրաժեշ-

www.lawinstitute.am

տություն էր առաջացել ձևավորել պետական դատական համակարգ: Դատական համակարգը հանդես էր գալու ոչ թե միայն որպես մարդու իրավունքների պաշտպանության միջոց, այլ նաև երկրում իրավակարգի ապահովման և ամրապնդման լրացուցիչ երաշխավոր: Ադրբեջանի տարածքով եկող գազամուղի փակումը, էներգետիկ շրջափակումը, հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունների գործունեության դադարեցումը, բնակչության գրկումը ջեռուցումից, երկաթուղու փակումը երկրի տնտեսությունը կանգնեցրեցին կազմալուծման լուրջ սպառնալիքի առջև: Ստեղծված ծանր քաղաքական, տնտեսական, սոցիալական կացությունը, հանցավորության բարձր մակարդակը, միասնական դատական համակարգի և իրավապահական համակարգի ոչ արդյունավետ գործունեությունը, կուսակցական պայքարի անհաշտելիությունը, ինչ խոսք, փոխանցվում էր պետական մարմիններին՝ բացասական ազդեցություն թողնելով ողջ պետական կառուցակարգի, այդ թվում և դատական իշխանության մարմինների գործունեության վրա:

Ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության խորհրդի ստեղծման ժամանակահատվածում երկրում առկա իրավական դրությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ 1990 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագիրը, որն ամրագրեց պետության և անհատի փոխհարաբերության նոր մոդել, ճանաչեց իրավական, ժողովրդավարական պետության կառուցման անհրաժեշտությունը, պետություն, որի կազմակերպման հիմնական սկզբունքը պիտի լինեի իշխանությունների տարանջատումը: Չնայած դրան՝ դատական բարեփոխումների իրականացման ուղղությամբ իրադրությունը մնաց անփոփոխ, քանի որ ԽՍՀՄ փլուզումից և անկախության ձեռքբերումից հետո Հայաստանը հայտնվեց շատ բարդ արտաքին քաղաքական կացության մեջ, որը հանգեցրեց հանրապետության տնտեսական շրջափակմանը և չհայտարարված պատերազմին Ղարաբաղում: Ստեղծված իրավիճակն անհնարին դարձրեց դատաիրավական բարեփոխումների անցկացումը: Բացի այդ՝ սպասվում էր սահմանադրական-իրավական բարեփոխումների իրականացում: Այսպիսով խոսքը գնում էր ոչ միայն և ոչ այնքան դատաիրավական բարեփոխումների, որքան կոմունիստական գաղափարականացված իրավագիտության փոխարեն իրավագիտության և իրավական կարգավորման նոր հայեցակարգ մշակելու մասին: Արմատական բարեփոխումների այդ ճանապարհին հայ ժողովուրդը 1995 թվականի հուլիսի 5-ին հանրաքվեի միջոցով ընդունեց նոր սահմանադրու-

թյուն, որը Հայաստանի Հանրապետությունը հռչակում էր ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, որի կառուցման և գործունեության հիմնական սկզբունքը համարվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը: Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը ստեղծվեց՝ նկատի ունենալով սահմանադրական շինարարության և ժողովրդավարության ուղին որդեգրած շատ երկրների կուտակած լավագույն փորձը:

Դրանից հետո ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1995թ-ի նոյեմբերի 14-ին ընդունվեց «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքը: Իսկ 1996 թվականի նոյեմբերի 8-ին հրապարակվեց ՀՀ Նախագահի հրամանագիրը ՀՀ դատաիրավական բարեփոխումների մասին, որից հետո 1998 թվականի ընթացքում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «Դատախազության մասին», «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Այսպիսով նոր օրենսդրությանը համապատասխան ձևավորվեց և սկսեց գործել ՀՀ նոր դատական համակարգը և ՀՀ արդարադատության խորհուրդը: Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրության 5-րդ հոդվածն ամրագրեց իշխանությունների տարանջատման, դատարանի անկախության և արդարադատության այլ ժողովրդավարական սկզբունքներ, սակայն այս կամ այն սկզբունքն իրավաբանորեն ձևակերպելը դեռևս չի նշանակում, թե այն գործնականորեն արդեն իրացվել կամ իրացվում է կյանքում: Հապշտապ և մակերեսորեն կատարված դատական բարեփոխումների արդյունքում հանրապետությունում ստեղծված դատական իշխանությունը, դատական անկատար համակարգը, սխալներ, թերություններ ու բացթողումներ պարունակող նյութական և դատավարական օրենսդրությունները և դրանցով սահմանված իրավունքների պաշտպանության կառուցակարգերն ու ընթացակարգերը կատարելազործման խիստ կարիք էին գգում:

Այնուհետև 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխություններով դրվեցին Հայաստանում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի հիմնաքարերը: Դատական իշխանության և, մասնավորապես, ՀՀ արդարադատության խորհրդին վերաբերվող դրույթները ենթարկվեցին լուրջ փոփոխությունների: Վերջիններս իրենց օրենսդրական ամրագրումն են ստացել դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի կարևորագույն նորմատիվ փաստաթուղթը հանդիսացող ՀՀ դատական օրենսգրքում, որի ուժի մեջ



մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվել «Դատարանակազմության մասին», «Արդարադատության խորհրդի մասին» և «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքները:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում նպատակ էր դրված վերացնելու այն թերություններն ու բացթողումները, որոնք առկա էին: Իրականացված բարեփոխումներից անմասն չմնաց նաև ՀՀ արդարադատության խորհուրդը: Այս առումով Գ. Հարությունյանը նշում է, որ սկզբնական շրջանում թույլ տրվեցին մի շարք սխալներ. նախ՝ արդարադատության խորհրդի կազմում ընդգրկվեցին նաև ՀՀ գլխավոր դատախազը՝ որպես խորհրդի փոխնախագահ, և նրա առաջադրմամբ՝ երեք դատախազներ, երկրորդ՝ խորհրդի կազմավորմանը մասնակից չդարձվեց օրենսդիր մարմինը՝ ՀՀ Ազգային ժողովը, երրորդ՝ դատական մարմինների անկախության երաշխավոր հռչակված հանրապետության նախագահը գլխավորեց արդարադատության խորհուրդը: Վերը հիշատակված թերությունների և բացթողումների կապակցությամբ Գ. Հարությունյանը նշում է, որ՝ ա) դատախազությունը սահմանադրության 103-րդ հոդվածին համապատասխան օժտված էր և օժտված է պետական գործունեության ինքնուրույն տեսակով, այսինքն՝ արդարադատության հետ կապ չունեցող իրավասություններով (քրեական հետապնդում, մեղադրանքի պաշտպանություն և այլն), և նրա ներկայացուցիչները կարող էին այդ խորհրդում հանդես գալ դատախազությանն անհնազանդ դատավորների ճնշմամբ, բ) իշխանության մյուս ճյուղը՝ օրենսդիրը, զերծ պահվեց դատական իշխանության ձևավորման և նրա աշխատանքում մասնակցություն ունենալու, հետևաբար և իշխանության գործադիր թևին արդարադատության խորհրդում հակակշռելու հնարավորությունից, մինչդեռ արդարադատության նախարարը (գործադիր իշխանության ներկայացուցիչը) խորհրդի փոխնախագահն էր, գ) ՀՀ Նախագահի կողմից արդարադատության խորհուրդը գլխավորելը նույնպես իրավաչափ չէր, քանի որ նա սահմանադրական իր բազմաթիվ լիազորություններին համապատասխան այն ժամանակ, փաստորեն, գործադիր իշխանության ղեկավարն էր, ի տարբերություն այլ երկրների նախագահների, հրավիրում և վարում էր կառավարության նիստերը, վավերացնում էր կառավարության որոշումները և այլն, իր ղեկավարած արդարադատության խորհրդի առաջադրմամբ ինքն էլ նշանակում էր բոլոր առյուծների դատավորներին, և փաստորեն դատական իշխանությունն ամբողջությամբ կենտրոնանում էր նրա ձեռքում, որը չէր կարող նպաստել զսպումների և հակակշռների (իշխանությունների հավասարակշռման) սկզբունքի իրա-

կանացմանը<sup>5</sup>: Այս տեսանկյունից լիովին կիսում են վերոնշյալ տեսակետը, քանզի անհրաժեշտ էր ապահովել իշխանությունների հավասարակշռման սկզբունքի իրականացումը, իսկ այդ ժամանակ գործող արդարադատության խորհրդի կազմավորման կարգը այդ հնարավորությունը չէր տալիս: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության խորհրդում դատախազության ներկայացուցիչների ներկայացված լինելուն, ապա պետք է նշեն, որ նույնիսկ եվրոպական մի շարք երկրներում մագիստրատների (դատավորների և դատախազների) դիֆերսիֆիկացիան կատարվել էր դեռևս շատ վաղուց:

Պատահական չէ այն փաստը, որ Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը առաջացել և իր հիմնական զարգացումն է ունեցել Ֆրանսիայում: Այն սկզբում կոչվել է դատական բարձրագույն իշխանության խորհուրդ (Conseil de la Haute-Autorité judiciaire): Հատկանշական է, որ դեռևս 1810 թվականին Նապոլեոն 1-ինի օրոք Ֆրանսիայում օրենսդրորեն ամրագրվեց դատավորների նշանակովությունը նրանց ընտրովության փոխարեն<sup>6</sup>: Ֆրանսիայում այս մարմնի մասին առաջին անգամ հիշատակվել է 1883 թվականի օգոստոսի 31-ին ուժի մեջ մտած դատարանակազմությանը վերաբերող բարեփոխումների մասին օրենքով: Սակայն այս մարմնի վերաբերյալ սահմանադրության մեջ դրույթներ սահմանվեցին միայն 1946 թվականին՝ Ֆրանսիայի չորրորդ հանրապետության օրոք: Այն հռչակվեց որպես անկախ սահմանադրական մարմին: Համաձայն 1946 թվականի հոկտեմբերի 27-ի սահմանադրության 84-րդ հոդվածի՝ խորհուրդը իրականացնում էր երկու կարևոր գործառնություն: 1-ինը՝ դատավորների նշանակման համար հանրապետության նախագահին էր ներկայացնում դատավորների թեկնածուներին, և 2-րդը լուծում էր նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը:

Դրանից հետո՝ 1958 թվականի հոկտեմբերի 4-ին, ընդունված սահմանադրական բարեփոխումների արդյունքում փոխվեց Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի կազմավորման կարգը: Ի տարբերություն 1946 թվականի սահմանադրությամբ նախատեսված կարգի, որի ժամանակ խորհրդի ձևավորման գործում իրենց ակտիվ դերակատարությունն ունեին Ֆրանսիայի Ազգային ժողովը և մագիստրատների ընդհանուր ժողովը, 1958 թվականի սահմանադրությամբ նախատեսվեց խորհրդի ձևավորման հետևյալ կարգը: Խորհրդի բոլոր անդամները նշանակվում էին հանրապետության նախագահի կողմից:

Սակայն ժամանակի հետ անհրաժեշտու-

թյուն առաջացավ վերանայել և էլ ավելի ուժեղացնել այս մարմնի իրավական կարգավիճակը: Այդ ամենը կատարվեց 1993 թվականի հունիսի 27-ին ընդունած սահմանադրական օրենքով և 1994 թվականի փետրվարի 05-ին ընդունած Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի մասին մայր օրենքով (loi organique):

Վերջին տարիներին Ֆրանսիայում իրականացվեցին դատաիրավական լուրջ բարեփոխումներ, որոնցից անմասն չմնաց նաև մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը: Նույնիսկ Ֆրանսիայի Հանրապետության նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին 2009 թվականի ապրիլի 21-ին հայտարարեց, որ առաջարկված սահմանադրական բարեփոխումների նախագիծը երկու հիմնական փոփոխություն է ներառում. 1-ինը կայանում է նրանում, որ դատավարությանը մասնակցող անձինք հնարավորություն են ստանում անձամբ դիմել մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ, եթե գտնում են, որ մագիստրատների գործողությունների արդյունքում իրենց վնաս է հասցվել կամ խախտվել են իրենց իրավունքները: Եվ 2-րդը վերաբերում է մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի կազմավորման կարգին: Այսուհետև խորհուրդը կազմված չի լինի բացառապես մագիստրատներից: Արտաքին անձինք (personnel-ite exterieurs-փաստաբաններ, իրավունքի մասնագետներ, նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական խորհրդականներ) խորհրդում կկազմեն մեծամասնություն<sup>8</sup>: Այս փոփոխության մասին նույնիսկ «Ֆիգարո» օրաթերթում տպագրվեց մի հոդված հետևյալ վերտառությամբ՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդում մագիստրատները փոքրամասնություն են կազմում: Արդյունքում Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի յուրաքանչյուր կառուցվածքային մասում ընդգրկվելու են օրենքով սահմանված կարգով ընտրված 6 մագիստրատներ, ինչպես նաև պետական խորհրդի մեկ անդամ և համալսարանական պրոֆեսոր: Խորհրդի մնացած 6 անձինք նշանակվելու են համապատասխանաբար հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և Սենատի կողմից<sup>9</sup>:

Ամփոփելով՝ կարելի է վստահաբար ասել, որ ՀՀ արդարադատության խորհուրդը ստեղծվեց քաղաքական և իրավակիրառ շատ բարդ պայմաններում, ինչը չէր կարող նպաստել խորհրդի գործունեության արդյունավետությանը: Ինչ խոսք, այսօր այս մարմինը ՀՀ դատական իշխանության անկախության ապահովման լրացուցիչ երաշխավորն է, որն իրականացնում է երեք հիմնական գործառույթ՝ դատավորների նշանակում, կարգապահական պատասխանատվության ենթարկել և խորհր-

դատական գործառույթների իրականացում: Ինչ կարծիքով այս մարմինը չպետք է հանդիսանա պետական (դատական) իշխանության տարբեր թևեր ներկայացնող պետական մարմինների պայքարի թաթերաբեմ, այլ այն պետք է լինի դատական իշխանությունում քաղաքականություն մշակող և իրականացնող կոլեգիալ մարմին, որը ունակ կլինի բարձրացնել դատավորների պրոֆեսիոնալիզմը, ապահովել դատական իշխանության անկախությունը և արդարադատության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ակնհայտ է, որ այսօր մեր երկրում իրականացվում են բազմաբնույթ և լայնածավալ բարեփոխումներ: Դրանք իրականացվում են հիմնականում եվրոպական կառույցների հետ համագործակցության արդյունքում: Բարեփոխումները ընդգրկում են հարկային, մաքսային, ոստիկանության, դատաիրավական համակարգերը, որոնք պայմանավորված են ՀՀ պետական-իրավական համակարգի կատարելագործման խնդիրներով, ինչպես նաև դատական և իրավապահայան մարմինների կազմակերպման և գործունեության հայեցակարգի արդիականացմամբ: Վերջինս նշանակում է, որ մեր երկիրն աստիճանաբար անցնում է Եվրոպական միության չափորոշիչներին և օրենսդրության մոտարկմանը (**օրենսդրության ռեցեսայիա**):

Այս առումով կարևոր է արդարադատության խորհրդի վերաբերյալ զարգացած եվրոպական երկրների կուտակած փորձի, առկա մոտեցումների և իրավական զարգացումների ուսումնասիրությունը, ինչը կնպաստի այս մարմնի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկությունների ներկայացմանը և վերջինիս համապատասխանեցմանը եվրոպական օրենսդրության պահանջներին:

<sup>1</sup> Տե՛ս 1995թ հուլիսի 5-ի ՀՀ Սահմանադրության տեսքով 94-րդ և 95-րդ հոդվածները

<sup>2</sup> Տե՛ս Վաղարշյան Ա., Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը (1918-1920թթ.): Իրավաբանական գիտությունների թեկնածուի ատենախոսության սեղմագիր, Երևան, 1996թ., էջ 18-19

<sup>3</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Խաչատրյան Հ.Մ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1998

<sup>4</sup> Տե՛ս Դազինյան Գ., Օհանյան Լ. և ուրիշներ, Դատական իշխանության հայեցակետը Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների գործընթացում («Իրավագիտության հարցեր» միջբուհական ժողովածու, 2000, 3-4,5-14 էջեր)

<sup>5</sup> Տե՛ս Հարությունյան Գ., ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 933

<sup>6</sup> Տե՛ս Բաղդասարյան Ա.Վ., Երիցյան Ա.Հ., Մարդու իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները դատական և իրավապահ մարմինների համակարգում (պետության և պրակտիկայի հիմնահարցեր), Երևան, Մխիթար Գոշ, 2000, էջ 294

<sup>7</sup> Տե՛ս Thierry S.RENOUX, Les conseils supérieurs de la magistrature en Europe, La documentation française, Paris, 1999, p.204

<sup>8</sup> Տե՛ս Le Figaro <http://www.lefigaro.fr/> (édition datée du 22/04/2009)

<sup>9</sup> Տե՛ս Le Figaro <http://www.lefigaro.fr/>(édition datée du 21/03/2008)

## РЕЗЮМЕ

### *О создании Совета Правосудия в Республике Армения*

Научная статья “О создании Совета Правосудия в Республике Армения” посвящена той политической и правовой ситуации, тем условиям, при которых был создан Совет Правосудия РА. Также были рассмотрены те предпосылки, которые послужили основой для создания Совета Правосудия РА - ими являются Основы Конституции и Права.

Путем сравнения, автор предоставляет эквивалентный нашему Совету Правосудия орган в Республике Франция - это Высший Совет Магистратуры, рассматривает его характерные особенности в процессе формирования.

## SUMMARY

### *The Foundation of the Council of Justice in the Republic of Armenia*

The scientific article “The Foundation of the Council of Justice in the Republic of Armenia” is dedicated to that political and juridical situation of Armenia, in which conditions of the Council of Justice was founded. Here are also discussed constitutional and juridical basis on which the Council is built. The author has also drawn parallels with the Council of Justice of the Republic of France analyzing the chronological facts for the foundation of the Council and its characteristic features.

**ԱՆՆԱ ԴԱՆԻՔԵԿՅԱՆ**

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական և քրեական  
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՇԱՌՔԻ ԱՌԱՐԿԱՅԻ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ**

Առևտրային կաշառքի հանցակազմը, որը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածով, նորամուծություն է հանդիսանում ետխորհրդային քրեական իրավունքում: Վերոհիշյալ նորմն ընդգրկում է երկու փոխկապակցված արարք՝ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը (200-րդ հոդ. 1-ին մաս), ինչպես նաև նշված սուբյեկտների կողմից կաշառք ստանալը (200-րդ հոդ. 3-րդ մաս): ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը օբյեկտիվ կողմից բնութագրվում է որպես ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքի օբյեկտիվ կողմը համապատասխանաբար արտահայտվում է վերոհիշյալ սուբյեկտների կողմից թվարկված նյութական արժեքները և այլ օգուտները նույն պայմաններով ստանալու կամ պահանջելու կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելու մեջ:

Առևտրային կաշառքի առարկան կազմող՝ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դիսպոզիցիայում թվարկված նյութական արժեքների ու այլ օգուտների բովանդակության բացահայտումը ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն, քանի որ դա հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչպես կաշառքը կարող է ներգործել կաշառվողի վարքագծի վրա, որպեսզի վերջինս կաշառատուի կամ նրան ներկայացնող անձի օգտին կատարի կամ չկատարի որոշակի գործողություն: Այսպես, առևտրային կաշառքը նախատեսող նորմը՝ գործող խմբագրությամբ, կաշառքի առարկա է համարում դրամը, գույքը, գույքի նկատմամբ իրավունքը, արժեթղթերը կամ այլ առավելություններ (նախկին խմբագրությամբ այն նկարագրվում էր որպես դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային բնույթի ծառայություններ):

Կաշառքի առարկա հանդիսացող նյութական արժեքների՝ դրամի, գույքի, արժեթղթերի հասկացությունն ու բովանդակությունը քրեական իրավունքի տեսությունում էական տարածայնություններ և վեճեր չի առաջացնում: Այսպես, կաշառքի առարկա հանդիսացող դրամը կարող է արտահայտված լինել ինչպես ՀՀ ազգային արժույթով, այնպես էլ արտարժույթով: Այդպիսին է հանդիսանում ցանկացած դրամանիշը, որը գտնվում է ֆինանսական շրջանառության մեջ կամ էլ, եթե հանվել կամ հանվում է շրջանառությունից, ապա ենթակա է փոխանակման: Ինչ վերաբերում է շրջանառությունից հանված դրամին, օրինակ՝ հին մետաղադրամներին, ապա վերջիններս դրամ չեն համարվում, սակայն որոշակի արժեք ներկայացնելու դեպքում կարող են դիտվել որպես այլ գույք: Արժեթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս (ՀՀ քաղ. օր.-ի 146-րդ հոդ.), նույնպես կարող են արտահայտված լինել ցանկացած արժույթով: ՀՀ քաղ. օր.-ի 8-րդ գլխի 2-րդ պարագրաֆի դրույթներին համապատասխան, արժեթղթերի տեսակներն են պարտատոմսը, չեկը, հասարակ կամ փոխանցելի մուրհակը (վճարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, պահեստային վկայագիրը (երկակի կամ հասարակ) և այլն: Գույքը նույնպես կարող է լինել տարբեր՝ ինչպես անշարժ, այնպես էլ շարժական, որոնց թվին պատկանում են ցանկացած ֆիզիկապես շոշափելի նյութական բարիքները՝ իրերը, որոնք ունեն որոշակի արժեք: Դրանք կարող են լինել մարդկանց աշխատանքի արդյունք հանդիսացող կամ բնության կողմից ստեղծված առարկաներ, որոնք օգտագործվում են մարդկային կենսագործունեության մեջ և բավարարում այս կամ այն պահանջումները: Որպես առևտրային կաշառքի առարկա կարող են հանդես գալ տարբեր տեսակի ապրանքները, արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրանքը, նյութերը, դեղամիջոցները, սարքերը, սարքավորումները, մեխանիզմները, արժույթային արժեքները՝ թանկարժեք մետաղները, դրանց ջարդոնը, թանկարժեք քարերը, դրանցից պատրաստված զարդերը և այլ արտադրանքը,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պերճանքի առարկաները, պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեք ունեցող առարկաները, շենքերը, շինությունները, կառույցները, հողամասերը, տրանսպորտային միջոցները, նույնիսկ բույսերը և կենդանիները:

Ընդ որում՝ կաշառքի առարկա հանդիսացող նյութական արժեքների նկարագրությունը (մասնավորապես խոսքը վերաբերում է նյութականացված թաղանթ ունեցող առարկաներին) նախկին խմբագրությամբ, մեր կարծիքով, ավելի հաջող էր ներկայիս օրենսդրական ձևակերպման համեմատ: Սկզբնական խմբագրությամբ այն շարադրվում էր որպես «դրամ, արժեթղթեր, այլ գույք...», որը տրամաբանական էր՝ նկատի ունենալով, որ թե՛ դրամը և թե՛ արժեթղթերը համարվում են գույքի տեսակներ: Նկատի ունենալով, որ նշված կատեգորիան առաջնահերթ վերաբերում է քաղաքացիաիրավական ոլորտին, հետևաբար այն բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ իրավունքի տվյալ ճյուղի նորմերին: Այսպես, ՀՀ քաղ. օր.-ի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, «գույք» հասկացությունը ընդգրկում է նաև դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները: ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի գործող խմբագրությամբ («դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր...») դրամը և արժեթղթերը առանձնացվում են գույքից և դրանցից յուրաքանչյուրը դիտվում է որպես ինքնուրույն կատեգորիա, որը հակասում է օրենքում ամրագրված «գույք» հասկացության իմաստին: Այդ իսկ պատճառաբանությամբ գտնում ենք, որ ավելի տրամաբանական կլիներ վերադառնալ 200-րդ հոդվածի նախկին խմբագրությանը՝ վերոհիշյալ մասով:

Մինչդեռ հարկ է նշել, որ առևտրային կաշառքի առարկայի նկարագրությունը նախկին խմբագրությամբ ուներ մի շարք թերություններ, այդ թվում՝ նշում չէր պարունակում գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ: Այնուհետև օրենսդրի հիշյալ բացթողումը շտկվել է, և ներկայիս խմբագրությամբ առևտրային կաշառքը նախատեսող նորմը դրա առարկայի տեսակների շարքին է դասում նաև գույքի նկատմամբ իրավունքը: Գույքի նկատմամբ իրավունք ասելով՝ պետք է հասկանալ ոչ միայն սեփականության իրավունքը, այլև ՀՀ քաղ. օր.-ի 170-րդ հոդվածով նախատեսված այլ գույքային իրավունքները (կառուցապատման, գույքի օգտագործման, սերվիտուտի, գրավի): Ընդ որում՝ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի իմաստով «գույքի նկատմամբ իրավունք» հասկացությունը ենթադրում է իրավագործությունների ավելի լայն շրջանակ, որը չի սահմանափակվում քաղ. օր.-ի վերոհիշյալ նորմով նախատեսված գույքային իրավունքներով: Այսպես, գույքի նկատմամբ իրավունք պետք է համարել նաև իրավաբանական փաստաթղթերում (լիազորագիր, կտակ և այլն) ամրագրված այլ իրա-

վունքները, օրինակ՝ դրամը կամ ապրանքա-նյութական արժեքները ստանալու, գույքը տնօրինելու, դրա հետ կապված գործարքներ կնքելու, իրավաբանական գործողություններ կատարելու, գույքը ժառանգելու և այլ իրավունքները, որոնց իրացման արդյունքում անձը ձեռք է բերում նյութական բովանդակությամբ որոշակի օգուտ: Վերագրյալից բխում է, որ առևտրային կաշառք տալու կամ ստանալու դրսևորումները չեն սահմանափակվում այն դեպքերով, երբ կաշառքի առարկա հանդիսացող գույքը անմիջապես հանձնվում է կաշառվողի սեփականությանը, այլ հանցակազմը առկա կլինի նաև այն պարագաներում, երբ, օրինակ, համապատասխան գույքը տրվի վերջինիս օգտագործմանը և կամ տիրապետմանը, նրա մոտ գրավ դրվի, հողամասը տրամադրվի կառուցապատման համար և այլն: Ինչ վերաբերում է անշարժ գույքի տեսքով հանդես եկող առևտրային կաշառքի առարկային, ապա բնականաբար այն կարող է տրամադրվել կաշառվողին միայն դրա նկատմամբ իրավունքը փոխանցելու միջոցով:

Անդրադառնալով ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածում նշված «այլ առավելություններ» տերմինին՝ պետք է նշել, որ դրա բովանդակության հարցն այնքան էլ միանշանակ չէ: Ինչպես նշվել է, նախկին խմբագրությամբ առևտրային կաշառքը նախատեսող նորմը՝ դրամից, գույքից և արժեթղթերից բացի, կաշառքի առարկայի հասկացության մեջ ընդգրկում էր նաև գույքային բնույթի ծառայությունները: Տրամաբանորեն գույքային բնույթի ծառայությունները պետք է դասվեն ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածում նշված առավելությունների թվին: Սակայն, «այլ առավելություններ» հասկացությունը ավելի լայն է, քան գույքային բնույթի ծառայությունները, և վերջիններից բացի՝ ընդգրկում նաև այդպիսիք չհամարվող այլ օգուտները: «Գույքային բնույթի ծառայություն» հասկացությունը բացահայտելու համար հարկ է անդրադառնալ քաղաքացիական իրավունքի նորմերին: Քաղաքացիական իրավունքում ծառայությունը բնութագրվում է որպես քաղաքացիների և իրավաբանական անձանց ձեռնարկատիրական գործունեություն, որը ուղղված է այլ անձանց պահանջումների բավարարմանը: Ծառայությունները կարող են վերաբերել մարդկային գործունեության տարբեր ոլորտներին. դրանց տեսակները բազմազան են: Այսպես, ՀՀ քաղ. օր.-ի 777-րդ հոդվածի համաձայն՝ վճարովի ծառայությունների թվին դասվում են, օրինակ, կապի, բժշկական, անասնաբուժական, աուդիտորական, խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցման, զբոսաշրջիկության և այլ ծառայությունները: Բացի այդ ՀՀ քաղ. օր.-ի 7-րդ բաժնի 5-րդ ենթաբաժնի համաձայն՝ այդպիսիք են հանդիսանում նաև հանձնարարությունը, կոմիսիան, գործակալությունը, պահատվությունը, փոխադրումը, տրանսպորտային առա-

քումը, փոխառությունը, վարկը, ֆակտորինգը, ֆրանչայզինգը և այլն:

Քրեական իրավունքի տեսությունում տվյալ հասկացությունը բնորոշվում է ոչ միանման: Այսպես, Վ. Ս. Բուրովը գույքային բնույթի ծառայություններ է համարում ծառայությունները, որոնք կապված են նյութական բարիքների ձեռքբերման և կամ սպառման հետ<sup>2</sup>: Համաձայն չենք նման բնորոշմանը, քանի որ ծառայությունը կայանում է որոշակի գործողություններ կատարելու մեջ, որոնք ոչ միշտ կարող են նյութականացված արտահայտություն ունենալ: Քաղաքացիական իրավունքի տեսությունում, նայած մատուցված ծառայությունների արդյունքին, դրանք դասակարգվում են նյութական և ոչ նյութական ծառայությունների: Վերջիններս բնութագրվում են նրանով, որ ծառայություն մատուցողի գործունեությունն առարկայական տեսք չի ստանում, ինչպես նաև ծառայություն մատուցողը չի երաշխավորում ենթադրվող դրական արդյունքին հասնելը<sup>3</sup> (օրինակ՝ բժշկական կամ խորհրդատվական ծառայությունները): Այլ հեղինակների կողմից գույքային բնույթի ծառայությունները բնորոշվում են որպես գործողությունների կատարում կամ որոշակի գործունեության իրականացում՝ անկախ դրա նյութական արդյունքի առկայությունից, որոնք ենթակա են գույքային (արժեքային) գնահատման՝ դրամային փոխարժեքով, սովորաբար մատուցվում են հատուցելի հիմունքներով և չեն կրում անձնական բնույթ<sup>4</sup>, որպիսի բնորոշումը, մեր կարծիքով, ավելի հաջող է:

Պ. Ս. Յանին որպես ծառայություն է դիտարկում առևտրային կամ այլ կազմակերպությունում կառավարչական գործառնություններն իրականացնող անձի օգտին կատարված ցանկացած գործողություն, բացառությամբ վերջինիս որպես կաշառքի առարկա գույք հանձնելու դեպքերի: Միաժամանակ հեղինակը շեշտում է այդպիսի գործողությունների գույքային բնույթը՝ որպես օրինակ նշելով որևէ ծառայություն նվազեցված գնով ստանալը այն դեպքում երբ սովորական պայմաններում, եթե կաշառումը տեղի չունենար, ծառայողի ծախսերը ավելի մեծ կլինեին: Ըստ հեղինակի դիրքորոշման՝ գոյություն ունեն նաև այնպիսի ծառայություններ, որոնք թեև չեն կարող ունենալ գնային արտահայտություն, սակայն արդյունքում հանգեցնում են ծառայողի հարստացմանը (օրինակ՝ ավելի բարձր վարձատրվող աշխատանքի տեղավորելը), և այդ իսկ պատճառով հանդիսանում են գույքային բնույթի ծառայություններ: Սակայն, Պ. Ս. Յանիի կարծիքով, կաշառվողի համար ավելի հետաքրքիր կամ հեղինակավոր աշխատանքի ընդունվելուն աջակցելը, եթե նրա աշխատավարձը չի ավելանում, չի կարելի դասել գույքային բնույթի ծառայություններին<sup>5</sup>: Նման տեսակետը վիճելի է թվում, քանի որ, մեր համոզմամբ, գույքային բնույթը բոլոր դեպքե-

րում պետք է ենթադրի դրամային փոխարժեքով գնահատման հնարավորություն: Ինչ վերաբերում է աշխատանքի ընդունմանն աջակցելուն, ապա դա չի կարող դիտվել որպես կաշառքի առարկա, քանի որ դա ենթադրում է հատուցելի հիմունքներով աշխատանքային պայմանագրի հիման վրա որոշակի աշխատանքի իրականացում: Այսինքն՝ նկատի ունենալով, որ տվյալ դեպքում անձը դրամական հատուցում կստանա իր կողմից կատարվող աշխատանքի դիմաց՝ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պայմանների համաձայն (այլ ոչ թե կաշառողի կամ նրա ներկայացված անձի օգտին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար), ուստի բացակայում է վարձատրության ապօրինության հատկանիշը, քանի որ աշխատողին վճարվող աշխատավարձը չի կարող հավասարեցվել ապօրինաբար գույքային օգուտ տրամադրելուն (ստանալուն): Այլ է իրավիճակը, եթե անձի հետ կնքվում է այսպես կոչված «ֆիկտիվ» (կեղծ) աշխատանքային պայմանագիր, որի հիման վրա վերջինս ձևակերպվում է որպես տվյալ կազմակերպության աշխատող, սակայն իրականում վարձատրություն է ստանում առանց որևէ աշխատանք կատարելու, այսինքն՝ անհիմն: Տվյալ դեպքում իրոք առկա կլինի ապօրինաբար տրամադրված գույքային օգուտ, որը անձը ձեռք է բերում առանց օրենքի, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերով: Ապօրինի գույքային օգուտ ձեռք բերելը իր էության մոտ է անհիմն հարստացման քաղաքացիաիրավական ինստիտուտին, որը ըստ ՀՀ քաղ. օր.-ի 1092-րդ հոդվածի դրույթների՝ դրսևորվում է որպես առանց օրենքի, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին գույք ձեռք բերել կամ խնայել: Մինչդեռ, համեմատելով իրավունքի տարբեր ճյուղերին վերաբերող տվյալ ինստիտուտները, պետք է նշել, որ ի տարբերություն անհիմն հարստացման՝ կաշառողի կողմից կաշառվողին ապօրինաբար համապատասխան օգուտ տրամադրելու դեպքում առկա չէ տուժողը, քանի որ կաշառատուն չի կարող այդպիսին համարվել:

Բոլոր դեպքերում գույքային բնույթի ծառայությունները ենթադրում են ոչ միայն համապատասխան ծառայողի պահանջմունքների բավարարմանն ուղղված և որոշակի գնային արտահայտություն ունեցող գործողությունները կաշառողի կողմից անձամբ կատարելը, այլև երրորդ անձանց կողմից կաշառվողի օգտին կատարվող այդպիսի գործողությունները (գործունեությունը) վճարելը: Այսպես, տառացի մեկնաբանությամբ գույքային բնույթի ծառայության տեսքով հանդես եկող կաշառքի առարկա պետք է դիտվի կաշառվողի օգտին այնպիսի ծառայություն անհատույց մատուցելը, որը համապատասխան ծառայությունների շուկա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յում ունի դրամային արտահայտությամբ գնահատվող որոշակի արժեք և քաղաքացիաիրավական շրջանառության սովորական պայմաններում մատուցվում է վճարովի հիմունքներով, ինչպես նաև այն ոչ համարժեք, չնչին վճարի դիմաց մատուցելը կամ կաշառվողի օգտին այլ անձանց կողմից մատուցվող ծառայությունները վճարելը: Սակայն, քրեական իրավունքի տեսությունում «գույքային բնույթի ծառայություններ» հասկացությունը մեկնաբանվում է ավելի լայն իմաստով, քան քաղաքացիական իրավունքում: Այսպես, դրանց թվին է դասվում նաև տարբեր տեսակի աշխատանքների կատարումը, որոնք քաղաքացիական օրենսդրության տեսակետից չեն նույնացվում ծառայությունների հետ (մասնավորապես՝ կապալը): Բացի այդ՝ քրեական իրավունքի տեսանկյունից որպես այդպիսին են դիտվում նաև տարբեր գույքային օգուտները (օրինակ՝ սեփականացնող օբյեկտների կամ օտարվող գույքի արժեքը կամ տրամադրվող վարկի տոկոսադրույքը նվազեցնելը, ոչ համարժեք ապրանքների փոխանակությունը, կաշառվողի փոխարեն պարտավորություն կատարելը, նրան նյութական ծախսերից ազատելը և այլն), որոնք չեն ընդգրկվում «ծառայություն» բուն հասկացության մեջ: Այսպես, Ռ.Գ. Գերագույն դատարանի Պլենումը «Կաշառակերության և առևտրային կաշառքի վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 6 առ 10.02.2000թ. որոշմամբ պարզաբանել է, որ գույքային բնույթի ծառայություններ և այլ գույքային իրավունքների տրամադրում ասելով պետք է հասկանալ նյութական բովանդակությամբ օգուտները՝ մասնավորապես, օտարվող գույքի, սեփականացնող օբյեկտների արժեքի նվազեցումը, վարձավճարների, ինչպես նաև բանկի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքների նվազեցումը, անհատույց մատուցվող, սակայն վճարման ենթակա ծառայությունները՝ տուրիստական ուղեգրեր տրամադրելը, բնակարան վերանորոգելը, ամառանոց կառուցելը և այլն: Նշված օգուտները դատավճռում պետք է ստանան դրամական գնահատում: Այդպիսի ծառայությունների թվին կարելի է դասել՝ օրինակ, հյուրանոցային ծառայությունները, ավտոմեքենայի վերանորոգումը, անվճար ուսուցումը վճարովի ԲՈՒՀ-ում և այլն: Անհրաժեշտ է, որ դա կրի գույքային բնույթ և լինի ապօրինի, այսինքն՝ նախատեսված չլինի աշխատանքային պայմանագրի կամ այլ պայմանագրի պայմաններով:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի ներկայիս խմբագրությամբ ամրագրված «այլ առավելություններ» հասկացությանը, ապա, ինչպես արդեն նշվել է, այն ենթադրում է տարատեսակ օգուտների ավելի լայն շրջանակ, քան գույքային բնույթի ծառայությունները, թեև, մեր կարծիքով, նույնպես գուրկ չէ թերություններից: Այսպես, քրեական իրավունքի տեսությունում վեճե-

րի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք առևտրային կաշառքի առարկա կարող են դիտվել նաև գույքային բնույթ չունեցող բարիքները, այսինքն՝ ոչ նյութական պահանջմունքների բավարարմանն ուղղված և գույքային օգուտ ստանալուն շահագեցնող գործողությունների կատարումը կամ գործունեության իրականացումը, օրինակ՝ ծառայողական առաջխաղացումը, պատվոգրով կամ շնորհակալագրով պարգևատրելը կամ պարգևատրման ներկայացնելը, դրական շեղենգիա կամ հոդված գրելը: Որոշ հեղինակները գտնում են, որ ոչ նյութական բարիքները նույնպես կարող են համարվել կաշառքի առարկա, եթե դրանք կաշառվողի համար որոշակի արժեք են ներկայացնում: Օրինակ՝ Ա. Կ. Կվիցինիայի կարծիքով «կաշառքի առարկա կարող է լինել այն ամենը, ինչով կարելի է կաշառել պաշտոնատար անձին և նրա վրա ազդեցություն գործել ցանկացած բարիքների, ծառայությունների տրամադրման ճանապարհով՝ անկախ նրանից, թե դրանք ունեն նյութական, թե ոչ նյութական հատկություններ»<sup>8</sup>: Մինչդեռ քրեագետների մեծամասնությունը դեմ է մման տեսակետին, գտնելով, որ ոչ նյութական արժեքները չեն կարող դիտվել որպես կաշառքի առարկա: Համամիտ ենք նշված կարծիքին և միանում ենք քրեական իրավունքի տեսությունում ավանդական դարձած դիրքորոշմանը, ըստ որի՝ ուսումնասիրվող արարքը համարվում է շահադիտական հանցագործություն: Հետևաբար, ոչ նյութական բնույթ կրող բարիքների դիմաց որոշակի գործողություն (անգործություն) կատարելը որպես առևտրային կաշառք որակելը, մեր համոզմամբ, կհանգեցնի տվյալ հանցագործությունների շրջանակի չարդարացված ընդլայնմանը՝ դրանց թվին վերագրելով նաև անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով կատարված արարքները: Այդ կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ օրենսդրի կողմից օգտագործված «այլ առավելություններ» տերմինը անորոշ է և ստույգ չի արտացոլում կաշառքի առարկա հանդիսացող արժեքների բնույթը: Այսպես, նկատի ունենալով տվյալ արտահայտության անորոշությունը, լիովին պարզ չէ, թե արդյո՞ք այդպիսի առավելությունների շարքին կարելի է դասել միայն գույքային, թե նաև ոչ գույքային բնույթի բարիքները: Ինչպես արդեն նշվել է, կաշառքի առարկա կարող են համարվել միայն այնպիսի օգուտները, որոնք ենթակա են գույքային (արժեքային) գնահատման՝ դրամային փոխարժեքով: Գտնում ենք, որ տվյալ դեպքում ուսումնասիրվող նորմը կիրառելիս հնարավոր սխալներից խուսափելու նպատակով ավելի նպատակահարմար կլիներ հստակեցնել առևտրային կաշառքի առարկայի հասկացության մեջ մտնող «այլ առավելությունների» բնույթը՝ դրա փոխարեն օգտագործելով «գույքային բնույթի որևէ այլ օգուտ» արտահայտությունը: Մեր կարծիքով, վերոհիշյալ ձևակերպումը ավելի ճիշտ է

www.lawinstitute.am

բնորոշում կաշառքի առարկա կազմող, առարկայական տեսք չունեցող արժեքները և հետևաբար ավելի պարզ է արտացոլում ուսումնասիրվող հանցագործության էությունը, որը կայանում է դրա շահադիտական բնույթի մեջ:

Որոշ հեղինակների, այդ թվում՝ Ս. Վ. Իգոսիմովի կարծիքով, առևտրային կաշառքի առարկան չի ընդգրկում գույքային բնույթի բոլոր օգուտները, օրինակ՝ պարտքը պահանջելուց հրաժարվելը և այլն: Ըստ նշված մտտեցման՝ այդպիսին չեն կարող համարվել նաև ոչ գույքային բնույթի ծառայությունները, օրինակ՝ ղեկավարի բարեհաճ վերաբերմունքը, դրական բնութագիր տալը կամ դրական գնահատական պարունակող հոդված մամուլում հրապարակելը<sup>10</sup>: Այսպես, տվյալ տեսակետի հետ համամիտ ենք միայն մասնակի՝ ոչ գույքային բնույթի բարիքները կաշառքի առարկայի հասկացության մեջ չընդգրկելու մասով, որի մասին արդեն նշվել է: Ինչ վերաբերում է պարտքը պահանջելուց հրաժարվելուն, ինչպես նաև համապատասխան ծառայողին նյութական ծախսերից ազատելու այլ դեպքերին, օրինակ՝ կաշառվողի փոխարեն գույքային պարտավորությունը կատարելուն, ապա, մեր կարծիքով, դա նույնպես պետք է համարել կաշառքի առարկա՝ նկատի ունենալով, որ դրա արդյունքում կաշառվողը անհիմն ձեռք է բերում այնպիսի գույքային օգուտ, որը հնարավոր է գնահատել դրամային փոխարժեքով:

Քրեական իրավունքի տեսությունում վիճելի է հանդիսանում այն հարցը, թե հնարավոր է արդյոք առևտրային կաշառքի առարկայի հասկացությանը վերագրել նաև մտավոր սեփականության օբյեկտները և դրանց նկատմամբ իրավունքները: Մեր կարծիքով, այդ հարցին պետք է դրական պատասխանել, եթե նշված օբյեկտներն ու իրավունքները ենթադրում են գույքային գնահատման հնարավորություն: Այսպես, ըստ ՀՀ քաղ. օր.-ի 1100-րդ հոդվածի, մտավոր սեփականության օբյեկտներ են հանդիսանում մտավոր գործունեության արդյունքները (գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները, գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները, սելեկցիոն նվաճումները, չբացահայտված տեղեկատվությունը՝ ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու) և այլն) և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները (ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, սպասարկման նշանները և այլն): ՀՀ քաղ. օր.-ի 1102-րդ հոդվածը մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքները դասակարգում է անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների: Ընդ որում՝ ըստ նշված հոդվածի դրույթների՝ անձնական ոչ գույքային իրավունքները հեղինակին են պատկանում անկախ նրա գույ-

քային իրավունքներից և պահպանվում են մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ նրա գույքային իրավունքներն այլ անձի անցնելիս: Ինչ վերաբերում է գույքային իրավունքներին, ապա ՀՀ քաղ. օր.-ի 1105-րդ հոդվածի համաձայն՝ դրանք կարող են այլ անձի փոխանցվել պայմանագրով (լիցենզային պայմանագիր) կամ իրավահաջորդության կարգով: ՀՀ քաղ. օր.-ի 1106-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ լիցենզային պայմանագիրը ենթադրվում է հատուցելի: Այսպիսով, քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքի տրամադրումը իրականացվում է վճարովի հիմունքներով: Բացի այդ՝ անձը, որին տրամադրվում է մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունք (լիցենզառու), լիցենզային պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է այդ իրավունքը տրամադրել այլ անձի՝ կնքելով ենթալիցենզային պայմանագիր, որը նույնպես ենթադրում է լիցենզառուի կողմից որոշակի վարձատրություն ստանալը: Հետևաբար, անհատույց կամ ոչ համարժեք հատուցմամբ կաշառվողին այդպիսի իրավունք տրամադրելը, ինչպես նաև այդ իրավունքն այլ անձանց վճարի դիմաց տրամադրելու հնարավորություն ընձեռելը համապատասխանում է կաշառքի առարկայի հատկանիշներին, քանի որ կարող է ստանալ գույքային գնահատական:

Այսպիսով, մեր համոզմամբ, առևտրային կաշառքի առարկա կարող է հանդիսանալ նյութական կրիչի վրա արտացոլված մտավոր գործունեության արդյունքը, որը օժտված է իրային հատկանիշներով և ունի որոշակի արժեք (ձեռագիրը, էսքիզը), ինչպես նաև մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ գույքային իրավունքները, որոնք կարող են գնահատվել դրամային փոխարժեքով: Նույն չափանիշների հիման վրա որպես առևտրային կաշառքի առարկա պետք է գնահատել նաև այն տեղեկատվությունը, որն ունի որոշակի առևտրային արժեք:

Ամփոփելով վերոգրյալը՝ առևտրային կաշառքի առարկան ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես կաշառողի կողմից կաշառվողի պահանջմունքների բավարարման համար անհատույց կամ ոչ համարժեք հատուցմամբ ստեղծվող այնպիսի պայմաններ, որոնք հանգեցնում են վերջինիս կամ այլ անձի կողմից անհիմն, այսինքն՝ առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերի որոշակի եկամուտ ստանալուն կամ ծախսերից ազատվելուն կամ դրա իրական հնարավորությունը ձեռք բերելուն, եթե այդպիսի արդյունքը դրամային փոխարժեքով լեզալ գույքային գնահատման հնարավորություն է ընձեռում:



<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս: Խմբագրությամբ պրոֆ. Ռ.Գ. Պետրոսյանի և պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան-2001, էջ 297

<sup>2</sup> Տե՛ս Буров В.С. Преступления против интересов службы в коммерческих и иных организациях. Комментарий законодательства и справочные материалы. Ростов-на-Дону, 1997, С. 167

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս: Խմբագրությամբ պրոֆ. Ռ.Գ. Պետրոսյանի և պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան-2001, էջեր 297-298

<sup>4</sup> Տե՛ս Уголовное право. Особенная часть. Под. общ. ред. В.П. Ревина. М., 1998, С. 329

<sup>5</sup> Տե՛ս Яни П.С. Экономические и служебные преступления. М., 1997, С. 119

<sup>6</sup> Տե՛ս Документы Верховного суда Российской Федерации. Бюллетень Верховного суда Российской Федерации. Бюллетень N 6 2000 года. <http://www.suprcourt.ru/second.php>

<sup>7</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ/ Под общ. ред. В.В. Мозякова.- М.: Экзамен, 2002, С. 464: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. В.И. Радченко. М., Вердикт, 1996, С. 350: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (постатейный). - 3-е изд., испр., доп. и перераб. (под ред. доктора юридических наук, профессора Чучаева А.И.). - «Юридическая фирма «КОНТРАКТ», 2011, С. 204, Система «ГАРАНТ», [www.garant.ru](http://www.garant.ru), <http://base.garant.ru/59694556/>, <http://www.twirpx.com/file/663610/>

<sup>8</sup> Տե՛ս Квициния А.К. Должностные преступления. М., 1992, С. 132

<sup>9</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. В.И. Радченко. М., Вердикт, 1996, С. 521. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. А.И. Бойко. Ростов-на-Дону, 1996, С. 440

<sup>10</sup> Տե՛ս Изосимов С.В. Преступления против интересов службы в коммерческих и иных организациях (уголовно-правовой анализ). СПб, 1997, С. 133-134: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (отв. ред. А.А. Чекалин; под ред. Томина В.Т., Сверчкова В.В.). - 3-е изд., перераб. и доп. - Юрайт-Издат, 2006, С. 204, [http://www.pravo.vuzlib.net/book\\_z1876\\_page\\_34.html](http://www.pravo.vuzlib.net/book_z1876_page_34.html): Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. Чекалин А.А., под ред. Томина В.Т., Сверчкова В.В. 4-е изд., перераб. и доп. - «Юрайт-Издат», 2007, С. 204, <http://do.gendocs.ru/docs/index-181420.html?page=37>: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (под ред. Томина В.Т., Сверчкова В.В.). - 6-е изд., перераб. и доп. - «Юрайт-Издат», 2010, С. 204, Система «ГАРАНТ», [www.garant.ru](http://www.garant.ru), <http://base.garant.ru/5750333/>

## РЕЗЮМЕ

### *Правовые вопросы предмета коммерческого подкупа*

В настоящей статье рассматриваются проблемы и правовые вопросы предмета коммерческого подкупа. В статье описываются и анализируются признаки благ, составляющих понятие предмета коммерческого подкупа, перечисленных в статье 200 Уголовного кодекса Республики Армения, предусматривающей ответственность за указанное преступление, на основании чего определяется общая характеристика предмета коммерческого подкупа. Статья содержит анализ сложившихся в теории уголовного права мнений и позиций, высказанных разными авторами относительно данного вопроса. В статье затрагиваются также вопросы совершенствования законодательного определения предмета коммерческого подкупа.

## SUMMARY

### *The legal issues of subject of commercial bribery*

This article deals with the problems and legal issues of subject of commercial bribery. The article describes and analyzes the characteristics of goods that make up the concept of subject of commercial bribery referred to in Article 200 of the Criminal Code of Republic of Armenia, providing for responsibility for the crime on the basis of which general characterization of the subject of commercial bribery is determined. This article contains analysis of prevailing in theory of criminal law views and positions, expressed by different authors on this issue. The article also addressed the issues of improvement the legislative definition of the subject of commercial bribery.

## ԱՆԱՀԻՏ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
լրագրության ֆակուլտետի լրագրության  
տեսության և պատմության ամբիոնի հայցորդ



### ԲԱՆՇԻ ԻՇԽԱՆՅԱՆԸ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԲԱՆՏՈՒՄ

1900-ական թվականների առաջին տասնամյակների հրապարակախոսների մեջ իր ուրույն տեղն ունի հանրաճանաչ տնտեսագետ Բախշի Իշխանյանը: 1906 թվականին նա Թիֆլիսում հրատարակում է «Կյանք» թերթը, ապա դառնում «Մշակ» լրագրի սյուններից մեկը և մինչև թերթի դադարեցումը (1921թ. փետրվարի 25) մնում նրա աշխատակիցներից մեկը: Հայաստանի առաջին Հանրապետության օրերին եղել է վիճակագրական վարչության պետ:

1921 թվականի օգոստոսի 26-ին Բոմբեյից դուրս եկած անգլիական «Անկոր լայն» շոգենավը խարխախ գցեց Պորտ Սուդան նավահանգստում: Պատգարակով ափ իջեցրին մահամերձ Բ. Իշխանյանին, և նրան դիմավորող մի քանի ազգակիցները առաջ նետվեցին: Իսկույն տեղափոխեցին նավահանգստի հիվանդանոց, և քանի որ պատճառը ջերմախտն էր, մերկացրին, պառկեցրին մեկ սավանով ծածկված երկաթե մահճակալին և ամբողջ մարմինը պատեցին սառցակտորներով: Ավա՛ղ, ոչինչ չօգնեց, և ընդամենը 42 տարեկան հասակում օտար ավերում հոգին ավանդեց մի մարդ, որը բռնագրկվել էր հայրենիքից: Մարդ, որն, անկասկած, հայոց ազգային հասարակական, քաղաքական մտքի տիտաններից մեկն էր:

Հանգուցյալի ուղեբեռը բաղկացած էր մաշված հագուստներով մի փոքրիկ ճամպուրակից և երեք մեծ սնդուկներից, որոնք բերնեբերան լի էին փաստաթղթերով, ձեռագրերով ու նշանագրերով:

Այդ անգնահատելի արխիվը տեղափոխեցին Կահիրե: Թղթերի մեջ հայտնաբերվեց մի ավարտուն ձեռագիր, որի վերնագիրն էր «Երկու ամիս բոլշևիկների բանտում»: 1924թ. Դաշնակցությունը, որի անգիջում քննադատն էր եղել հեղինակը. ձեռագիրը հրատարակեց: Գրքի առաջաբանը գրել էր Վահան Նավասարդյանը, որը, մանրամասնորեն նկարագրելով Բ. Իշխանյանի կյանքն ու գործունեությունը, խոսքն ավարտել էր հետևյալ տողով. «Ափսոս մեր հակառակորդ Բախշին»: «Այս տողը քաղաքական մշակույթի, քաղաքական հակառակորդի քաղաքակիրթ պահվածքի բարձրագույն դրսևորումն էր, որից կարող են դաս առնել Հայաստանի Հանրապետության արդի քաղաքական գործիչները»:

«Երկու ամիս բոլշևիկների բանտում» աշխատությունը հուշագրային բնույթ ունի, որը միաժամանակ լույս է սփռում հեղինակի հետագա կարճատև ու բուռն կենսուղու վրա:

Համաձայն Բախշի Իշխանյանի նկարագրածի՝ բանտը իր սեփական ինքնապարփակ կյանքը ունեցող մի անձուկ աշխարհ է. որի յուրօրինակ առանձնահատկությունների մեջ արտացոլում է տվյալ երկրի պետական կառուցվածքը և կառավարական ռեժիմի էությունը:

Այն երկրներում, ուր վաղուց իրականացրել են ժամանակակից ռամկավարության պահանջած բոլոր քաղաքացիական ազատությունների սկզբունքները, և ուր ազատ մտքի ու խոսքի, գրավոր ու բանավոր քարոզչության իրավունքները տարրական բարիքներ են դարձել հանրության համար, այդպիսի երկրներում բանտերը մոռացված հաստատություններ են միայն, ուր խմբված քրեական հանցապարտները, որպես այդպիսիք, որպես հանրավնաս տարրեր, ոչ ոքի չեն հետաքրքրում, և նրանք բանտարկված ու դատապարտված են ոչ միայն պետության օրենքներով, այլև հասարակական մտքի ու խղճի արդար թելադրանքներով:

Իսկ այն երկրներում, ուր իշխում է տակավին բռնակալությունը իր վատթարագույն ձևերով, հալածվում և խեղդվում են քաղաքացիական բոլոր կարգի ազատությունները, տիրող չնչին փոքրամասնությունը ուժով բռնանում է բացարձակ մեծամասնության մտքի, խղճի, կամքի ու կարծիքի վրա, ահա այդպիսի երկրներում բանտերը բռնակալության հենարանները կազմող կարևորագույն ինստիտուտներ կամ հաստատություններ են կառավարական քաղաքականության տեսակետից և հավիտենական անեծքի ու նախատինքի դատապարտված դժոխավայրեր՝ ճնշված հանրության ազատատենչ ձգտումների տեսակետից: Եվ այդ դժոխավայրերը, ուր հազարներով տառապում, փտում են ըմբոստ քաղաքացիության, ապստամբ ռամկավարության լավագույն գաղափարախոսներն ու մարտիկները, մարմնացնում են իրենց մեջ տիրող բռնակալության բոլոր հոռի հատկանիշները:

Ռուս միապետության օրով բանտը և բանտային կյանքի նկարագիրը լավագույն չափանիշն

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ու բնորոշիչն էր ցարական բյուրոկրատիայի գործելակերպի էությունը: Ռուսական նորագույն կոմիսարապետության օրով բանտը և բանտային անցուդարձերի վարքագիծը լավագույն փաստաթուղթն է բուլշևիկյան ժանդարմերիայի սխրագործությունների մասին: Առաջ ռուս հասարակական մտքի ու շարժման պատմագիրները խորին ուշադրությամբ թերթում ու ուսումնասիրում էին այն հիշատակարանները, նամակները, հոդվածներն ու ինքնակենսագրությունները, որ թողել էին հին ռեժիմի օրով Պետերբուրգի Շլիսելբուրգ և Պետրոպավլովսկ կոչված մարդակուլ բանտերում հյուծվող, ողջակիզվող զոհերը:

Այժմ Ռուսաստանի ամեն մի ծայրերկիր, ամեն մի քաղաք ու գավառ ունեն իրենց բազմաթիվ շլիսելբուրգերն ու պետրոպավլովսկները. բուլշևիկյան ամեն մի բանտ վաղուց վաստակել է ցարական տխրանուն բերդերի պատմական հռչակը: Եվ շաբաթների ու ամիսների ընթացքում պատճառ է դարձել ավելի շատ զոհերի, քան ցարական բանտը տարիների ու տասնյակ տարիների ընթացքում: Եվ բուլշևիկյան բանտից հրաշքով ազատված ամեն մի մարտիկ կամ գաղափարախոս բանտարկյալի իր հիշողությունները որպես թանկագին նյութեր պիտի մատակարարեն այն հասարակագետին ու պատմագրին, որոնք շնորհակալ կոչում պիտի ստանձնեն՝ ավերումների տխուր փորձության ծանր խաչը դժբախտ երկրի ու ժողովրդի վիճակը ուսումնասիրելու:

Ահա այսպիսի նկատառումներով հրապարակի վրա է դրել հրապարակախոսը իր բանտային խոհերն ու հուշերը:

Եվ այսպես, մայիսյան ապստամբության պարտությունից հետո Հայաստանի բուլշևիկյան կազմակերպությունները, շարունակելով ղեկավարել Հայաստանի աշխատավորների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար, անցան ընդհատակ: Ռ-Կ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեին ուղղված զեկուցման մեջ ասված էր. «Կուսակցական աշխատանքն այստեղ չի ընդհատվել. ընկերներին ամեն օր հրահանգներ են տրվում. 10 օր առաջ հրավիրված էր քաղաքային արտակարգ խորհուրդ, որտեղ լավեց Արմենկոմի զեկուցումը: Ընտրվեց քաղաքային բյուրո, որի վրա ժամանակավորապես դրված է քաղաքային կոմիտեի ֆունկցիաները: Գրեթե ամեն օր բյուրոն նիստեր է ունենում, կազմակերպված է «Կարմիր խաչը», որը կապված է կալանավորների հետ...»:

Չգտելով կանխել աշխատավորների մոտալուտ ապստամբությունը՝ դաշնակցական կառավարությունը դիմում է արտակարգ միջոցների. հիմնում է զինվորական դատարաններ, բանտարկում կոմունիստներին, հեղափոխական բանվորներին և գյուղացիներին, ռեակցիոն տարրերից կազմակերպում է պատժիչ խմբեր և այլն: 1920թ. նոյեմբերի

19-ին Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը դաշնակցական կառավարության նախագահի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարում է, որ Հայաստանի բանտերում գտնվում են մոտ 400 կոմունիստներ:

Դաշնակցական կուսակցության ղեկավարությունը նույնիսկ իր շարքային շատ անդամների մոտ արդեն զրկվել էր հենարանից: Ոչ միայն աշխատավորական լայն մասսաները, այլև բազմաթիվ շարքային դաշնակցականներ երես էին դարձրել իրենց կուսակցությունից: Դաշնակցական կուսակցության քայքայման պրոցեսը սկսվել էր, իհարկե, դրանից շատ առաջ: Ազգայնական ու սոցիալիստական լոգուններով խաբված և դաշնակցական կուսակցության շարքերը մտած բանվորներն ու գյուղացիները, համոզվելով, որ դաշնակցության քաղաքականության էությունը հակաժողովրդական է, սահմանազատվում էին նրանից: 1920 թվականի նոյեմբերի 28-ին Չիչերինին գրած նամակում դաշնակցության կուսակցության քայքայման փաստը նշել է Լեգրանը: «Ես կարծում եմ գրել է նա, - դաշնակցության կուսակցության ներսում խոր խմորումների նշանները առկա են: Պարզորոշ երևում է պառակտման գիծը...»:

Ստեղծված իրադրության մեջ դաշնակցական կառավարությանը ոչինչ չէր մնում անել, բացի Հայաստանում հաղթանակած սովետական իշխանության առջև կապիտուլյացիայի ենթարկվելուց, որը ձևակերպվեց 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Լեգրանի և դաշնակցականների մեջ կնքված համաձայնագրով, որի առաջին կետով դաշնակցականները ընդունում էին Հայաստանի Հեղկոմի ղեկարացիան Հայաստանը Սովետական Սոցիալիստական Հանրապետություն հռչակելու մասին<sup>10</sup>:

Սակայն համաձայնագրի կնքումը չէր նշանակում դաշնակցական կառավարության կողմից կամավոր իշխանության հանձնումը հեղկոմին: Հեղկոմի ղեկարացիայում ասվում էր. «...Իշխանությունը արդեն խլված է դաշնակցությունից ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ, և նրան վերադարձ չկա»: Համաձայնագիրը դաշնակցական կառավարության կապիտուլյացիա էր նշանակում: Դեկտեմբերի 4-ին Հեղկոմի անդամները, ապստամբները և նրանց օգնության եկած սովետական զորամասերը մտնում են Երևան:

Եվ այսպես, 1919 թվականին ավարտելով ցեղասպանության «անկետային ուսումնասիրությունը» և 1920 թվականին հայոց և ռուսաց լեզուներով Թիֆլիսում հրատարակելով «Բագույի մեծ սարսափները»՝ Բախշի Իշխանյանը տեղափոխվում է Երևան: Հարկ է ըմբռնել, որ նա կայուն քաղաքական հայացքների ու սկզբունքների տեր անձնավորություն էր և քննադատում էր ոչ միայն Դաշնակցությանը, այլև իր բազմաթիվ հոդվածներում երիցս կատաղի պայքար էր մղում բուլշևիկների դեմ: Դա

էր պատճառը, որ 1920 թվականի դեկտեմբերին բոլշևիկները առաջին հերթին ձերբակալեցին Բախշուն, ինչի հետևանքով նա մեր պատմության մեջ արժանացավ «առաջին քաղաքանտարկյալ» «պատվավոր» տիտղոսին<sup>12</sup> :

«Ոչ ոք մեզ այնպես չի վնասել և մեր դեմ այնպես չի գործել, ինչպես Իշխանեանը: Նա մեզ ասելի է վնասել, քան ամբողջ դաշնակցությունը. մանաւանդ վերջին ամիսների ընթացքում: Այն ժամանակ, երբ հայ զորքը լքում էր ճակատը (խօսքը վերաբերում է հայ-տաճկական պատերազմին), երբ թիկունքը թուլանում էր, և ամբողջ ժողովուրդը երես էր դարձնում դաշնակցական կառավարությունից, իսկ վերջինիս կղզիացումն ու թուլացումը կարող էր դիրացնել և արագացնել մեր՝ բոլշևիկներիս, մութքը Հայաստան, ահա այդ կրիտիկական վայրկյաններին Իշխանեանի յաճախակի երան գալը՝ իր դասախօսություններով ու ճառերով նորից սթափեցնում ու ոգևորեցնում էր ժողովրդին, ամրապնդում նախկին իշխանութեան դիրքը և դժարացնում մեր գործը Հայաստանում»<sup>13</sup> :

Բախշուն մեկնաբանությամբ Հայաստանի այս կամ այն իշխանությունը՝ լինի այն բաղկացած դաշնակցականներից, մի այլ կուսակցությունից, կամ լինի կոալիցիոն նրա կազմը, միևնույն է, սուկ ժամանակավոր մի երևույթ էր՝ պայմանավորված գործող քաղաքական ուժերի փոխհարաբերությամբ: Հիմնականը ինքը պետականությունն է, էականն ու տևականը ինքը ընդհանուր հայրենիքն է: Երբ արտաքուստ սպառնում է որևիցե մահացու վտանգ՝ ուղղված ընդհանուրի հայրենիքի և պետականության դեմ, ամեն մի ճշմարիտ հայրենասեր, որ բանակից ուզում է խուսափել, պետք է խորապես գիտակցի, որ արտաքին թշնամին չի եկել միայն տվյալ պահին տիրող իշխանության դեմ կռվելու, նրա հետ հաշիվներ մաքրելու: Այդպիսի արտաքին թշնամի չի եղել, և ոչ էլ երբևէ մղվել է պատերազմ այդօրինակ շարժառիթներով: Մուստաֆա Քեմալ փաշայի կառավարությունը՝ բոլշևիկների այդ հոգեհարազատ դաշնակիցը, չի հարձակվել Հայաստանի դեմ միայն դաշնակցական իշխանության հետ հաշիվներ մաքրելու, նրան թուլացնել ու կամ ձգելու համար, ինչպես բոլշևիկները խարդախությամբ ու ցինիզմով խաբում, մոլորեցնում էին միամիտներին և ապուշներին, այլ ապստամբ թուրքիայի նպարակն էր հարվածել, թուլացնել և իր առաջ ծնկի բերել Հայաստանի Հանրապետությունը, փոշիացնել հայ ժողովրդի ազատագրական ձգտումները, այսինքն՝ պատճառել Հայաստանին այն, ինչ ցանկացել ու ծրագրել էին բոլշևիկները՝ ինքնորոշված հայ ժողովրդի և անկախ Հայաստանի ամենառոտիներին թշնամիները: Եվ բոլշևիկների համաձայնությամբ ու ոգևորիչ ուղեկցությամբ մինչև Ալեքսանդրապոլ մուտք գործած թուրքական գամփունները ծծեցին ոչ թե դաշնակցականների, այլ

առհասարակ հայ ժողովրդի արյունը. կողոպտեցին, թալանեցին, ավերեցին հայոց երկիրը, կոտորեցին հայ ժողովրդին, տարագրեցին նրա լավագույն զավակներին, հափշտակեցին նրա ամբողջ ինչքը: Եթե այդպիսի թշնամիների դեմ կռվելու համար ժողովրդին սթափեցնելն ու ոգևորելը ճառերով ու դասախոսություններով նշանակում է վնասակար գործունեություն ցույց տալ բոլշևիկների դեմ (իր իսկ բոլշևիկի խոստովանությամբ), ապա հենց այդ փաստը վկայում է, թե որ աստիճան իրար տրամագծորեն հակասում են հայ ժողովրդի կենսական շահերը և օտար բռնի ուժերի կամակատար գործիքներ դարձած հայ բոլշևիկյան շայկայի տիրապետության ձգտումները :

Խաղաղությամբ Հայաստանը «նվաճած» պարոնները չէին գտնում երկրի ներսում իրենց հանդեպ կանգնած որեէ թշնամի՝ հանձինս այս կամ այն քաղաքական հոսանքի: Այս փաստը Բախշուն շատ կարևորել և ընդգծել է:

Փոխանակ գործի լծելու հայ մտավորականությունը, օգտագործելու նրա կուլտուրական և մասնագիտական ուժերը՝ ընդհակառակը, վաճում էին իրենցից բռնության և արյունարբու քաղաքականության սիրահարները և բոլորին թշնամացնում իրենց դեմ:

Երկու ամիս նա անցկացրեց Չեկայի բանտում, ենթարկվեց բազմաթիվ հարցաքննությունների: Իր հուշագրությունում նա ներկայացնում է բազմաթիվ սարսազդու տեսարաններ, նկարագրում զանգվածային գնդակահարության մի ողբալի պատկեր<sup>15</sup> :

Բ. Իշխանյանի ձերբակալության ձևական կողմերից մեկն էլ այն էր, որ նրան Խորհրդային Ադրբեջանը պահանջում էր Բաքու վերադարձնել: Դե, իհարկե, բոլշևիկ դարձած ադրբեջանցի ցեղասպանները Բ. Իշխանյանին չէին կարող ներել «Բագույի մեծ սարսափները» և պահանջում էին Բաքու ուղարկել, որպեսզի վկային ոչնչացնեն (Ի դեպ, հայ բոլշևիկները իրենց ադրբեջանցի եղբայրներին հանձնեցին 2000, այլ տվյալներով՝ 1200 հայ սպա ու զինվոր): ՄԴԲՀ կուսակցությունը բողոքի ալիք բարձրացրեց՝ ի պաշտպանություն իր կենտրոնի անդամի, բայց, միևնույն է, Բ. Իշխանյանին կողարկելին Բաքու, եթե նրան ու հազարավոր այլ մարդկանց չփրկեր Փետրվարյան ապստամբությունը<sup>16</sup> :

- <sup>1</sup> Տե՛ս Ալոյան Լ.: Հետաքրքրույան շրջանի «Մշակի» նշանավոր հրապարակախոսներ: Եր., 2007, էջ 75
- <sup>2</sup> Տե՛ս Իշխանյան Բ.: Երկու ամիս բոլշևիկների բանտում: Գահիրե, 1924
- <sup>3</sup> Տե՛ս Գաղապան Խ.: Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920թ.): Եր., 2006, էջ 176
- <sup>4</sup> Տե՛ս Գաղապան Խ.: Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920թ.): Եր., 2006, էջ 176
- <sup>5</sup> Տե՛ս Իշխանյան Բ.: Երկու ամիս բոլշևիկների բանտում: Գահիրե, 1924: էջ 2-4
- <sup>6</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն: Եր., 1967, էջ 112
- <sup>7</sup> Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռոյությունի և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում»
- <sup>8</sup> Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 214, ց. 1, գ. 51, ք. 332-336
- <sup>9</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն: Եր., 1967, էջ 116-117
- <sup>10</sup> Տե՛ս նույն տեղ., էջ 120
- <sup>11</sup> Տե՛ս նույն տեղ., էջ 121
- <sup>12</sup> Տե՛ս Գաղապան Խ.: Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920թ.): Եր., 2006
- <sup>13</sup> Տե՛ս Իշխանյան Բ.: Երկու ամիս բոլշևիկների բանտում: Գահիրե, 1924: էջ 24
- <sup>14</sup> Տե՛ս նույն տեղ., էջ 25
- <sup>15</sup> Տե՛ս Գաղապան Խ.: Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920թ.): Եր., 2006
- <sup>16</sup> Տե՛ս Գաղապան Խ.: Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920թ.): Եր., 2006

## РЕЗЮМЕ

*Бахши Ишханян два месяца в тюрьме большевиков*

Оратор Бахши Ишханян в тяжелых политических условиях арестовывается, вследствие чего он проводит два месяца в тюрьме большевиков. Во время проведения в неволе, он пишет труд “Два месяца в тюрьме большевиков”, который считается мемуаром месяцев, проведенных в тюрьме. Данный труд, по мнению Бахши, в последующие годы будет представлять большую ценность для изучающих.

За время работы над изучением, его беспокоило то, что он не сможет остаться верным истине, что не будет в состоянии представить себе реальность в своем полном содержании. У него было мнение, что большевистская реальность превышает каждой силы и таланта. Он стремился достичь кикеронского красноречия и идеального уровня пера Золи.

## SUMMARY

*Baxshi Ishxanyan has been in the prison of Bolsheviks for two months*

Publicist Baxshi Ishxanyan was arrested in the difficult political circumstances, as a result of which he spent two months in the Bolsheviks' prison. During the imprisonment he wrote the work “Two months in the prison”, which is considered to be the memorandum during the months of imprisonment. According to Baghshi this work would be valuable for researchers in the future years.

During the study of this research he had concerns that he would not be able to stay close to the reality, he was also afraid that he would be unable to imagine the reality with its full content and boundaries. He was of the opinion that Bolshevik reality exceeds any descriptive power and talent. He strived to reach Kikeron's eloquence and Zola's pen perfect level .

**ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի իրավաբան,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

**ՇՈՒԿԱՅԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Շուկաների սահմանման անհրաժեշտությունը ԵՄ-ի մրցակցային քաղաքականության մի մասն է կազմել ԵՄ-ի սկզբնավորումից սկսած. Մաքիո Մոնտին՝ երբեմնի Մրցակցային հանձնակատարը, շուկայի սահմանումը համարում է որպես ԵՄ-ի մրցակցային քաղաքականության հիմնաքար[1]: Շուկայի սահմանումը խաղում է ֆունդամենտալ դեր Եվրոպական համայնքի օրենսդրության ներքո մրցակցության վերաբերյալ վերլուծություններ կատարելիս: Շուկայի սահմանումը հիմնական գործիքներից մեկն է, որը հնարավորություն է տալիս որոշելու տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցության սահմանները և վերլուծելու մրցակցային ոլորտի վրա նրանց վարքագծի գործնական հետևանքները:

139/2004 կանոնակարգի տեսանկյունից համապատասխան շուկայի պատշաճ սահմանումն անհրաժեշտ նախապայման է մրցակցության վրա համակենտրոնացման հետևանքի ցանկացած գնահատման համար:

Համակենտրոնացման համատեղելիությունն ընդհանուր շուկայի հետ ապացուցելու համար Հանձնաժողովի առաջին խնդիրը պետք է լինի որոշել հակամենաշնորհային շուկաները, որոնց վրա համակենտրոնացումը հիմնվում է: Այդպիսի շուկաներն ընդունված է անվանել «համապատասխան շուկաներ» (relevant markets): Kali und Salz[2] գործում Եվրոպական դատարանը նշում է, որ համապատասխան շուկայի ճշգրիտ սահմանումն անհրաժեշտ նախապայման է համակենտրոնացման արդյունքի գնահատման համար: Ըստ էության, 139/2004 կանոնակարգի վերլուծությունը հիմնվում է շուկայի մասնաբաժինների վրա, ինչն իր հերթին կախված է համապատասխան շուկայի սահմանումից:

Շուկայի սահմանման հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով Հանձնաժողովն ընդունել է «Համայնքի մրցակցային իրավունքի նպատակների համար համապատասխան շուկայի սահմանման մասին պարզաբանում» (այսուհետ՝ շուկայի սահմանման մասին պարզաբանում)[3]: Շուկայի սահմանման մասին պարզաբանումը տալիս է ընդարձակ ուղեցույց, թե ինչպես շուկաները պետք է որոշվեն ԵՄ-ի մրցակցային իրավունքի

նպատակների համար և ձգտում է ապահովել հետևողական մոտեցում ապրանքային շուկայի սահմանման համար: Շուկայի սահմանման մասին պարզաբանումն արտացոլում է Հանձնաժողովի և ԵՄ-ի դատարանների հաստատած պրակտիկան ապրանքային շուկայի սահմանման հարցում:

Շուկայի սահմանման մասին պարզաբանումը հիմնված է դասական «սահմանափակումների» մոտեցման վրա այն առումով, որ այն ճանաչում է, որ շուկայի ազդեցության իրականացումը կարող է սահմանափակվել պահանջարկի փոխադարձ փոխարինելիությամբ, առաջարկի փոխադարձ փոխարինելիությամբ և հնարավոր մրցակցությամբ: Այս երեք սահմանափակումներից միայն պահանջարկի և առաջարկի փոխադարձ փոխարինելիությունն են դեր խաղում մրցակցային իրավունքի նպատակների համար համապատասխան շուկայի սահմանները գնահատելիս, ընդ որում՝ պահանջարկի փոխադարձ փոխարինելիությունը համապատասխան շուկայի սահմանման հարցում գլխավոր գործիք է, մինչդեռ առաջարկի փոխադարձ փոխարինելիությունը կիրառելի է միայն սահմանափակ հանգամանքներում: Երրորդ սահմանափակումը՝ հնարավոր մրցակցությունը, սովորաբար հաշվի չի առնվում, երբ սահմանվում են համապատասխան շուկաները, սակայն հնարավոր մրցակցության առկայության կամ բացակայության փաստը կիրառելի կլինի համապատասխան շուկայի վրա գործարարության իրական ազդեցությունը գնահատելիս[1]:

Շուկայի սահմանման մասին պարզաբանումը սահմանում է յուրաքանչյուր համապատասխան շուկայի երկու փուլային վերլուծություն: Առաջին՝ անհրաժեշտ է որոշել համապատասխան շուկայի նյութական սահմանները (համապատասխան շուկայի ապրանքատեսակային սահման): Երկրորդ՝ անհրաժեշտ է որոշել համապատասխան շուկայի աշխարհագրական սահմանները (համապատասխան շուկայի աշխարհագրական սահման):

Համաձայն շուկայի սահմանման մասին պարզաբանման՝ համապատասխան ապրանքատեսակային շուկան ներառում է բոլոր այն ապրանքները և կամ ծառայությունները, որոնք հա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մարվում են փոխադարձ փոխարինելի կամ փոխարինելի սպառողի կողմից՝ կապված ապրանքի հատկանիշների, դրանց գնի և օգտագործման նշանակության հետ:

Շուկայի սահմանման մասին պարզաբանումն անդրադառնում է այսպես կոչված «պահանջարկի փոխադարձ փոխարինելիությանը» (ապրանքների միջև եղած փոխադարձ փոխարինելիության աստիճանը ձեռք բերողի տեսանկյունից)՝ որպես համապատասխան ապրանքատեսակային շուկայի սահմանման ելակետ: Հատկապես սա ենթադրում է, որ եթե ձեռք բերողը կհամարի երկու ապրանքներ փոխարինելի և կկարողանա հեշտությամբ անցնել դրանցից մեկին, ապա դրանք, հավանական է, կազմում են նույն ապրանքատեսակային շուկայի մասը: Ի հավելումն պահանջարկի փոխադարձ փոխարինելիությանը՝ շուկայի սահմանման մասին պարզաբանումը համապատասխան ապրանքատեսակային շուկան սահմանելիս հաշվի է առնում նաև այսպես կոչված ապրանքների միջև «առաջարկի փոխադարձ փոխարինելիությունը» (ապրանքների միջև եղած փոխադարձ փոխարինելիության աստիճանն իրացնողի տեսանկյունից): Սա ենթադրում է, որ եթե իրացնողը կարող է արագորեն և հեշտությամբ անցում կատարել երկու տարբեր ապրանքների արտադրության մեջ, ապա դրանք, հավանական է, կազմում են նույն ապրանքատեսակային շուկայի մասը: Չնայած պահանջարկի փոխադարձ փոխարինելիությունը հանդիսանում է առաջնային ստուգումը շուկայի սահմանման մասին պարզաբանման ներքո, առաջարկի փոխադարձ փոխարինելիությունը սովորաբար հաշվի է առնվում այն դեպքերում, երբ դրա ազդեցությունն այնքան արդյունավետ և ակնհայտ է, որ այն կարող է համարվել պահանջարկի փոխադարձ փոխարինելիության ազդեցությանը համարժեք: Հանձնաժողովը հետազայում ընդգծեց պահանջարկի փոխադարձ փոխարինելիության կարևորությունը հորիզոնական համակենտրոնացումների գնահատման պարզաբանման մեջ[4], ուր, մասնավորապես, նշվում է, որ որոշ շուկաներում հարաբերականորեն հեշտ և ոչ ծախսատար է ակտիվ գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների համար իրենց արտադրանքը տեղափոխել այլ վայր կամ մեծացնել իրենց արտադրական պորտֆելը: Հանձնաժողովն այդ դեպքերում ուսումնասիրում է արտադրանքի տեղափոխման հնարավորությունը, արտադրանքի ընդլայնման հնարավորությունը կամ դրանց հետևանքով գների բարձրացման հնարավորությունը: Սակայն, պետք է նշենք, որ արտադրանքի տեղափոխման հետ կապված ռիսկերը և ծախսերը հաճախ բերում են նվազ շահութաբերության:

Այնուամենայնիվ, այս ամենը ցույց է տալիս, որ Հանձնաժողովը բավականաչափ ուշադրու-

թյուն է դարձնում առաջարկի փոխադարձ փոխարինելիությանը համապատասխան շուկաները սահմանելիս:

Պահանջարկի փոխադարձ փոխարինելիության գնահատումն այն ապրանքների խմբի գնահատումն է, որոնք փոխարինելի են ձեռք բերողի համար: Ապրանքների փոխադարձ փոխարինելիությունը պահանջարկի տեսանկյունից գնահատելիս հանձնաժողովը հիմնականում ուսումնասիրում է երկու հանգամանք.

- ապրանքային հատկանիշները (գործածական նշանակությունը): Ապրանքները, որոնք նույնանման հատկանիշներ ունեն կամ պատասխանատու են ձեռք բերողի նույն կարիքների համար, հավանական է, որ համարվեն միևնույն ապրանքային շուկային պատկանող: Պետք է նշել, սակայն, որ շուկայի սահմանման մասին պարզաբանումը հստակորեն նշում է, որ ապրանքների միջև ապրանքային հատկանիշների նմանությունը կամ գործածական փոխադարձ փոխարինելիությունն իրենցով դեռ բավարար չեն շուկայի ապրանքատեսակային սահմանները որոշելիս:

Ապրանքների գործածական նշանակության հանգամանքը քննվեց Aerospatiale-Alenia de Havilland[5] գործում, որում Հանձնաժողովը որոշեց, որ փոխադրող տուրբո-պտուտակային ինքնաթիռ, որն ունի ավելի քան 20 նստատեղ, գրավել է երեք տարբեր շուկաներ. օդանավ 20-39 նստատեղով, օդանավ՝ 40-59 նստատեղով և օդանավ՝ 60 կամ ավելի նստատեղով: Օդանավի նստատեղերի տարողունակության տարբերությունը դիտվում էր սկզբունքային, որովհետև դա որոշում է ճանապարհների տեսակը, որոնցով օդանավը կարող էր օգտագործվել:

- գինը: Համաձայն շուկայի սահմանման մասին պարզաբանման՝ գինը ապրանքատեսակային շուկայի սահմանները որոշելիս գլխավոր գործիք է:

Գնային տարբերությունների համեմատումը վառ արտահայտվել է Nestle/Perrier[6] գործում, որում Հանձնաժողովը որոշեց, որ շաղկված ջրերը կազմում են առանձին ապրանքատեսակային շուկա ոչ ոգելից խմիչքների մեջ՝ ընդգծելով այս երկու արտադրատեսակների միջև առկա գնային տարբերությունը:

Սիևնույն ժամանակ, SmithKlein Beechain /Block Drug[7] գործում Հանձնաժողովը գտավ, որ գոյություն ունի ատամի մածուկի մեկ ընդհանուր շուկա, չնայած դրանց գները նկատելիորեն տարբեր էին: Հանձնաժողովն իր այս որոշումը հիմնեց այն փաստի վրա, որ հաճախորդների մեջ կա գնի հանդեպ ցածր զգայունություն, և վերջիններս ատամի մածուկի ընտրությունը գլխավորապես կատարում են՝ ելնելով այլ գործոններից, քան գինն է:

www.lawinstitute.am

Շուկայի սահմանման մասին պարզաբանումը սահմանում է այսպես կոչված SSNIP (Small but Significant Non-transitory Increase in Price (փոքր, բայց ոչ անցողիկ գնի բարձրացում) թեստի կիրառումը: SSNIP թեստը կիրառվում է պահանջարկի փոխադարձ փոխարինելիության ծավալի որոշման համար, որի ժամանակ ստուգվում է, թե արդյոք գնի ոչ մեծ (5-10%), սակայն կայուն բարձրացման ժամանակ հաճախորդները համապատասխան ժամանակահատվածում հնարավոր է մի տեսակի ապրանքից անցում կատարեն մեկ այլ տեսակի ապրանքի: Օրինակ, Ա տեսակի ապրանքի գինը կայուն կերպով 5%-ով ավելացնելու դեպքում ի՞նչ ծավալով ձեռք բերողները կանցնեն Ա ապրանքից Բ ապրանքին: Եթե ձեռքբերողների՝ Ա ապրանքից Բ ապրանքի անցման արդյունքում Ա ապրանքի գնի բարձրացումն անարդյունավետ կդառնա՝ կապված ձեռք բերողների կորստի հետ, ապա SSNIP թեստի տեսանկյունից Ա և Բ ապրանքները կհամարվեն նույն շուկային պատկանող:

Հանձնաժողովը պահանջարկի կողմի հանգամանքները քննելիս ուսումնասիրում է նաև մի շարք այլ հանգամանքներ, ինչպիսիք են շուկայի բաշխվածությունը, մատակարարման ձեռքը, հիմնական և փոխարինելի ապրանքները և այլն:

Համաձայն շուկայի սահմանման մասին պարզաբանման՝ առաջարկի փոխադարձ փոխարինելիությունը կարող է հաշվի առնվել, երբ դրա ազդեցությունն արդյունավետության տեսանկյունից համաչափ է պահանջարկի փոխադարձ փոխարինելիությանը: Առաջարկի փոխադարձ փոխարինելիությունը նշանակում է գործարարի հնարավորությունն առանց էական ծախսերի և բավականաչափ արագ անցում կատարելն այլ ապրանքների արտադրության՝ ի պատասխան շուկայում այդ ապրանքների գնի փոքր, բայց կայուն ավելացման: Այսպիսով, առաջարկի փոխադարձ փոխարինելիության վերլուծության ժամանակ SSNIP թեստը կկիրառվի Բ ապրանքի այն արտադրողների ծավալը չափելու համար, որոնք կանցնեն Ա ապրանք արտադրելու՝ ի պատասխան Ա ապրանքի 5-10% գնի կայուն բարձրացման:

Շուկայի սահմանման պարզաբանման մեջ Հանձնաժողովը նշում է փոխադարձ փոխարինելիության երրորդ տեսակը, այսպես կոչված, «շրթայի փոխադարձ փոխարինելիությունը»: Ըստ էության, շրթայի փոխադարձ փոխարինելիությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ չնայած Ա և Գ ապրանքներն ուղղակիորեն փոխադարձ փոխարինելի չեն, սակայն Ա ապրանքը փոխադարձ փոխարինելի է Բ ապրանքով, Բ-ն՝ Գ ապրանքով, Գ-ն՝ Դ ապրանքով, և այդ պատճառով Ա և Դ ապրանքները կլինեն նույն շուկայում, քանի որ նրանց գները կարող են սահմանափակվել շրթայում առկա մյուս

ապրանքների մրցակցությամբ: Որպեսզի կանխարգելվի համապատասխան շուկայի չափից դուրս ընդարձակումը, այստեղ պետք է ակնհայտ լինի շրթայի ներսում փոխադարձ կախումը, և հարաբերական ապրանքների փոխադարձ փոխարինելիությունը պետք է լինի բավականաչափ ուժեղ: Այս սկզբունքը, օրինակ, կիրառվել է Carnival Corporation/ P&O Princess[8] գործում:

Բացի նշված հանգամանքներից՝ ապրանքատեսակային շուկայի գնահատման ժամանակ Հանձնաժողովը կարող է հենվել տարբեր ապացույցների վրա, օրինակ՝ ոչ հեռավոր անցյալում եղած փորձի, ձեռք բերողների և իրացնողների տեսակետների ու ցանկությունների ուսումնասիրության, այլ ապրանքներին անցնելու հետ կապված խոչընդոտների վրա, ինչպիսիք են պետական միջամտությունները, հատուկ նյութական միջոցների ներգրավման անհրաժեշտությունը կամ առկա միջոցների կորուստը և այլն:

Շուկայի սահմանման սկզբունքները վերաբերում են ապրանքների և ծառայությունների շուկաներին: Վերջին ժամանակներում համակենտրոնացումների վերաբերյալ գործեր քննելիս Հանձնաժողովը լայնորեն հակադրվել է նոր զարգացող շուկաներին, ինչպիսիք են, օրինակ, էլեկտրոնիկայի և ինտերնետային ծառայությունների շուկաները[9, p 788]: Օրինակ՝ Bertelsmann/HAVAS/BOL[10] գործում Հանձնաժողովը սահմանեց սպառողական գրքերի հեռավար վաճառքի ապրանքատեսակային շուկան, որը ներառեց փոստով պատվերը, ինտերնետով վաճառքը և այլն՝ ի հակադրումն համակենտրոնացման մեջ ներգրավված կողմերի կողմից առաջարկված տարբերակի, որոնք օնլայն ռեժիմով վաճառքն առանձնացնում էին որպես առանձին ապրանքատեսակային շուկա:

Համաձայն շուկայի սահմանման մասին պարզաբանման՝ համապատասխան աշխարհագրական շուկան ընդգրկում է այն տարածքը, որում տնտեսվարող սուբյեկտները ներառված են ապրանքների կամ ծառայությունների առաջարկի և պահանջարկի մեջ, որում մրցակցության պայմանները բավականաչափ միատարր են, և որը կարող է տարբերակվել հարևան տարածքներից, որովհետև մրցակցության պայմաններն էականորեն տարբեր են այդ տարածքներում: Աշխարհագրական շուկայի սահմանման նպատակը կայանում է տարածքի կամ տարածքների առանձնացումը, որտեղ համակենտրոնացման մեջ ներգրավված տնտեսվարող սուբյեկտները կհանդիպեն իրական մրցակցության՝ համապատասխան ապրանքներ մատակարարողների կամ ծառայություններ մատուցողների կողմից:

Մրցակցության պայմանները համապատասխան աշխարհագրական շուկայում միասեռ են, բայց ոչ անպայմանորեն կատարելապես միա-



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տարր: Աշխարհագրական ապրանքային շուկայի սահմանների որոշման գործընթացն սկզբունքորեն ղեկավարվում է նույն գծերով, ինչ ապրանքատեսակային ապրանքային շուկայի սահմանափակումների որոշումը, այսինքն՝ հաշվի առնելով պահանջարկի փոխադարձ փոխարինելիությունը և առաջարկի փոխադարձ փոխարինելիությունը և դրանց հետ կապված հարաբերական գնի բարձրացման ստուգումը SSNIP թեստին համապատասխան:

Ինչպես համապատասխան շուկայի ապրանքատեսակային սահմանը որոշելիս, այնպես էլ համապատասխան շուկայի աշխարհագրական սահմանները որոշելիս Հանձնաժողովը կենտրոնանում է պահանջարկի փոխադարձ փոխարինելիության վրա: Այսինքն՝ համապատասխան շուկայի աշխարհագրական սահմանը որոշելիս ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքի վրա, թե արդյոք ի պատասխան փոքր, սակայն գնի հարաբերական կայուն բարձրացմանը, ձեռք բերողները կանցնեն այդ ապրանքները ձեռք բերելու մեկ այլ տեղից այն ծավալով, որ բարձրացված գինը դարձնեն անշահութաբեր: Համապատասխան շուկայի աշխարհագրական սահմանը որոշելիս ևս կարող է ուշադրություն դարձվել առաջարկի փոխադարձ փոխարինելիության վրա, եթե վերջինիս ազդեցությունն այնքան մեծ է, որ կարող է համարվել համարժեք պահանջարկի փոխադարձ փոխարինելիությանը: Առաջարկի փոխադարձ փոխարինելիության գնահատումն ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը որոշելիս կենտրոնանում է այն հանգամանքի վրա, թե արդյոք փոքր, բայց գնի հարաբերական կայուն բարձրացումը Ա տարածքում կհանգեցնի նրան, որ Բ տարածքի իրացնողները կմատակարարեն ապրանքներ Ա տարածքի համար այն ծավալով, որ բարձրացված գինը դառնա անշահութաբեր:

Շուկայի սահմանման մասին պարզաբանումը սահմանում է, որ Հանձնաժողովն աշխարհագրական ապրանքային շուկայի գնահատման ժամանակ կարող է հենվել տարբեր հանգամանքների վրա, ինչպիսիք են անցյալում գնի բարձրացման արդյունքում այլ տարածքների պատվերների իրականացման հանգամանքները, պահանջարկի հիմնական հատկանիշները կամ բնութագրական կողմերը, առևտրային հոսքերը, այլ տարածքներում գտնվող տնտեսվարող սուբյեկտների կողմից նոր աշխարհագրական շուկա անցման հետ կապված ծախսերը և այլ բարդություններ, մեկ տարածքից մեկ այլ տարածք ապրանքների բեռնափոխադրման ծախսերը, պետական սահմանափակումները, տեխնիկական և այլ կարգավորումներ պարունակող պահանջները, իրավական մենաշնորհները:

Շուկայի սահմանման մասին պարզաբան-

ման մոտեցումն ապրանքային շուկայի սահմանման առումով թողնում է շատ հայեցողության տեղեր: Դժվար է կանխատեսել, թե կոնկրետ գործում Հանձնաժողովն ինչպես է որոշելու ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները: Դա նշանակում է, որ գործարարների համար էլ ավելի դժվար է համապատասխան շուկաների վերաբերյալ եզրակացություններ կայացնելը: Ճիշտ է, շուկայի սահմանման մասին պարզաբանումը հստակ սահմանում է այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնել շուկայի սահմանները որոշելիս, սակայն այն չի սահմանում այդ հանգամանքների միջև հիերարխիան: Այսինքն՝ ամեն անգամ այս կամ այն հանգամանքի կիրառումը կախված է կոնկրետ գործից: Պրակտիկայում այն ուղիները, որոնցով շուկաները վերջին հաշվով սահմանվում են, կախված է լայն առումով ոչ թե մանրամասն և պրոֆեսիոնալ տնտեսական վերլուծությունից, որի համար սովորաբար չկա բավարար ժամանակ, այլ հիմնված նախնական տեղեկատվության վրա, որը հասանելի է Հանձնաժողովին կամ տրամադրվում է շահագրգիռ բիզնեսների կողմից կամ երրորդ անձանց կողմից (մասնավորապես հաճախորդները և միաձուլվող կողմերի մրցակիցները): Իհարկե, կոնկրետ գործի ուսումնասիրման համար Հանձնաժողովն ունի լայն իրավասություններ, մասնավորապես այն կարող է կապվել համապատասխան մասնագիտացված ասոցիացիաների հետ, պահանջել լրացուցիչ տեղեկատվություն ուսումնասիրվող բիզնեսի մասին, ձեռք բերել անհրաժեշտ փաստական ապացույցներ, խորհրդակցել ուսումնասիրվող ընկերությունների կառավարման անձնակազմների հետ, անհրաժեշտության դեպքում, այցելել կամ գնում իրականացնել ուսումնասիրվող բիզնեսի շինություններում և այլն:

Գործնականում Հանձնաժողովը հաճախ խուսափում է համապատասխան շուկայի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց: Հաճախ կարևոր է լինում երկու ապրանքների միևնույն շուկայի պատկանելությունը որոշելը, և հարկ չէ սահմանել համապատասխան շուկայի մեջ մտնող ապրանքների սպառիչ ցանկը: Այդ իսկ պատճառով, եթե որևէ համաձայնագիր, պայմանագիր, գործողություն և այլն չեն առաջացնում մրցակցային խնդիրներ, ապա համապատասխան շուկայի սահմանումը հաճախ մնում է բաց՝ այսպիսով ազատելով ընկերություններին տեղեկատվության տրամադրման բեռից: Հանձնաժողովի կողմից վերջին տարիներին համակենտրոնացումների վերահսկման շրջանակներում իրականացվող համապատասխան շուկաների սահմանման վերաբերյալ որոշումներում գերակշռում են այն որոշումները, որոնցում շուկաների շրջանակը բաց է թողնված:

Այսպիսով, ԵՄ-ում համապատասխան շու-

կայի սահմանները որոշելիս բավական մեծ աշխատանք է կատարվել, սակայն դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, շուկայի սահմանման մասին պարզաբանման մոտեցումն ապրանքային շուկայի սահմանման առումով թողնում է շատ հայեցողության տեղեր և գործնականում բավական դժվար է տնտեսվարող սուբյեկտների համար հասկանալ, թե արդյոք պատկանում են միևնույն ապրանքային շուկային իրենց ապրանքները, թե ոչ, ինչն իր հերթին հանգեցնում է համակենտրոնացման վերաբերյալ չհայտարարագրման կամ ունենում է հակառակ ռեակցիան՝ ավելորդ տուգանքներից խուսափելու համար առանց լուրջ վերլուծություն կատարելու համակենտրոնացման

հայտարարագրման: Պետք է նշենք, որ և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքը բավականաչափ անբարենպաստ են: Մասնավորապես, ավելորդ հայտարարագրման ժամանակ լրացուցիչ աշխատանքներ են առաջանում և՛ Հանձնաժողովի, և՛ տնտեսավարող սուբյեկտի մոտ: Խնդիրն ինչ-որ չափով կարելի է լուծել համապատասխան շուկայի սահմանները որոշելիս Հանձնաժողովի կողմից որոշակի հանգամանքների միջև հիերարխիա սահմանելով: Մասնավորապես առավել կարևոր նշանակություն ունեն ապրանքների գործածական նշանակությունը և զինը:

<sup>1</sup> Եվրոպական միությունում ավտոմոբիլների բաշխման և սպասարկման մասին բացատրական բրոշյուրում (Explanatory Brochure on the Distribution and Servicing of Motor Vehicles in the European Union) Հանձնաժողովը քննարկում է շոթայի փոխադարձ փոխարինելիության կիրառումն ավտոմոբիլների ոլորտում: Հանձնաժողովը դիտարկել է, որ շոթայի փոխադարձ փոխարինելիության սկզբունքի հիման վրա երեք ապրանքատեսակային շուկաներում (փոքր, միջին և մեծ ավտոմոբիլների) կարող է հաստատվել միասնական համապատասխան ապրանքատեսակային շուկա, որը կներառի երեք սեգմենտն էլ, եթե բավարար փոխադարձ փոխարինելիություն կարող է հաստատվել:

Գրականություն

1. Speech by Commissioner Mario Monti “Market definition as a cornerstone of EU Competition Policy”, Workshop on Market Definition - Helsinki Fair Centre, Helsinki, 5 October 2001.
2. KALI und SALZ/MDK /TREUHAND M.308, Official Journal L 186, 1994.
3. Commission Notice on the definition of relevant market for the purposes of Community competition law, OJ, 9.12.97, C 372/5.
4. Guidelines on the assessment of horizontal mergers under the Council Regulation on the control of concentrations between undertakings, OJ C 31, 5 February 2004.
5. Case Aerospatiale/Alenia / De Havilland M.53, OJ 1334/42 1991.
6. Case Nestle/Perrier M.190, OJ 1992 L356/1.
7. Case Smithkline Beecham / Block Drug M.2192, 2001.
8. Case Carnival Corporation / P&O Princess (ii), M.3071, 2003
9. Van Bael & Bellis, Competition Law of the European Community, Kluwer Law International
10. Case Bertelsmann /Havas / Bol M.1459, 1999

РЕЗЮМЕ

*Определение рынка и ее границы в Европейском Союзе*

В статье представляется значимость определения рынка в контексте регулирования концентрации. В работе особое внимание уделяется определению продуктового и географического рынка, применение различных инструментов и критериев в данном процессе. Одновременно представляется ряд существующих проблем при определении соответствующего рынка ЕС и возможные пути их решения. В работе проблема, являющаяся предметом изучения, рассматривается как в теоретическом, так и практическом аспекте.

SUMMARY

*Market definition and its borders in the European Union*

The article introduces significance of the definition of the market in the context of regulation of concentration. The paper pays special attention to the definition of product and geographic market, the use of various tools and criteria in this process. At the same time it is presented a number of problems in determining the relevant market of the EU and their possible solutions. In the work a problem which is the subject of the study is considered as theoretical and practical point of view.

ՄԻՍԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ



**ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԿԱՅՈՒՆ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հազարամյակների ընթացքում միմյանց հերթափոխող քաղաքակրթությունների շարքը, ֆորմացիաների հերթափոխը, գաղափարախոսությունների փոփոխությունները ոչ մի կերպ չեն ազդել պարզ, սովորական մարդկային արժեքների վրա, որոնք գնահատվել են թե՛ այն ժամանակ, թե՛ տիեզերական տեխնոլոգիաների մեր դարում՝ բարության, կարեկցանքի, միմյանց նկատմամբ հարգանքի, այլ կերպ ասած կայուն զարգացման բարոյական հիմքի վրա, առանց որի չկա և առհասարակ չի կարող լինել ապագա: Կայուն զարգացման ծրագրի հիմնական առաքելությունը կայանում է մարդկային կարիքների և ցանկությունների բավարարման, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեջ:

20-րդ դարում երեխաները համաշխարհային հանրության և կոնկրետ պետության կողմից ճանաչվեցին որպես հատուկ պաշտպանության և խնամքի օբյեկտ: Մարդու իրավունքների շարքում երեխայի իրավունքները առանձնացվեցին որպես առանձին կատեգորիա, ինչպես կանանց, փախստականների, հաշմանդամների իրավունքները: Դրա պատճառաբանված հիմնավորումը արդարության սկզբունքն էր, համաձայն որի պետությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի հասարակության խոցելի խավերին, որոնց շարքին են պատկանում նաև երեխաները:

Ինչպես պնդում էր ամերիկացի հեղինակ Հիլդե Բոժեն, յուրաքանչյուր մարդ իր մտավոր և գիտակցական ունակությունների զարգացման համար որոշակի ժամանակահատվածի կարիք ունի, ուստի և իր կյանքի առաջին էտապում գտնվում է հասարակության մեծահասակ անդամների հոգածության ներքո և կախված է նրանցից: Հենց կյանքի այդ էտապն էլ կոչվում է «մանկություն»: Բայց, չնայած այդպիսի կախյալ վիճակին, այնուամենայնիվ երեխայի շահերը պետք է դրվեն մեծահասակների շահերի հետ նույն հարթության վրա: Մեկ այլ ամերիկացի գիտնական՝ Ջոն Ռաուլեն, խոսում է այն մասին, որ հասարակության բոլոր անապահով և անպաշտպան խմբերին պետք է երաշխավորվի կենսական բարիքների պարտադիր մինիմումը: Երեխաները համարվում են այդպիսի խմբերից մեկը: Այս երկու հեղինակներն էլ նույնա-

կարծիք են այն հարցում, որ երեխաները իրենց իրավական կեցության ամրապնդման ու ապահովման գործում պետք է ստանան հասարակության և պետության անհրաժեշտ օգնությունն ու աջակցությունը: Այդ իմաստով երեխայի իրավունքները հանդես են գալիս որպես սուբյեկտիվ իրավունքներ, որոնք տրամադրված են երեխային իր շահերի բավարարման համար և ապահովվում են պետության (համապատասխան մարմինների միջոցով), ծնողների, խնամակալների, հոգաբարձուների և այլ անձանց կողմից: Այստեղ մենք խոսում ենք երեխայի իրավունքների մասին նեղ իմաստով: Ավելի լայն իմաստով երեխայի իրավունքները ի հայտ են գալիս այն դեպքում, երբ մենք դիտարկում ենք դրանք որպես մարդու իրավունքների կարևորագույն փիլիսոփայական կատեգորիա:

Գործնականում երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցի լուծման արդյունավետությունը մեծապես կախված է կայուն զարգացման հայեցակարգում երեխայի իրավական կարգավիճակի տեսության հիմնավորումից, որի առաջնակարգ խնդիրներից մեկն է ինչպես այժմ ապրող երեխայի կարգավիճակի բարելավումը, այնպես էլ դեռևս չծնված երեխաների համար կենսական միջավայրի պահպանումը: Ներկայումս շատ պետությունների համար հիմնական խնդիրներից մեկը կայուն զարգացման հայեցակարգի կողմից ներմուծվող նոր քաղաքակրթության պարադիգմայի սկզբունքային տեսական ընկալումն է: Չափազանցություն չի համարվի, եթե ասենք, որ կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում երեխայի իրավունքների նոր տեսության մշակումը համարվում է իրավաբանական գիտության կարևորագույն խնդիրներից մեկը: Իրոք, եթե կա «երեխայի իրավունքներ» հասկացությունը, ապա այն չի կարող դիտարկվել առանց կայուն զարգացման հայեցակարգի հետ կապի: Դա բացատրվում է նրանով, որ մերօրյա երեխան է համարվում ներկայիս սերնդի ներկայացուցիչը, որը դեռևս ինքնուրույն որոշումներ չի կայացնում, ինչպես նաև նրանով, որ երեխայի իրավական սոցիալականացումը այսօր պետք է իրականացվի նոր արժեքների գնահատմամբ, որոնցից շատերը պարունակում է կայուն զարգացման հայեցակարգը:

www.lawinstitute.am

Կայուն զարգացման կոնցեպցիան, որի դրույթների մեջ օրգանապես առկա են նորմեր երեխայի իրավունքների մասին, թույլ է տալիս ամրապնդել այդ համոզմունքը՝ ձևավորելով երեխայի իրավունքների նոր գիտական-տեսական հիմք:

Կայուն զարգացման հայեցակարգում ոչ միայն հիմնավորվում է երեխաների նկատմամբ հատուկ խնամքի և հոգածության պահանջը, այլ հենց իրենք երեխաները հայտարարվում են որպես կայուն զարգացման անցման գործընթացի գլխավոր մասնակիցներ, վարքագծի մոդելների փոփոխման ուղղորդողներ:

Այսպես, իրենց որոշ դրույթներում երեխաների իրավունքներին անդրադարձել են կայուն զարգացման հայեցակարգը ամրագրող մի շարք հիմնարար փաստաթղթեր, ինչպես օրինակ 21-րդ դարի Օրակարգը և Յոհաննեսբուրգյան համաշխարհային գազաթափողովի որոշումները:

Վերոհիշյալ փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպիսի նոր գաղափարներ ու մտեցումներ է առաջադրում կայուն զարգացման հայեցակարգը երեխայի իրավունքների առնչությամբ:

21-րդ դարի Օրակարգում որոշակիացվել են երեխայի իրավունքների ըստ արժանավույն պաշտպանությանն ուղղված միջոցառումները և նպատակները, որոնց թվում են շրջակա միջավայրի պաշտպանությունը, առողջապահությունը, կրթությունը, աղքատության տեղեկանքների նվազեցումը և այլն: Վերոհիշյալ փաստաթղթում երեխայի մշակութային իրավունքների շարքում կրթության կարևորումը պայմանավորված է նրանով, որ այն համարվում է ինչպես մանկության, այնպես էլ սահմանադրական պետության ռազմավարության բաղկացուցիչ մասը: Ակնհայտ է անչափահասների կրթության ապահովման և պետության սահմանադրական հիմքերի կայունացման ու երկարակեցության փոխադարձ կապը: Երեխայի կրթությունը առաջնակարգ նշանակություն ունի նրա սոցիալիզացիայի համար: Վերջինս իրենից ներկայացնում է համընդհանուր գործընթաց, որի շնորհիվ երեխան դառնում է սոցիալական խմբի՝ ընտանիքի, հասարակության անդամ: Սոցիալիզացիան նաև կոնկրետ սոցիալական խմբի սովորույթների, կենսական արժեքների, դերերի յուրացումն է երեխայի կողմից: Այդ գործընթացը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: Ուստի, երեխայի ճիշտ ձևավորման համար պետք է նրան կրթել դեռևս մանկուց, որպեսզի նա օբյեկտիվ գիտելիքներ ստանա իրեն շրջապատող աշխարհի մասին:

21-րդ դարի օրակարգում անդրադարձ է կատարվել նաև երեխաների առողջության պահպանման և ամրապնդման հարցերին: Այստեղ նշվում է, որ տարեկան առնվազն 15 մլն. երեխա է մահանում անկայուն զարգացման գործոնի պատ-

ճառով, որը կարելի էր կանխարգելել: Օրինակ, ծննդաբերական տրավմաներ, ասֆիկսիա, թերսնուցում, ինֆեկցիոն հիվանդություններ և այլն: Այդ կապակցությամբ պետք է մշակվեն նոր ծրագրեր կանանց վերարտադրողական դերի պահպանման, երեխային առավել որակյալ բժշկական ծառայությունների մատուցման, մայրական և մանկական մահացության և հիվանդությունների դեպքերի նվազեցման նպատակներով:

Կայուն զարգացման Յոհաննեսբուրգյան հռչակագիրը ևս պարունակում է դրույթներ, որոնք անմիջականորեն վերաբերում են երեխաների պաշտպանությանը: Առանձնակի ուշադրություն է հատկացված մանկական աշխատանքի բացասական հետևանքներին: Այն պարունակում է մեկնակետ, որի միջոցով կարելի է անդրադառնալ մանկական աշխատանքի ամենավտանգավոր իրավիճակներին և հենակետ, որի միջոցով կարելի է հասնել մանկական աշխատանքի վերացմանն ընդհանրապես: Ստորև բերվում են մանկական աշխատանքի օրինակներ, որոնք սահմանված են որպես դրա վատթարագույն ձևեր.

- ստրկության և դրան նմանվող վերաբերմունքի բոլոր ձևերը, ինչպիսիսն երեխաների վաճառքն ու թրաֆիքինգն են,
- պարտքի դիմաց երեխային տրամադրելը,
- հարկադրված կամ պարտադիր աշխատանքը, ներառյալ զինված հակամարտությունների համար երեխաների հարկադրված կամ պարտադիր հավաքագրելը,
- մարմնավաճառության, պոռնոգրաֆիկ նյութերի կամ ներկայացուցիչների համար երեխայի օգտագործումը, տրամադրումը կամ առաջարկումը;
- անօրինական գործողությունների, մասնավորապես թմրանյութերի արտադրության կամ թրաֆիքինգի մեջ մասնակցության համար երեխայի օգտագործումը, տրամադրումը կամ առաջարկումը:

Հիշատակվում է նաև այն մասին, որ անհրաժեշտ է իրականացնել դպրոցական համակարգի բարելավման համապարփակ ծրագիր՝ նպատակ ունենալով նվազեցնել դպրոցից դուրս մնալու երևույթը, ինչպես նաև խրախուսելու և դյուրացնելու մանուկ աշխատողների վերահիմնագրումը դպրոցական համակարգում:

Այսպիսով, կարելի է հավաստիորեն փաստել, որ հասարակության և սահմանադրական պետության կայուն զարգացման նպատակների իրականացման հաջողությունը լիովին պայմանավորված է երեխաների շահերի լիարժեք ապահովմամբ, ինչը օբյեկտիվ պատճառներով անհնար է առանց նրանց իրավական կարգավիճակի զարգացած մեխանիզմի ապահովման:

Մեր կարծիքով, երեխաների իրավունքների

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տեսության և նոր կոնցեպտուալ գաղափարախոսության ձևավորման էությունը կայանում է հետևյալում: Հայտնի է, որ երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիայում արդեն իսկ ամրագրվել են անչափահասների բավականին լայն իրավունքներ: Սակայն, դրանք ևս ունեն որոշակի վերանայման և վերահիմնաստավորման կարիք նոր պահանջների ձևավորման շրջանակներում: Ուստի, կայուն զարգացմանը վերաբերող ավելի ուշ ընդունված հռչակագրերում և Համաշխարհային գազաթափողովի որոշումներում երեխայի իրավունքները ավելի կոնկրետացվեցին, լրացվեց նրանց բովանդակությունը, որոշակիացվեցին երեխայի իրավունքների իրականացման սկզբունքները: Մշակվեցին նաև երեխայի իրավունքների ապահովման նոր մեխանիզմներ և պաշտպանության նոր ուղիներ:

Այսպես, ներկայումս նկատվում են երեխայի իրավունքների ընդլայնման և նախկինում եղած հնարավորությունների ավելի տարածական մեկնաբանման նոր տենդենցներ: Չ՞է որ երեխայի յուրաքանչյուր իրավունքը միաժամանակ օժտված է տարբեր հատկանիշներով, չափանիշներով և ֆունկցիաներով: Օրինակ՝ կրթության իրավունքը հանդես է գալիս և՛ որպես անհատի սոցիալիզացիայի և զարգացման պահանջ, և՛ որպես անհատի մշակութային զարգացում, և՛ որպես պետության գործունեություն՝ ուղղված իր քաղաքացիների կրթմանը և դաստիարակությանը: Հետևաբար, կրթությունը կարելի է մեկնաբանել և՛ որպես անձնական, և՛ որպես մշակութային, և՛ որպես սոցիալական իրավունք:

Այստեղ կարևոր ենք համարում անդրադառնալ ևս մեկ ոչ պակաս կարևոր դրույթի: Հայտնի է, որ մարդու իրավունքների համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում կյանքի իրավունքը: Նրանով են պայմանավորված մյուս բոլոր իրավունքները: Առանց կյանքի իրավունքի մարդու մյուս իրավունքների մասին խոսքը դառնում է անառարկայական: Այս առումով կարելի է ասել, որ, թեպետ հայկական օրենսդրության մեջ ավելի շատ շոշափվում են երեխաների սոցիալ-տնտեսական իրավունքները, բայց ավելի խորը վերլուծության դեպքում կարելի է տեսնել, որ այդ իրավունքները մեծ ազդեցություն են ունենում անձնական իրավունքների, մասնավորապես՝ կյանքի իրավունքի վրա: Եթե արմատախիլ չարվի աղքատությունը (սոցիալ-տնտեսական իրավունք), ապա կյանքի իրավունքի մասին խոսելը կլինի աննպատակ: Կայուն զարգացման համատեքստում կյանքը և զարգացման առողջ պայմանները լրացվում են նաև մի շարք այլ երանգներով: Մեր օրերում մարդկության կյանքին և առողջությանը ավելի են սպառնում ահաբեկչությունները, լոկալ ռազմական կոնֆլիկտները, Էկոլոգիական աղետները և անկայուն զարգացման այլ գործոնները:

Էկոլոգիական անկայուն քաղաքականության նեգատիվ հետևանքները ազգաբնակչության, առավել ևս երեխաների առողջության վրա կարելի է ապացուցել մի քանի կոնկրետ օրինակներով: Վանաձորի քիմիական գործարանի ցուցադրական շահագործման պատճառով թունավորվեցին Փամբակ, Դեբեդ գետերը, որի արդյունքում իսպառ կենդանագրկվեց Լոռվա գեղատեսիլ ձորով հոսող գետն ու վնասվեց ափամերձ բուսականությունը: Քաջարանում ու Ալավերդիում անդառնալի ավերածություններ են գործում պղնձի Էկոլոգիապես չվերահսկվող արտադրությունները և ազդեցությունն ակնհայտ է ջրային, անտառաբուսական, օդային ավազանների ու ազգաբնակչության վրա: Յավայի վիճակում են գտնվում Դիլիջանի, Սևանի, Շիկահողի ազգային, պետական արգելոցները, Խոջարովի անտառը, Ստեփանավանի դենդրոպարկը:

Այսպիսով, անկայուն քաղաքականության պատճառով մարդու կյանքն ու առողջությունը վտանգվում են դեռևս մասնկուց:

Ամփոփելով երեխայի իրավունքների ոլորտում գիտական-տեսական վերլուծությունները և դիտարկելով երեխաների՝ որպես հատուկ խմբի ճանաչման ու պաշտպանության առաջխաղացման հնարավոր ուղիները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- ինչպես գիտության, այնպես էլ պետության մերօրյա սահմանադրական պահանջները ստիպում են վերանայել անձի իրավական կարգավիճակի տեսական հիմքը, այդ թվում՝ նաև երեխաների իրավական կարգավիճակի առնչությամբ: Հայտնի է, որ երեխայի իրավական կարգավիճակի մասին ավանդական տեսակետը ձևավորվել է հասարակության մեջ նրանց խոցելի և անպաշտպան լինելու հենքի վրա: Պետությունը և հասարակությունը պետք է հոգ տանեն երեխաների մասին՝ առաջնորդվելով արդարության համընդհանուր սկզբունքով,

- երեխաների իրավական կարգավիճակի՝ մեր օրերում առկա գիտական-տեսական բազան համալրվում է հասարակական առաջընթացի նոր գործոնով, որտեղ երեխաների իրավունքների պաշտպանությունը դառնում է պետական քաղաքականության բաղկացուցիչ մասը և, համապատասխանաբար, մարդկային քաղաքակրթության գոյատևման ռազմավարություն: Կայուն զարգացման նպատակին, այն է՝ մարդկության պահպանմանը հասնելը անհնար կդառնա առանց երեխայի իրավունքների ըստ արժանվույն պաշտպանության:

Այսպիսով, 21-րդ դարում երեխաների պաշտպանությունը հիմնվում է ոչ միայն արդարության սկզբունքի, այլ նաև երկրագնդի վրա կյանքի պահպանման ձգտման վրա: Երեխայի իրավունք-

www.lawinstitute.am

մերի ինչպես պետական, այնպես էլ գիտական ձևավորել նոր մոտեցումներ:  
մակարդակներում կարևորումը միայն կարող է հա-  
ղորդել նրանց զարգացման նոր իմպուլս, նոր թափ,

<sup>1</sup> Տե՛ս Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան. Միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետության խնդիրները. Կլոր սեղանի նյութեր. Ազգային Ժողով: 29 հոկտեմբերի 2004թ., Վլադիմիր Պրյախին. գեկույց, Եր., Լուսակն, 2005, էջ 16:

<sup>2</sup> Տե՛ս Woodhead M. The Development and Direction of Childrens Law in America//Childrens Legal Rights Journal, 1997.- Vol.17.էջ 3:

<sup>3</sup> Տե՛ս Rawls J. Theory of Justice// Oxford: University Press, 1997. էջ 52:

<sup>4</sup> Տե՛ս Կայուն զարգացման սահմանադրական երաշխիքները. Ավելի մեծ ազատության պայմաններում, ՄԱԿ-ի ցլխավոր քարտուղար Քոֆի Անանի գեկույցի գործնական ամփոփում, Երևան, 2005, էջ 65:

<sup>5</sup> Տե՛ս Դեն օ Դոնելլ, Երեխաների պաշտպանություն. Չեռնարկ խորհրդարանականների համար, Երևան, 2005, էջ 83:

<sup>6</sup> Տե՛ս Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը, Առաջին ազգային կոնֆերանսի նյութեր, «Հանուն հասարակության կայուն զարգացման ասոցիացիա», Եր., 1997, էջ 127:

<sup>7</sup> Տե՛ս Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան. Միջազգային փորձը ու ՀՀ խնդիրները: Կլոր սեղանի նյութեր: ՀՀ Ազգային ժողով, 29 հոկտեմբերի 2004թ.- Ա. Առաքելյան, Շրջակա միջավայր և անվտանգություն, էջ 90:

## РЕЗЮМЕ

### *Проблема обеспечения прав ребенка в контексте концепции устойчивого развития*

В современных условиях особое внимание к правам и правовому статусу детей обусловлено проблемами глобализации и устойчивого развития. Выделившись в системе прав человека как обособленная категория и рассматриваясь в контексте устойчивого развития права ребенка получают новый импульс развития, оформляя новые подходы. Настоящая статья посвящена приданию важного значения обеспечения прав ребенка в рамках устойчивого развития, как новейшей идеологии, привилегия которой заключается в том, что она имеет тенденцию перехода к такой схеме человеческой жизнедеятельности, которая будет учитывать интересы будущих поколений при удовлетворении интересов нынешних поколений. Это положение принципиально должно быть положено в основу качества деятельности государства и его правовой системы.

Ключевые слова: обеспечение прав ребенка, концепция устойчивого развития, человеческая жизнедеятельность, уязвимая группа, детство, принцип справедливости, государственная политика.

## SUMMARY

### *Child rights provision in the context of sustainable development conception*

Nowadays the special attention to the rights of children and to their legal status is caused by the globalization and sustainable development factors.

Being singled out as a separate category of human rights system and considered in the context of sustainable development, the growth of the child's rights obtain a new impulse of progress, formulating new approaches.

This article is dedicated to ensuring the importance of the rights of children as a sustainable development. This sustainable growth is considered a modern ideology the advantage of which lies in the fact that it focuses on the transition to such a scheme of human activities, which takes into consideration not only the interests of future generations, but also meets the interests of the current generation.

The mentioned principle should become a background for the legal system of the state and for its activities.

Keywords: Ensuring child's rights, conception of sustainable development, human activity, a vulnerable group, the principle of justice, public policy.

**ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Իրավունքի գերակայության՝ որպես իրավունքի համընդհանուր սկզբունքի, և իրավական պետության հայեցակարգի հարաբերակցությունը բավականին արդիական գիտական հիմնահարց է: Ընդունված մոտեցման համաձայն, իրավունքի գերակայությունը համարվում է իրավական պետության սկզբունք: Սակայն մեր կողմից կատարված վերլուծությունը վիճելի է դարձնում այդ մոտեցումը: Հիմնահարցը փորձել ենք ենթարկել կառուցվածքագործառության վերլուծության՝ իրավունքն ու դրա սկզբունքները և պետությունը (նաև նրա սկզբունքները) հասարակական ընդհանուր համակարգում:

Հասարակությունը՝ որպես համակարգ, բաղկացած է հետևյալ ենթահամակարգերից՝ տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային, սոցիալական, տեղեկատվական, իրավական և այլն, որոնցից յուրաքանչյուրը ևս ունի իր կառուցվածքային բաղադրատարրերը, կազմակերպման և գործառնության վարման սկզբունքները: Բոլոր ենթահամակարգերից համընդհանուրը, համաներթափանցողը, բոլորին մեկ միասնության մեջ միավորողը (ինտեգրողը) և բոլորի համար համապարտադիրն իրավական համակարգի բաղադրատարր հանդիսացող իրավունքն է: Իրավական համակարգն իր գործողության ոլորտով ներթափանցում է հասարակական բոլոր ենթահամակարգեր՝ իրավական կարգավորման ենթարկելով դրանք: Իրավունքի հետ միասին նման հատկություն ունեն նաև իրավունքի սկզբունքները:

Այժմ դիտարկենք պետության տեղը հասարակական համակարգում: Ընդունված մոտեցման համաձայն՝ պետությունը համարվում է հասարակության քաղաքական համակարգի բաղադրատարրը: Այդ ենթահամակարգում պետությունը համարվում է գլխավոր, կենտրոնական սուբյեկտ, որովհետև օժտված է ինքնիշխանությամբ: Արդի ժամանակներում քաղաքական համակարգի այդ գլխավոր սուբյեկտին վերագրում են իրավական, սոցիալական, ժողովրդավարական և այլ բնութագրեր: Պետությունը՝ որպես հասարակության կառավարման կառույց, ևս օժտված է համաներթափանցելու հատկությամբ, սակայն այդ կառավարումը բացարձակ և ինպերատիվ չէ, ինչպես իրավական կարգավորումը: Հետևաբար մի սկզբունք, որ ի սկզբանե բնութագրական է իրավունքին, իրավունքի համակարգին, չի կարող վերագրվել միայն պետական համակարգին: Իրավունքի սկզբունքները ևս հաստատում է այս դաստիարակությունը այն իմաստով, որ մասնավորին բնորոշ հատկությունը չի կարող վերագրվել ընդհանուրին: Ընդհանուրին հատուկ սկզբունքները կարող են գործել մասնավորում՝ ազդել նրա վրա, նույնիսկ դառնալ նրա սկզբունք՝ չկորցնելով իրենց ընդհանրացնող բնույթը և գործողությունը: Ուստի, Իրավական համընդհանուր սկզբունքը (իրավունքի գերակայությունը) գործում է հասարակական բոլոր ոլորտներում, այդ թվում նաև քաղաքական (պետական), և արդյունքում ազդում է դրանց համակարգակազմության վրա:

Իրավունքի և նրա սկզբունքների ու պետության և նրա սկզբունքների վերլուծությունը կառուցվածքագործառության դիրքերից թույլ է տալիս հաստատել, որ իրավունքի բոլոր սկզբունքները, այդ թվում նաև իրավունքի գերակայությունն ավելի ընդհանուր, հասարակական բոլոր համակարգերում գործող հիմնադրույթ է, քան իրավական պետությունը և նրան բնորոշ սկզբունքները: Հետևաբար, սկզբունքը, որ բնորոշ է միայն պետությանը, չի կարող վերաժվել բոլոր համակարգերի համար հանընդհանուր սկզբունքի: Եթե կարգավորման տրամաբանությունը թույլատրեր նման ընթացք, ապա նույն հաջողությամբ կարող էինք պնդել, որ իշխանությունների բաժանումը և հակակշռումն ու հավասարակշռումը՝ որպես իրավական պետության սկզբունք, բնորոշ է նաև հասարակական այլ համակարգերին:

Այսպիսով, իրավունքի գերակայությունը ոչ թե իրավական պետության սկզբունք է, այլ իրավունքի համընդհանուր սկզբունք, որը գործում է հասարակության իրավական համակարգում առաջին հերթին իրավունքին բնորոշ հատկությունների

www.lawinstitute.am

շնորհիվ, համակարգակազմիչ ազդեցություն է թողնում բոլոր հասարակական ենթահամակարգերի վրա, այդ թվում նաև պետության՝ որպես քաղաքական համակարգի գլխավոր սուբյեկտի: Իրավունքի գերակայության սկզբունքի գործողության հետևանքով պետությունն ավանդականից կամ «օրինական պետությունից» վերածվում է իրավականի, այսինքն՝ ոչ միայն օրենքով, այլ նաև հատկապես իրավունքով սահմանափակված պետության:

Իրավունքի գերակայությունից անխուսափելիորեն բխում է իրավունքի առաջնայնությունը քաղաքական իշխանության նկատմամբ: «Իրավունքի գոյությունը, որը բարձր է և՛ կառավարիչից, և կառավարվողներից ու պարտադիր է նրանց համար, անհրաժեշտ հիմնադրույթ է: Իրավունքը ուժի քաղաքականություն չէ. այն պետության գործը չէ: Իրավունքը նախորդում է պետությանը և վեր է կանգնում նրանից: Իրավունքը պետության ուժի սահմանն է, և պետությունը ոչ այլ ինչ է, քան ուժ իրավունքին ծառայելու համար»:

Այս եզրակացությունը հաստատում է նաև այդ երկու երևույթների՝ իրավունքի գերակայության ու իրավական պետության հայեցակարգերի, և իրական առաջացման ժամանակագրական հերթականությունը: Սկզբից քաղաքակրթության մեջ առաջացել է ոչ թե իրավական պետության տեսությունը՝ իրեն հատուկ իրավունքի գերակայության սկզբունքով և այնուհետև դարձրել համընդհանուր իրավական սկզբունք, այլ ընդհակառակը, ուշ միջնադարյան ապակրոնականացված իրավաբանական աշխարհայացքն առաջին հերթին բանաձևեց իրավունքի (օրենքի) գերակայության սկզբունքը, որի զարգացումն և կենսագործումն իրական կյանքում բերեց իրավական պետության տեսության, իսկ այնուհետև իրական իրավական պետության կազմավորմանը:

Պատմական այս փաստը հաստատում են իրավական պետության տեսության ձևավորման ու զարգացման հետազոտողները: Իրավական պետության տեսությունը սահմանափակ պետության տարատեսակ է, որի հայեցակարգը ձևավորվել է մարդկային մտքի պրպտումների արդյունքում, որն ուղղված էր պետական իշխանության սահմանափակմանը:

Ա. Ն. Սոկոլովը, ուսումնասիրելով իրավական պետության տեսության ձևավորման փուլերը և իրական իրավական պետության կայացման գործընթացը Գերմանիայում, գալիս է եզրակացության, որ. «Ի սկզբանե իրավական պետության գաղափարը կապված էր ժողովրդի ինքնիշխանության հաստատման, նրա ազատության երաշխավորվածության, պետությունը հասարակությանը ենթարկելու հետ: Իրավական պետության արժեքային իմաստը հենց նրանում է, որ ստեղծվի պե-

տական-իրավական հարաբերությունների այնպիսի համակարգ, որը կապահովի իրավունքի գերակայությունը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում»: Հաջորդ կարևոր եզրակացությունը, որին հանգում է հեղինակը, այն է, որ իրավական պետության հասկացությունը արտահայտում է պետության կապվածությունը և սահմանափակումը իրավունքով, հատկապես ժողովրդավարական սահմանադրությամբ և իրավական օրենքներով: Այդ կապվածության և պետության սահմանափակման գործում հատուկ դեր են խաղում իրավունքում դրված բարոյական գաղափարները, արդարության և մարդասիրական սկզբունքները, այսինքն՝ մարդու իրավունքների և ազատությունների ճանաչման և երաշխավորման հարցերով համամարդկային արժեքները»:

Պետք է նկատի ունենալ, որ նույնիսկ Գերմանիայում, իրավական պետության տեսությունը չունի միանշանակ հասկացություն և բոլորի կողմից հանրաճանաչ համարվող սկզբունքների համակարգ: Այդ հարցը առավել ևս սրված է հետխորհրդային իրավագիտության մեջ, որը ևս աչքի է ընկնում մոտեցումների բազմազանությամբ: Հեղինակների մեծ մասը, հետազոտության առարկա դարձնելով իրավական պետության հիմնահարցը և կառուցելով դրա մոդելը, սկզբում տալիս են դրա բնորոշումը և հիմնականում այդ բնորոշումը հանգում է նրան, որ «իրավական պետությունը իրավունքով սահմանափակված պետություն է»: Բնորոշումը տալուց հետո տեսաբանները թվարկում են իրավական պետության սկզբունքները, որոնք հատուկ են իրավական պետությանը:

Է. Կ. Ուոյաշովը, ներկայացնելով իրավական պետության հիմնախնդիրը, հետևյալ կերպ է բնորոշում այն. «Իրավական պետությունը ժողովրդավարական պետություն է, որում ապահովված է իրավունքի գերակայությունը և որի բարձրագույն առաքելությունը հանդիսանում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, պահպանումը, պաշտպանությունը»: Այնուհետև նա իրավական պետության բնույթը բացահայտում է դրա սկզբունքներով, որոնք են՝ իրավական պետությունը ժողովրդավարական պետություն է, իրավունքի գերակայությունը, օրենքի գերակայությունը, իշխանությունների բաժանումը, իրավունքների և ազատությունների երաշխավորվածությունը և անխախտելիությունը, պետության, հասարակության և անհատի փոխադարձ պատասխանատվությունը: Հեղինակի մոտեցման մեջ և՛ իրավունքի գերակայությունը, և՛ օրենքի գերակայությունը համարվում են առանձին սկզբունքներ: Սակայն կարծում ենք, որ ճիշտ կլինի այդպիսին ճանաչել միայն իրավական օրենքների գերակայությունը:

Ա. Ն. Գոլովիստիկովը իրավական պետու-



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունը բնորոշում է որպես ժողովրդավարական պետություն, որի կազմակերպումը և գործունեությունը հիմնված են իրավունքի վրա, կապված են նրա հետ: Նա իրավական պետությանը վերագրում է հետևյալ հատկանիշները՝ իրավունքի գերակայությունը և գերիշխանությունը, իշխանությունների բաժանումը, անհատի իրավունքների իրականությունը, պետության և հասարակության գործառույթների հստակ տարանջատումը, պետության և անհատի փոխադարձ պատասխանատվությունը, ներքին օրենսդրության համապատասխանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին ու սկզբունքներին, օրենսդրական կամքի նկատմամբ վերահսկողությունը: Այս հեղինակը հստակ չի առանձնացնում օրենքի գերակայությունը, չնայած այն ենթադրվում է: Մյուս կողմից միանգամից առաջ է քաշում մարդու իրավունքների իրական լինելը, առանց դրա օրենսդրական ճանաչման: Արժանին այն է, որ իրավական պետության սկզբունք է համարում միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները:

Մ. Մ. Ռաստոլովն իրավական պետությունը բնութագրում է որպես իրավունքի և օրենքի իշխանության տակ գործող պետություն: «Իրավունքը պետության համեմատ ունի առաջնայնություն, պետությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ուժ, որ հանձնված է ծառայության իրավունքին: ...Պետությունը սերտ կապված է իրավունքով, կարող է մշակել և ընդունել այս կամ այն օրենքը, սակայն իր հերթին պարտավոր է գործել օրենքի շրջանակում՝ ենթարկվելով դրան... Պետությունը ընդատյա է իր սեփական դատարանին և կարող է դատապարտվել»:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ «Իրավական պետությունում ստեղծվում են պայմաններ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առավել լրիվ ապահովման համար, ինչպես նաև չարաշահումների կանխման նպատակով քաղաքական իշխանությանն իրավունքով սահմանափակման համար»:

Իրավական պետության տեսության մեջ տարակարծիքություն կա նաև նման պետությանը վերագրվող սկզբունքների հարցում: Այս հիմնահարցում, մեր կարծիքով, արժանին պետք է տալ Վ. Լազարևի և Ս. Լիպենի մոտեցումներին, որ «տարբեր տեսաբաններ, դատելով նույն ուղղությամբ, թվարկում են իրավական պետության զանազան սկզբունքներ, ուշադրությունը հրավիրում են այդ հայեցակարգի այս կամ այն հիմնախնդրի վրա» : Տեսաբանների մի մասը իրավական պետության սկզբունքներ են համարում՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում իրավունքի գերակայությունը, պետության և նրա մարմինների սահմանափակվածությունը օրենքով, անհատի ազատության, նրա իրավունքների և շահերի, պատվի և արժանապատվության անխախտելիությունը, դրանց

պահպանությունը և երաշխավորվածությունը, պետության և անհատի փոխադարձ պատասխանատվությունը, օրենքների և այլ իրավական ակտերի իրականացման նկատմամբ արդյունավետ վերահսկողության և հսկողության ձևերը :

Հեղինակների մյուս խումբը իրավական պետության կառույցը ներկայացնում է հատկանիշների միջոցով, մասնավորապես՝ օրենքի (իրավունքի) գերակայությունը, իշխանությունների բաժանումը, անհատի իրավունքների ու ազատությունների իրական ապահովումը, զարգացած քաղաքացիական հասարակության առկայությունը, քաղաքական ժողովրդավարական ինստիտուտները, սահմանադրական օրենքի գերակայությունը և իրավական գործողությունը, պետական իշխանության ինքնիշխանությունը, դատարանի բարձրացումը՝ որպես իրավական պետության ապահովման միջոց, օրենքների համապատասխանությունն իրավունքին և պետական իշխանության համակարգի իրավական կազմակերպումը :

Նշված տեսակետների վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավական պետության վերաբերյալ չկա միասնական տեսական պատկերացում: Մեր կարծիքով, այդ մոտեցումներում մեթոդաբանորեն ճիշտ են այն գիտնականները, ովքեր իրավական պետության կառույցի ձևավորումը պայմանավորում են իրավունքի գերակայության սկզբունքի գործողությամբ: Օրինակ՝ «իրավական պետությունն իրավունքի գերակայության հիման վրա ձևավորված հասարակական քաղաքական կազմակերպություն է, որի հիմնական առաքելությունն է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանությունը և պետական իշխանության սահմանափակումը իրավունքի ուժով»<sup>14</sup> : Այդպիսին է նաև Գ. Հարությունյանի մոտեցումը, համաձայն որի պետաիրավական համակարգում օրենքի գերակայության իրավական սկզբունքին գալիս է փոխարինելու նոր ելակետային հիմնադրույթ՝ իրավունքի (իրավական օրենքի) գերակայության սկզբունքը՝ դրանից բխող հիմնարար կառուցակարգային և գործառույթային փոփոխություններով: Քաղաքացիական հասարակության կայացման չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը : Այս համատեքստում իր հստակ մեթոդաբանական մոտեցմամբ աչքի է ընկնում Վ. Ներսեսյանցի իրավական պետության հայեցակարգը: Նա իրավական պետությունը ներկայացնում է հետևյալ տեսական մոդելով. ....Իրավական պետությունը՝ դրա արդի համընդհանուր տարածական իմաստով ... նորագույն ժամանակի հատուկ պետական-իրավական կառույց է, հանրային քաղաքական ոլորտում իրավունքի գերիշխանության գաղափարի իրականացման (քաղաքացիական հասարակության պայման-

ներին և պահանջմունքներին համապատասխանող մոդել, ազատ անհատների՝ որպես պաշտոնապես ճանաչված սուբյեկտների, ի ծնե և անօտարելի (բնական) իրավունքների ու ազատությունների, սուբյեկտների հանրային-քաղաքական իշխանության զարգացած իրավական կազմակերպության նոր ձև (և նոր տիպ)»<sup>16</sup> : Ինչպես տեսնում ենք Ներսեսյանցը իրավական պետությունը համարում է իրավունքի գերիշխանության գաղափարի գործողության հետևանքով ձևավորված պետության մոդել : Ըստ նրա՝ իրավական պետությունը հանրային-քաղաքական (պետական) իշխանության կազմակերպման հատուկ կառույց է և անհատների, հասարակության ու պետության փոխկապվածության հատուկ իրավական ձև է, որում անհրաժեշտաբար պաշտոնապես ճանաչված, ամրագրված և պահպանված են երեք բաղադրատարրեր՝ ա) մարդու և քաղաքացու ի ծնե և անքակտելի (բնական) իրավունքներն ու ազատությունները, բ) իրավական օրենքների գերակայությունը, գ) պետական իշխանության համակարգի իրավական կազմակերպումը՝ իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա: Պետականության այս երեք բաղադրատարրերը՝ անհատական (մարդկային) իրավական, նորմատիվ իրավական, կազմակերպական իրավական այն հատկանիշներն են, որոնցով իրավական պետությունը տարբերվում է ոչ իրավական, ավանդական պետությունից :

Վերլուծությունը հնարավորություն է տալիս նշել, որ հեղինակների՝ այս հարցում եղած բազմակարծության հետ մեկտեղ առկա են նաև մոտեցումների ընդհանրություններ: Նախ դա տրամաբանության ընդհանուր ուղղվածություն է, այսինքն՝ որ իրավական պետությունն իրավունքով սահմանափակված և կապված պետություն է, այնուհետև իրավական պետության սկզբունքների հիմնական մասը համընկնում է:

*Այսպիսով, իրավունքի գերակայությունը ընդհանուր հիմնարար, իրավական սկզբունք է, որը գործում է հասարակական բոլոր համակարգերում և տարածվում է հասարակական կյանքի մասնակից բոլոր սուբյեկտների վրա: Անհատի նկատմամբ գործելուց այդ սկզբունքը նրան դարձնում է լիիրավ, ազատ և իրավահավասար սուբյեկտ՝ նրա իրավունքներին տալով առաջնայնություն: Հասարակության քաղաքական համակարգում գործողության արդյունքում իրավունքի գերակայության սկզբունքը պետությանը վերածում է սահմանափակ իրավական, ժողովրդավարական, սահմանադրական պետության, որի սկզբունքները երաշխիք են իրավունքի գերակայության կենսագործման և պետությունն իրավական դարձնելու համար:*

<sup>1</sup> Տե՛ս Дюги Л. Социальное право, индивидуальное право и преобразование государства, М., 1909. С. V:

<sup>2</sup> Տե՛ս Нерсесянц В. С., Философия права, М., издательская группа ИНФРА. М-Норма, М., 2001. С. 124-142; Кальной И. И. Философия права. СПб., 2006. С. 197-204:

<sup>3</sup> Տե՛ս Соколов А.Н. Правовое государство. От идеи до ее материализации. – Калининград, 2002. С. 456:

<sup>4</sup> Տե՛ս Проблемы общей теории права и государства. Под общ. ред. В.С. Нерсесянца, М., 1999. С. 676:

<sup>5</sup> Տե՛ս Соколов А.Н. Правовое государство. От идеи до ее материализации. – Калининград, 2002. С. 15:

<sup>6</sup> Տե՛ս Соколов А.Н. Правовое государство. От идеи до ее материализации. – Калининград, 2002. С. 10:

<sup>7</sup> Տե՛ս Проблемы теории государства и права. / под. Ред. В.М., Сырых, М., 2008. С. 144-148:

<sup>8</sup> Տե՛ս Головистиков А.Н., Дмитриев Ю.А. Проблемы теории государства и права. М., 2005. С. 679, 685:

<sup>9</sup> Տե՛ս Рассолов М.М. Актуальные проблемы теории государства и права. М., 2011. С. 371:

<sup>10</sup> Տե՛ս Теория государства и права / под ред. Н.И. Мотузова и А.В. Малько. М., 1997. С. 160:

<sup>11</sup> Տե՛ս Лазарев В. В., Липень С.В. Теория государства и права. – М., Спарк, 2004. С. 472:

<sup>12</sup> Տե՛ս Кудрявцев В.М., Лукашева Е.А., Социалистическое правовое государство. // Коммунист. 1988. N 11. С. 44-55, Хропанюк В.Н. Теория государства и права, М., 1995. С. 80-89; Лазарев В.В., Липень С.В., Теория государства и права, М., Спарк, 2004. С. 468-480; Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ս. Վաղարշյանի, - Եր., Իրավունք, 2010, էջ 43-47:

<sup>13</sup> Տե՛ս Общая теория права и государства / Под ред. В.В. Лазарева. М., 1999. С. 424-428:

<sup>14</sup> Տե՛ս Протасов В.И., Протасов Н.В. Лекции по общей теории права и государства, М., 2010. С. 529:

<sup>15</sup> Տե՛ս Հարությունյան Գ-ագիկ, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները: Երևան, 2003, էջ 11, Шайо А. Самоограничение власти (краткий курс конституционализма). Пер. С. венг. М., 2001:

<sup>16</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 2000. С. 308:

<sup>17</sup> Տե՛ս Վ. Ներսեսյանցը իրավական պետության հասկացությունը (մոդելը) կառուցում է ավանդական և իրավական պետության համեմատության վրա, առաջ է քաշում իրավական պետությանը բնորոշ բաղադրատարրերը՝ իրավական պետության հատկանիշները, իսկ այնուհետև սահմանում է իրավական պետության հասկացությունը:

<sup>18</sup> Տե՛ս Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 1999. С. 388:

## РЕЗЮМЕ

***Верховенство права и концепция правового государства***

В этой статье мы попытались проанализировать соотношение верховенства права – как всеобщего правового принципа, и концепции правового государства, которое является довольно современной научной проблемой.

Анализ права и его принципов, государства и его принципов со структурно-функциональных позиций позволяет утверждать, что все принципы права, в том числе и верховенство права в более общем плане, является действующим принципом во всех общественных системах, более чем правовое государство и характерные ему принципы.

Теоретический анализ, проведенный в статье, подтверждает, что верховенства права является не принципом правового государства, а всеобщим принципом права, которое действует в правовой системе общества, в первую очередь, благодаря свойствам, характерным праву, оставляет систематизирующее влияние на все общественные под-системы, в том числе – на государство, как главный субъект политической системы. Вследствие действия принципа верховенства права, государство, из традиционного или “легального государства” превращается в правовое, то есть в государство, ограниченное не только законом, но, в особенности, ограниченное правом.

## SUMMARY

***The Superiority of the Law and the Concept of the Legal State***

In this article we tried to analyze the correlation of the law superiority as a common law principle, and the legal state conception, which is a quite modern scientific problem.

The analysis of the law and its principles, state and its principles from the structural-functional positions lets state, that all legal principles, including the superiority of law more generally, is a more acting principle in all public systems, more than the legal state and the principles characteristic to it .

The held theoretical analysis in the article confirms that the superiority of the law is not a principle of a legal state, but a common principle of law, which acts in the legal system of the public, first of all, thanks to the characteristic to the law features, takes systematizing influence on all the public sub-systems, including the state – as a main subject of the political system. In the consequence of the law superiority principle action, the state, from the traditional or “legal state” turns into juridical, i. e. it is restricted not only by the law, but also especially by the legality.

**ՄԱՐՏԻՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական և քրեական  
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԿԱԼԱՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ  
ԸՍՏ ԳՈՐԾՈՂ ՔՐԵԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ**

ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ կալանքը ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելն է: Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց, հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ:

Կալանքը կիրառվում է միայն որպես հիմնական պատիժ և կարող է նշանակվել հանցագործություն կատարած անձի նկատմամբ բացառապես դատավճռով:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ օրենսդիրը շեշտը դնում է կալանքի չորս հիմնական տարրերի վրա.

1. կալանքը դատապարտյալի խիստ մեկուսացումն է հասարակությունից,
2. կալանքն անձին անազատության մեջ պահելն է՝ օրենքով հստակ սահմանված կարճ ժամկետով,
3. կալանքը կարող է նշանակվել միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ,
4. անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված չպետք է լինի:

Բ.Վ. Չոբրավոմիսլովի կարծիքով, կալանքն իր էությանը իրենից կարճաժամկետ ազատագրվում է ներկայացնում: Հեղինակն իր տեսակետը հիմնավորում է առաջին հերթին այն հանգամանքով, որ կալանքի դեպքում անձը դատարանի դատավճռով դատապարտվում է հասարակությունից խիստ մեկուսացման, այսինքն՝ տեղավորվում է հատուկ հաստատություն, ուր գտնվում է մշտական հսկողության տակ, խիստ ռեժիմի պայմաններում՝ իրավունք չունենալով

լքել այդ հաստատությունը մինչև դատարանի կողմից սահմանված պատժի ժամկետի ավարտը:

Բացի այդ՝ քրեական օրենքը հստակ նախանշում է կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի ժամկետային սահմանները՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով: Հետևաբար կալանքի դեպքում հասարակությունից մեկուսացումը կարճաժամկետ բնույթ է կրում<sup>2</sup>:

Ռ.Ռ.Գալիակբարովն ընդգծում է կալանքի հետևյալ չորս հիմնական տարրերը.

1. անձին հարկադրաբար պահելը,
2. դատապարտյալին պահելը դրա համար հատուկ նախատեսված հաստատությունում,
3. դատապարտյալին պահելը հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում,
4. անձին ազատությունից զրկելը օրենքով հստակ սահմանված՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով:

Հարկ է նկատել, որ հեղինակը անձին հարկադրաբար պահելը դիտարկում է որպես կալանքի առանձնահատկություն, մինչդեռ հարկադրանքի տարրը բնորոշ է, ընդհանուր առմամբ, քրեական պատժին և պատժի յուրաքանչյուր տեսակին, քանի որ ցանկացած պատիժ կապված է անձի իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակման հետ և անխուսափելիորեն նրան որոշակի զրկանքներ է պատճառում ու սահմանափակում է նրա իրավունքներն ու անձնական ազատությունը:

Վերոգրյալի հիման վրա կալանքի՝ որպես քրեական պատժի էության տակ անհրաժեշտ է հասկանալ դատապարտյալի որոշակի իրավունքների և ազատությունների զրկման կամ սահմանափակման համակցությունը, որոնք ուղեկցվում են անձին հասարակությունից ժամանակավոր խիստ մեկուսացմամբ դրա համար հատուկ նախատեսված հատուկ տիպի քրեակատարողական հաստատությունում:

Հարկ է նշել, որ օրենսդիրը զինձառայողների նկատմամբ կալանքի ձևով պատիժ նշանակելու դեպքում դրա կրման հատուկ կարգ է սահմանել:

www.lawinstitute.am

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինծառայողները կալանքը կրում են կայագորային կարգապահական մեկուսարանում:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տարատեսակի բովանդակությունը բնութագրող վերը թվարկված իրավասահմանափակումների ցանկը, մեր կարծիքով, հանդիսանում է ոչ սպառնիչ և մասամբ էլ վիճելի:

Այժմ վերլուծենք կալանքի՝ որպես քրեական պատժի բովանդակությունը:

Ինչպես արդեն նշեցինք նախորդ պարագրաֆում, մեղքի քավումը պատժի անբաժանելի մասն է կազմում ու անխուսափելիորեն ուղեկցում է նրան:

Մեղքի քավումը կալանքի դեպքում, արտահայտվում է անձի դատապարտման փաստում, որն իրականացվում է պետության կողմից:

Արդարացի է նշում Ա.Վ.Պոլիվցեվը, որ անձի հրապարակային, բացասական գնահատականը հոգեբանական ազդեցություն չի թողնում հանցագործություն կատարած անձի վրա, և պատժելով անձին, բացասական գնահատելով նրա վարքը՝ միաժամանակ բացասական ազդեցություն է թողնում նրա իրավական և սոցիալական դրության վրա:

Կալանքի՝ որպես քրեական պատժի, մեղքի քավման հաջորդ տարրը դատապարտյալի՝ հասարակությունից մեկուսացումն է, որն արտահայտվում է հասարակությունից նրա խիստ մեկուսացմամբ, որի հետևանքով անձը զրկվում է մի շարք իրավունքների, պարտականությունների և օրինական շահերի իրականացումից, քանի որ խիստ մեկուսացումը որպես կալանքի, մեղքի քավման տարր, արտահայտվում է միաժամանակ անձի սահմանադրական իրավունքների սահմանափակմամբ՝ ՀՀ տարածքով ազատ տեղաշարժելու, բնակության վայր ընտրելու իրավունքից զրկելու մեջ և այլն:

Հարկ է նշել, որ «մեկուսացում» եզրույթի տակ հասկացվում է հանցավորի առանձնացումը մյուսներից, նրան շփման հնարավորությունից զրկելը՝ հեռացնելով նրան հասարակության մյուս անդամներից:

Վ.Ն.Կուդրյավցեվի կարծիքով, «մեկուսացում» հասկացության տակ պետք է հասկանալ անձին տեղավորելն այնպիսի պայմաններում, որի դեպքում նա զրկվում է սովորական շփումներից և իր նախկին կապերից, այդ թվում՝ հասարակությունից ընդհանուր առմամբ:

Հասարակությունից մեկուսացման վերը թվարկված հասկացությունները հիմք են տալիս կալանքի դատապարտված անձանց՝ հասարակությունից խիստ մեկուսացումը դիտարկել հետևյալ տեսանկյուններից.

1. դատապարտյալի ֆիզիկական շփման զրկումը կամ սահմանափակումը նախկին սոցիալական միջավայրի հետ (ընտանիքի, մտերիմների կամ ազգականների), իրեն անձանոթ անձանց հետ, որոնք գտնվում են քրեակատարողական հիմնարկից դուրս, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի սոցիալական նոր միջավայրի հետ:

2. դատապարտյալին հոգևոր կապերից զրկելը կամ այն սահմանափակելը իրեն անձանոթ անձանց հետ ինչպես քրեակատարողական հիմնարկում, այնպես էլ քրեակատարողական հիմնարկից դուրս, ինչպես նաև ընտանիքի, հարազատների և մտերիմների հետ:

3. դատապարտյալին ֆիզիկապես անկաշկանդ տեղաշարժելու իրավունքից զրկելը կամ այդ իրավունքի սահմանափակումը:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի կիրառման դեպքում մեղքի քավումը արտահայտվում է նաև մի շարք իրավասահմանափակումների մեջ, որոնք կրում է դատապարտյալը պատժի կրման ընթացքում: Ընդ որում՝ այդ իրավասահմանափակումների մեծ մասն ածանցվում է հասարակությունից դատապարտյալի մեկուսացման փաստից:

Ասվածից հետևություն, որ կալանքի դեպքում անձը կրում է որոշակի անձանական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ զրկանքներ և իրավունքների սահմանափակումներ:

Ազատության զրկմամբ զուգորդվող պատիժների կրման ընթացքում դատապարտյալը զրկվում է մասնավորապես մի շարք սահմանադրական իրավունքներից՝ խաղաղ հավաքներ, հանրահավաքներ, երթեր կազմակերպելու և դրանց մասնակցելու հնարավորությունից, պետության կառավարման գործընթացին մասնակցելու հնարավորությունից, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և փոստհեռագրական հաղորդակցման գաղտնիության իրավունքից և այլն:

Ինչպես արդեն վերը նշվեց, կալանքը բնութագրվում է բացառապես իրեն բնորոշ իրավական խիստ սահմանափակումներով: Այդ սահմանափակումները պայմանավորված են այն նպատակներով և խնդիրներով, որոնք օրենսդիրը դնում է այս պատժատեսակի առջև, առանց որոնց վերջինս կորցնում է իր իմաստը: Բացի այդ՝ պատժի այս տեսակի ժամկետի խիստ սահմանափակ բնույթը կոմպենսացվում է դրա խստությամբ և հեռացում է այն բացասական երևույթները, որոնք բնորոշ են հանցագործություն կատարած անձին հասարակությունից ավելի երկարատև ժամանակով մեկուսացմանը:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի ուսումնասիրության ընթացքում մշտապես

հարց է ծագում՝ արդյոք կալանքը ազատագրկման տեսակ չի հանդիսանում, և կալանքի կրման վայրը արդյոք ազատագրկման վայր չէ:

Ինչպես իրավագիտորեն նշում է Վ.Վ.Յակովլևը, կալանքը՝ որպես քրեական պատիժ, իրենից ներկայացնում է ազատագրկման տեսակներից մեկը՝ պատժի համակարգում ընդգրկված որոշակի ժամկետով ազատագրկման և ցմահ ազատագրկման հետ մեկտեղ: Այն հանդիսանում է կարճաժամկետ ազատագրկում, որը բնութագրվում է միայն իրեն բնորոշ պատժի կրման պայմաններով<sup>5</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ կարճաժամկետ ազատագրկմանը բնորոշ են բոլոր այն թերությունները, որոնք բնորոշ են ազատագրկմանն ընդհանրապես:

Այդպիսիք են օրինակ՝ անձի դուրս մղումը իր համար սովորական դարձած սոցիալական կապերից. նյութական վնասն է, պատժի կրումից ազատվելուց հետո աշխատանքային զբաղվածություն ապահովելու խնդիրն է և այլն:

Կարճաժամկետ ազատագրկման նպատակները հստակեցվում են ինչպես ելնելով դատապարտյալների տեսակից, այնպես էլ նրանց կողմից կատարված հանցագործության բնույթից:

Հարկ է նշել, որ այսօր քրեական իրավունքի գիտության մեջ հեղինակների և գիտնականների մեծ մասն արդեն իսկ կալանքը դիտարկում է որպես ազատագրկման տարատեսակ:

Այսպես, Պ.Գ.Պանոմարյովի կարծիքով, կալանքը ազատագրկման կարճաժամկետ տարատեսակն է, որը զուգորդվում է դատապարտյալին հասարակությունից խիստ մեկուսացման հետ<sup>6</sup>:

Մ.Ն.Ստանովսկին գտնում է, որ իր իրավական բնույթով, կալանքը հանդիսանում է ազատագրկման տարատեսակներից մեկը<sup>7</sup>:

Մեղքի քավման չափը, որը բնորոշ է կալանքին, կապված է պատժի տվյալ տեսակի տևողության հետ, այլ ոչ թե պատժի ժամկետի հետ:

Կալանքի դատապարտված անձանց իրավունքների սահմանափակումը արտահայտվում է նաև նրանում, որ այն անձի մոտ առաջ է բերում

դատվածություն:

Դատվածությունը և դրանից բխող իրավասահմանափակումներն ու իրավական հետևանքները որոշակի անհարմարություններ են առաջ բերում այն ունեցող անձի համար, ոտնահարում են նրա շահերը:

Կալանքի դատապարտված անձանց իրավունքների և օրինական շահերի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ կալանքի ձևով քրեական պատժի բովանդակությունը կայանում է հետևյալում.

1. պետության կողմից անձի վարքագծի ակնհայտ բացասական գնահատման մեջ,
2. դատապարտյալին հասարակությունից խիստ մեկուսացման մեջ,
3. տարաբնույթ գրկանքների մեջ, որոնք կրում է կալանքի դատապարտված անձը:
4. կենցաղային բնույթի սահմանափակումների մեջ, որոնք անխուսափելիորեն կրում է քրեակատարողական հիմնարկում գտնվող անձը,
5. կալանքի ձևով պատժի շարունակական բնույթի մեջ,
6. դատվածության առկայության մեջ և այլն:

Վերլուծելով տեսական գրականության մեջ տեղ գտած տեսակետները՝ կարելի է հստակ հետևություն անել այն մասին, որ կալանքի կիրառումը նպատակահարմար է հետևյալ իրավիճակներում. հանցագործի անձը բնութագրվում է բացասական, սակայն նա քրեակատարողական հիմնարկում պատիժ կրելու «փորձ» չունի, այդ իսկ պատճառով կալանքի ձևով պատժի կրման ընթացքում անձի նկատմամբ կիրառվող ներգործության կարճաժամկետ, սակայն միաժամակ ինտենսիվ բնույթն ունակ է ապահովելու հատուկ նախագուշացման նպատակը. անձի նկատմամբ նախկինում կիրառվել է հասարակությունից մեկուսացման հետ կապված պատիժ, սակայն այն հողվածի սանկցիայով, որը տվյալ պահին մեղսագրվում է հանցագործություն կատարած անձին, կալանքից ավելի խիստ պատժատեսակներ նախատեսված չեն:

<sup>1</sup> Ст'я Уголовное право Российской Федерации. Общая часть: Учебник. Под ред. проф. Б.В. Здравомыслова, Изд. 2-е, перераб. и доп., Москва, Юристь, 1999. С. 355:

<sup>2</sup> Ст'я նույն տեղում էջ 355:

<sup>3</sup> Ст'я Поливцев А. В. Правовое регулирование применения ареста как вида уголовного наказания: Дисс... канд. юрид. наук. - Ростов-на-Дону, 2001. С. 76:

<sup>4</sup> Ст'я Кудрявцев В. Н. Стратегии борьбы с преступностью. - М.: Юристь, 2003. С. 67:

<sup>5</sup> Ст'я Яковлев В. В. Уголовно-правовая характеристика ареста (теоретический аспект): Дисс... канд. юрид. наук. Санкт-Петербург, 1999. С. 76:

<sup>6</sup> Տե՛ս Ռоссийское уголовное право: В 2 т. Т.1: Общая часть / Под ред. проф. Л. В. Иногамовой-Хегай, проф. В.С. Комисарова, проф. А. И. Рарога. - М.: ИНФРА-М, 2003. С. 445:

<sup>7</sup> Տե՛ս Становский М. Н. Назначение наказания. - СПб.: Юридический центр Пресс, 1999. С. 110:

#### РЕЗЮМЕ

##### *Правовая сущность ареста по действующему уголовному законодательству*

В статье выявляется сущность ареста как одной из строгих мер наказания, которая назначается за совершение преступлений и средней, и небольшой тяжести сроком от 15 дней до трех месяцев.

#### SUMMARY

##### *Legal matter of arrest according to applicable criminal legislation*

In this article arrest is revealed as one of the most strict kinds of punishment which is set both for middle level dangerous and not big level dangerous crimes, with 15 days duration.

**ՄԱՐԻՆԵ ԳՅՈՒՐՉՅԱՆ**

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Մարդու իրավունքների Եվրոպական դատարան (այսուհետ՝ ՄԻԵԴ) ստացված բողոքների քննման ժամանակ պատասխանող պետությունը, ինչպես հայտնի է, դատաքննությանը մասնակցում է միայն վեճը Դատարանի պալատի կողմից քննվելու դեպքում: Դատաքննության ընթացքում պետության ներկայացուցիչն իրավունք ունի ներկայացնել գրավոր առարկություններ, ինչպես նաև մասնակցել դատական լուծմանը: ՄԻԵԴ-ի Կանոնակարգի 35-րդ կանոնի համաձայն, պատասխանող պետության շահերը դատական գործընթացի ժամանակ ներկայացնում են տվյալ պետության կողմից պաշտոնապես լիազորված անձինք, ովքեր իրավունք ունեն օգտվել փաստաբանների և խորհրդատուների ծառայություններից: Կողմ-պետությունն իրավունքն ունի ձեռնարկել բոլոր միջոցառումներն անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու (ցանկացած փաստացի տվյալներ, փաստաթղթեր կամ այլ նյութեր) համար, վկայություն տալ, տեղում փաստերը ճշտելու նպատակով արտագնա նիստ պահանջել և այլն:

Բացի այդ՝ յուրաքանչյուր Կոնվենցիայի անդամ-պետություն, որը թեպետ քննվող գործով կողմ չի հանդիսանում, սակայն դիմումատուն իր քաղաքացին է, Դատարանի նախագահի կողմից կարող է հրավիրվել դատական նիստին՝ գրավոր առարկություններ ներկայացնելու և լուծմանի մասնակցելու իրավունքով (Կոնվենցիայի 36 հոդված): Այսպես, օրինակ՝ ՌԴ լիազոր ներկայացուցիչը, որպես երրորդ կողմ, պաշտպանում էր ՌԴ քաղաքացի հանդիսացող դիմումատուների շահերը (Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի՝ դեպորտի և քաղաքացու կարգավիճակ չտրամադրելու գործով):

Այսպիսով, Կառավարությունների լիազոր ներկայացուցիչները փոքր դեր չեն խաղում ՄԻԵԴ-ի կողմից գործեր քննելիս և որոշումներ կայացնելիս: Սակայն, իրենց վրա դրված պարտականությունները հաջողությամբ կատարելու համար բավարար չէ միայն դատարանում պետության շահերը պաշտպանելը. անհրաժեշտ է նաև պետության իրավապահ և այլ կառավարման մարմինների գոր-

ծունեության ճշգրիտ համակարգումը միջազգային արդարադատության իրականացման ողջ գործընթացում:

Եվրոպական Խորհրդում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը պետք է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում դատական լուծման ժամանակ ներկայացնի և պաշտպանի մեր հանրապետության շահերը, Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, Նախագահին ներկայացնի ներքին օրենսդրության բարեփոխմանն ու զարգացմանը, Եվրոպական չափանիշների համապատասխանեցմանն ուղղված առաջարկներ: Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների դատարան բողոք ստանալուն պես այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության բոլոր շահագրգիռ մարմիններին, ընդհուպ՝ Նախագահին: Կարծում ենք՝ հիշյալ լիազորության արդյունավետությունը բարձրացնելու նկատառումով նպատակահարմար է հիշյալ նախագծերի առավել առանցքային դրույթների առնչությամբ քննարկումներ իրականացնել ՄԻԵԴ-ի աշխատակազմի փորձագետների մասնակցությամբ: Նա իրավունք ունի գործելու փաստական և իրավաբանական հանգամանքների մասին տեղեկատվություն պահանջել իրավասու մարմիններից և մեկամսյա ժամկետում ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը նաև պարտավոր է ձեռնարկել միջոցներ վեճը բողոքաբերների հետ հաշտությամբ լուծելու և քաղաքացիների իրավունքների ու ազատությունների խախտմանը հանգեցնող պատճառների վերացման համար:

ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը պարտավոր է նաև մանրակրկիտ ուսումնասիրել դատարանի որոշումների կատարման հետևանքները և հնարավորության դեպքում մասնակցել խախտված իրավունքների վերականգնման գործընթացին՝ նրանց համապատասխան դրամական փոխհատուցում վճարելով: Անհրաժեշտության դեպքում նա կարող է

www.lawinstitute.am



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նախաձեռնել այն իրավապահ մարմինների ներկայացուցիչներին պատասխանատվության ենթարկելու գործընթացը, ում մեղքով թույլ են տրվել Կոնվենցիայի կոպիտ խախտումներ: Ասվածը հատկապես վերաբերում է անձի ազատությունը սահմանափակող հաստատությունների ղեկավար անձանց (քննչական մեկուսարան, ուղղիչ-աշխատանքային գաղութներ, բանտեր, հոգեբուժարաններ և այլն), քանի որ հենց այստեղ են հիմնականում խախտվում մարդու այնպիսի կարևոր իրավունքներ, ինչպիսիք են իրենց փապտաբանների հետ շփումը և, ինչու ոչ՝ ՄԻԵԴ-ի դիմելը:

Ինչ վերաբերում է Եվրոպական դատարանի որոշումների կատարմանը, ապա ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը Եվրոպայի Խորհրդում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչին պարբերաբար տեղեկացնում է դատարանի որոշումների կատարման գործընթացի մասին՝ Նախարարների կոմիտեին համապատասխան զեկույց ներկայացնելու համար:

Կոնվենցիայի անդամ-պետությունները ճանաչում են դատարանի իրավասությունը ոչ միայն Կոնվենցիայի դրույթների մեկնաբանման հարցում, այլև դրանց պրակտիկ կիրառման ընթացքում: Այս իմաստով, համաձայն Կոնվենցիայի 52-րդ հոդվածի, յուրաքանչյուր անդամ-պետություն պարտավոր է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հարցմամբ տրամադրել անհրաժեշտ պարզաբանումներ՝ ներքին օրենսդրության և իրավապահ մարմինների կողմից Կոնվենցիայի պահանջների կատարման մասին: Մասնավորապես, Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պարտավոր են Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին անհապաղ տեղեկացնել արտակարգ իրավիճակների ժամանակ կիրառվող իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների կոնկրետ ժամկետների ու պատճառների մասին: Այն դեպքում, երբ ՄԻԵԴ-ը հաստատում է մարդու իրավունքների և ազատությունների զանգվածային ու կոպիտ խախտումների փաստը, իրավախախտ պետությունը պարտավոր է Կոնվենցիայի 46-րդ հոդվածին համաձայն միջոցներ ձեռնարկել նշված խախտումները վերացնելու և մինչև արտակարգ իրավիճակի հայտարարումը գոյություն ունեցող վիճակին վերադարձնելու ուղղությամբ: Ընդ որում՝ համաձայն Կոնվենցիայի 1-ին և 13-րդ հոդվածների պահանջների՝ պատասխանող պետությունները պարտավոր են ազգային իրավունքի մակարդակով ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ ապագայում նման իրավախախտումներից զերծ մնալու համար:

Հետագայում հիշյալ բնույթի միջոցառումների անցկացումը, ըստ էության, ենթակա չէ վերահսկողության այն ընթացակարգերին, որոնք

բնորոշ են կոնկրետ դատական ակտի կատարմանը, ուստի նպատակահարմար է համարվում նշված դեպքերում շրջանառության մեջ դնել կամ համարժեք մոնիտորինգ անցկացնել կամ քննարկել այդ միջոցառումների ծրագիրը վերը նշված փորձագետների մասնակցությամբ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածով սահմանվում է, որ. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ»: Այս իրավունքը, ինչպես բազմիցս պարզաբանել է ՄԻԵԴ-ը, ի կատար է ածվում ոչ թե կոնկրետ գործով վճռի հրապարակմամբ, այլ այդ վճռի ճշգրիտ և ամբողջական կատարմամբ: Խնդիրը նրանումն է, որ, եթե դիմումատուն չի կարողանում սահմանված ժամկետում հասնել իր օգտին վճռի կատարմանը, ապա դատարան դիմելու նրա իրավունքն ավարտվում է արդարադատության իրականացման փաստացի մերժմամբ: Ռուսաստանի Ֆեդերացիայի Գերագույն դատարանի պլենումը իր 18.09.2003թ. ի որոշմամբ սահմանել է, որ. «դատական վճիռների կատարումը դատական գործընթացի մասն է, մարդու դատական պաշտպանության իրավունքի անբաժանելի բաղկացուցիչը»: Այսպես օրինակ՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի Ֆեդերացիայի գործով վճիռն ի օգուտ դիմումատուի ի կատար չի ածվել երեք տարվա ընթացքում ֆինանսական խնդիրների պատճառով, ինչն էլ հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների խախտման: Եվրոպական դատարանի տվյալ վճռով, համաձայն Կոնվենցիայի 41-րդ հոդվածի, Ա. Տ. Բուրդովին, որպես բարոյական վնասի հատուցում, պետք է վճարվեր երեք հազար եվրո:

1950թ. Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի վճիռների պահանջները ժամանակին ու ճշգրիտ կատարելու համար անհրաժեշտ է նաև հնարավորություն ստեղծել շահագրգիռ և հետաքրքրված զանգվածների համար տեղեկանալու, ծանոթանալու վճիռների ամբողջական տեքստերին: Եվրոպայի խորհրդի անդամ երկրներից շատերն օրենսդրորեն ամրագրել են Եվրոպական դատարանի այն վճիռների թարգմանության և պաշտոնական հրապարակման պարտավորությունը, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ տվյալ պետության իրավակիրառ պրակտիկայի վրա: Նման փորձի ներդրումը Հայաստանի

www.lawinstitute.am

Հանրապետությունում նույնպես արդյունավետ կարող է լինել՝ մանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանի վճիռների թարգմանության գործընթաց արդեն իսկ իրականացվում է: Նման միջոցների կիրառումը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց և աշխատակիցների իրավագիտակցության բարձրացման վրա:

Օրենսդրության բարեփոխման օրինակ կարող է լինել տվյալ կամ նմանատիպ գործով ՄԻԵԳ-ի վճռին հակասող դատական ակտի չեղյալ համարելու դրույթի ամրագրումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Արդարադատություն իրականացնելիս դատարանները պետք է ելնեն այն տրամաբանությունից, որ համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքների և նորմերի և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթների ոչ ճիշտ կիրառումն իրենց կողմից կարող է և պետք է հիմք հանդիսանա ոչ իրավաչափ դատական ակտը չեղյալ համարելու համար:

Իրավակիրառ պրակտիկայում կարող է հարց առաջանալ՝ կարո՞ղ են արդյոք ազգային դատարանները որոշել ազգային իրավունքի նորմերի եվրոպական իրավունքի կոնվենցիոն դրույթներին համապատասխանության հարցը, եթե քննվող գործի կողմերը դա չեն պահանջում: Կարծում ենք, ակնհայտ հակասություն բացահայտելու դեպքում ազգային դատական ատյանները կարող են պատճառաբանված հիմնավորումներով անմիջապես անցնել առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող վավերացված միջազգային պայմանագրի դրույթների կիրառմանը, իսկ այն դեպքում, երբ առկա է լրացուցիչ պարզաբանման կամ խորհրդատվության կարիք, հարկ է դիմել ՄԻԵԳ-ի փորձագիտական խորհրդատվության լծակներին: Մարդու իրավունքների և ազատությունների առավելագույնս պաշտպանության և օրենսդրական բարեփոխման տեսանկյունից ազգային դատարանները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են մշտապես մասնակցել գործող օրենսդրության բարեփոխմանը և արդարադատությունն իրականացնել՝ ելնելով 1950թ. Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ժամանակին պաշտպանության նպատակից: Նման եզրահանգման է եկել Իսպանիայի Սահմանադրական դատարանը՝ հսկողություն իրականացնելով Իսպանիայի դեմ անհատական բողոքներով Եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ<sup>4</sup>:

Կոնվենցիայի 15-րդ հոդվածը Կոնվենցիայի անդամ-պետություններին թույլ է տալիս արտակարգ իրավիճակներում և հանգամանքներում որոշակի չափով շեղվել մարդու իրավունքների և

ազատությունների պաշտպանության իրենց պարտականությունից, օրինակ՝ պատերազմական գործողությունների ժամանակ կամ այլ՝ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ իրավիճակներում: Մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու պետության իրավունքն անվանվում է դեռոգացիայի իրավունք: Սակայն «ցանկացած պետություն, որն օգտվում է այդ «նահանջելու իրավունքից», պարտավոր է ամփոփիչ տեղեկացնել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին կիրառված միջոցների և դրանց գործադրման պատճառների, ինչպես և նման միջոցների կիրառման դադարեցման և Կոնվենցիայի դրույթների ամբողջ ծավալով գործողության վերսկսման մասին<sup>5</sup>»:

«Հունաստանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի» (1969թ.) գործով հստակեցվել է «արտակարգ իրավիճակ» հասկացությունը: Այն իր մեջ ներառում է հետևյալ անհրաժեշտ բաղադրատարրերը՝ ամբողջ պետության համար իրական և անխուսափելի վտագի առկայությունը. սպառնալիքը պետք է ուղղված լինի հասարակության կանոնակարգված կյանքին, բոլոր սովորական միջոցները, ուղղված հասարակական կարգի և անվտանգության ապահովմանը, մարդկանց կյանքի պաշտպանությանը, պետք է անբավարար լինեն :

Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ազգային կազմակերպարարական լծակների զարգացման համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները Հայաստանի Հանրապետությունն ունի, և այդ նախադրյալների իրագործումն էլ հենց հանդիսանում է հայկական դատական-իրավական համակարգի բարեփոխման գործընթացի հիմնական նպատակը: Ընդ որում՝ մարդու իրավունքների վերաբերյալ եվրոպական չափանիշների և փորձի կիրառումը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգում պետք է հաշվարկված ու հիմնված լինի իրավունքի գերակայության գաղափարի վրա: Բացի այդ՝ այս գործընթացը չպետք է սահմանափակվի միայն եվրոպական օրենսդրական չափորոշիչների մեխանիկական արտատպմամբ, այլև պետք է հաշվի առնվեն Հայաստանի ազգային-պատմական, սոցիալ-տնտեսական, ազգագրական և այլ յուրահատկություններն ու հետաքրքրությունները:

Մարդու իրավունքների և ազատությունների մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին հետևելու և Եվրոպական չափանիշներն ազգային օրենսդրության համապատասխանեցման գործընթացում հնարավոր օրենսդրական և իրավակիրառ ոլորտներում հնարավոր բախումներից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի իրավագետների և գործող իրավաբանների վերապատրաստման համակարգը ևս զարգացվի, մասնավորապես դա վերաբերում է օրենսդիրներին, դատավորներին ու եվրոպական

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

իրավունքի նորմերի կիրառման հարցերով զբաղվող վարչական ոլորտի աշխատակիցներին: Կարևոր է նաև համապատասխան քարոզարշավների կազմակերպումը, հասարակության իրազեկումը և Հայաստանի Հանրապետության համար հետաքրքրություն ներկայացնող գործերի հայերեն թարգմանությամբ հրատարակումը:

Ամփոփելով ՄԻԵԴ-ի դատական ակտերի կատարման գործընթացն ազգային իրավական համակարգի շրջանակներում հնարավորինս կատարելագործելու առնչությամբ մեր նկատառումնե-

րը՝ հարկ ենք համարում առաջադրել հետևյալ հիմնադրույթը. Իրավակիրառ պրակտիկայում ծագող անհարկի տարածայնություններից խուսափելու, ինչպես նաև անհրաժեշտ միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու տեսանկյունից նպատակահարմար է միջազգային իրավական հարթությունում մշակել և կիրառման մեջ դնել իրավական խորհրդատվության ինստիտուտի առավել գործնական մեթոդներն ու եղանակները:

<sup>1</sup> Տե՛ս Վ. Գ. Բեսարաբով “Европейский суд по правам человека”, М. 2003, էջ 103-104:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռը «Հորնսթին ընդդեմ Հունաստանի» գործով,

«Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, վճիռների ընտրանի 1979-2000թթ.», Երևան 2002թ., էջ 262-274:

<sup>3</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռը «Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի» գործով, 2002թ.

www.legalguide.am:

<sup>4</sup> Տե՛ս Comingersoll v. Portugal [GC], no. 35382/97, ECHR 2000-IV:

<sup>5</sup> Տե՛ս Barbera, Messague, Jabardo v. Spain, Comitee of Ministers’ Resolution DH(94)23, November 16, 1994:

<sup>6</sup> Տե՛ս Гомиен Д., Харрис Д., Зваак Л., “Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика”, М., 1998. С. 482:

**Գրականության ցանկ**

1. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Կանոնակարգ
2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիա
3. «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների ընտրանի 1979-2000թթ.», Երևան, 2002թ.,
4. Бессарабов В. Г. “Европейский суд по правам человека”, М., 2003
5. Гомиен Д., Харрис Д., Зваак Л., “Европейская конвенция о правах человека и Европейская хартия: право и практика”, М., 1998
6. Human Rights in Russia and Legal protection activity of the State. Saint Petersburg, 2003
7. Feldman D., “The Human Rights Act 1998 and Constitutional Principles.//Legal Studies, 1999, vol. 19, No. 2.
8. www.legalguide.am.
9. www.europa.eu
10. www.coe.am

**РЕЗЮМЕ**

***Роль правительства РА, правоохранительных органов и суда в процессе исполнения решений Европейского суда по правам человека***

В процессе исполнения решений Европейского суда по правам человека определенную роль играют Правительство РА, правоохранительные органы и суды. В частности, во время процесса представитель государства имеет право представлять письменные замечания, принимать участие в судебных слушаниях, а так же предпринимать все меры по сбору и представлению необходимых доказательств. Для своевременного и точного исполнения требований Конвенции и решений Европейского суда необходимо также принять меры для расширения возможностей для заинтересованной аудитории для ознакомления и изучения текстов. С точки зрения принципа максимально эффективной защиты прав и свобод человека и необходимой систематической законодательной реформы национальные суды не просто вправе, но и обязаны постоянно участвовать в деле совершенствования действующего законодательства и осуществлять в правосудие в целях своевременной защиты прав и свобод человека, гарантированных Европейской конвенцией.

**SUMMARY**

***The role of the Government of RA, the law enforcement bodies and the courts in the process of implementation of the decisions of the European Court of Human Rights***

In the process of implementation of the decisions of the European Court of Human Rights, a great role play the RA Government, law enforcement agencies and the courts. In particular, during the process the representative of the State has the right to submit written comments and take part in court proceedings, as well as to take all measures to collect and provide the necessary evidence. To ensure the timely and accurate fulfillment of the requirements of the Convention and the decisions of the European Court, it is also necessary to take steps to increase the opportunities for the interested audience to read and study the texts. From the point of view of the principle of the most effective protection of the rights and freedoms of man and the need for systematic law reform national courts should always participate in the process of improvement of the existing legislation and must carry out justice for the timely protection of the rights and freedoms guaranteed by the European Convention.

**МЕРУЖАН СТАМБОЛЦЯН**

Аспирант кафедры мировой политики и международных отношений Российско-Армянского (Славянского) университета



## **ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И НАТО В КОНТЕКСТЕ ЕВРОАТЛАНТИЧЕСКОЙ СИСТЕМЫ БЕЗОПАСНОСТИ**

Южный Кавказ (Закавказье) традиционно являлся узловым пунктом пересечения интересов и противоречий различных сил, военно-политических силовых центров и сверхдержав. Это обстоятельство, несомненно, оставило свой след на процессе исторического развития государств региона. Именно геостратегическое положение Южного Кавказа в первую очередь обуславливает его значение.

Со времени распада СССР одними из важнейших задач суверенного грузинского государства являлись обеспечение своей национальной безопасности, укрепление независимости и государственности, создание необходимых условий для демократического развития. С этой точки зрения, сотрудничество Грузии с влиятельными международными организациями и включение страны в европейские или региональные структуры безопасности непосредственно связано с фундаментальными проблемами национальной безопасности.

Свою будущую безопасность Грузия видит, вероятнее всего, в контексте единой евроатлантической системы безопасности. Грузия проявляет особую активность в процессе интеграции в евроатлантическую систему безопасности. Фактически это направление внешней политики Грузии является сегодня ключевым.

